

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՀԱՅ ՎԱՇԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

9(47.928)

Դ-12

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԻԴՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՀԱՅ ՎԱԲԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ

4133

Դրատարակիչ՝ «Դայրենիք» Ակումբ

ԵՐԵՎԱՆ - 2009

Խաչատուր Դադայան, Ակնարկներ հայ վաճառականության պատմության: Դրատ. «Դայրենիք» Ակումբ: Երևան, 2009, 128 էջ:

Խորհրդային գաղափարախոսության կաղապարները վաճառականության երևույթի ընկալման ու գնահատման հարցում իրենց բացասական հետևանքներն են բողել, ինչից դեռևս շատերս չենք կարողացել ծերբազատվել: Մինչդեռ, հայ վաճառականներն իրենց անուրանալի ներդրումն են ունեցել թե հայ հասարակության տնտեսական հաճակողմանի զարգացման, և թե բարեգործական գործունեությամբ հայապահպանության ասպարեզներում:

Ծեշտենք, որ թեման գրեթե մեզանում ուսումնասիրված չէ, և այդ առումով միանգամայն ողջունելի է նման աշխատանքների նախաձեռնումն ու իրականացումը:

Ներկա աշխատանքը հեղինակի այս թեմայով հերթական գիրքն է, և թեև ակնարկների ու հանրամատչելի ծևան է ընտրված, սակայն ընդհանուր առնամբ սպառչչ պատկերացում է տրվում աշխարհի 10 երկրներում հայ վաճառականների ունեցած կշռի, ազդեցության և հայրենանվեր գործունեության վերաբերյալ:

Գրքում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ հայ վաճառականության սրբազն պարտականությունն է ըստ ամենայնի յուրաքանչյուր հայրենաշեն ծեռնարկի սատար կանգնումն ու հովանավորումը: Եվ հենց այս պարագայում է նաև գրքի արդիական հնչեղությունը:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմականորեն առնված՝ մերն է այն ամենը, որ հայր տվել է աշխարհին: Մեր ստեղծածը պատմության որ դարում էլ և Երկրագնդի որ կետի վրա էլ լինի՝ կմնա սեփականությունը հայ ոգու... Դայ մտքի և բազկի գործերը Դայաստանից դուրս՝ կմնան իբրև հոգևոր գաղութներ: Այո, մարդկային սփյուռքից զատ՝ մենք ունենք նաև մեր ստեղծած արժեքների սփյուռքը:

## ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

Այս գիրքն ունի մի քանի նշանակություն:

Նախ, ներկայացնում է մեր ժողովրդի ամբողջական պատմության կարևորագույն բաղադրյալներից մեկի՝ հայ վաճառականության դեռևս հիմնարար կերպով չուսումնասիրված, փոշեկորույս վիթխարածավալ պատմության համարոտ դրվագներ:

Երկրորդ, հերքում է լայնորեն տարածված այն մոլորությունը, թե ժամանակակից Սփյուռքը համիդյան ջարդերի ու Դայոց Մեծ եղեռնի արդյունք է: Արդի գաղթավայրերն ի սկզբանե եղել են կազմակերպական-կառուցվածքային որոշակի տարրերով օժտված առևտրատնտեսական համայնքներ: Զանազան բռնաճշումներից արտագաղթածները, կոտորածներից ու Ցեղասպանությունից փրկված հայրենազգուրեն փոխեցին դրանց սոցիալական կազմը և վերածեցին գաղթօջախների, որտեղ առաջացան ազգապահպան նոր կառուցներ (կրոնական, քաղաքական, բարեգործական, հայրենակցական, կրթական, մշակութային, առողջապահական, ևն.) և որոնց առայսօր տևող շարունակական կենսագործունեության խնդրում գերակա դերակատարությունը վերապահվեց հայոց ազգային կապիտալին:

Թեպետ ուսումնասիրել ենք գրեթե բոլոր համայնքների ստեղծման ու ծևավորման նախապատմությունը, այդուհանդերձ 10 երկրներ ընտրելիս առաջնորդվում էինք հետևյալ տրամաբանությամբ՝ ներկայացնել Արևելք-Արևմուտք, Դյուսիս-Դարավ խաչվածք՝ կենտրոնում ունենա-

լով մի քանի եվրոպական երկիր: Կանխամտածված չենք անդրադարձել առավել խոշոր համայնքներին (ասենք՝ Հնդկաստանին, Պարսկաստանին, Իտալիային, Ռուսաստանին), որովհետև դրանք բավականին ուսումնասիրված են, բացի այդ՝ յուրաքանչյուրը կարող էր այս ծավալի մի գիրք լինել:

Բնույթով և շարադրանքի ոճով սա զուտ գիտական հետազոտություն չէ, ակնարկների ժանրը հնարավորություն է տվել խուսափել հարյուրավոր հղումներով ծանրաբեռնելուց. տողատակում նշել ենք միայն էական սկզբնաղբյուրները և դյուրըմբոնման նպատակով՝ առավել կարևոր հասկացությունների բացատրությունները:

Ըստ մեզ, այս աշխատանքն ունի աշխարհաճանաչողական և ինքնաճանաչողական, հպարտալից և արժանապատվային ինքնաճանաչողության նշանակություն:

ՀԵՂԻՈՎԱԿ

ԶԻՆԱՍՏԱՆ  
(Ք. Ծ. ա. 170թ.-XXդ. 60-ական թթ.)

... Դայերի մոտ տիրապետում է առանձնահատուկ գործարար ինչ-որ ոգի: Նրանք գրադպում են ապրանքափոխանակությամբ՝ հետիւնս ճամփորդելով Զինաստանի սահմաններից մինչև Գվիմեայի ափերին գտնվող Կորսո հրվանդանը: Այս հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ և աշխատասեր այդ ժողովրդի, որ շարժվելով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կտրում-անցնում է աշխարհի ողջ տարածքով և կարողանում սիրալիր ընդունելություն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց այցելում է:

Եմանուիլ Կանտ

Չինաստանը մեր պատմիչների երկերում կոչվել է ճենաց երկիր (այստեղից էլ ճենապակի բառը):

Չինացիները «քաղաքակրթական» արժեքներից բացի (թուղթ, վառող և այլն), աշխարհին տվեցին նաև մետաքս, ինչն էլ նրանց դարձեց հայերի դարավոր առևտրատնտեսական գործընկերը: Մետաքսը Չինաստանում գործածում էին դեռևս Ք.օ.ա. 3400ր., և մահվան սպառնալիքի տակ արգելված էր բոժոժը երկրից դուրս բերել: Այդուամենայնիվ, 552թ. մի քրիստոնյա քարոզիչ բոժոժասերմը լցրեց սնամեջ բամբուկե գավազանի մեջ ու հետո տարափ, ինչի հետևանքով շերամաբուծությունը տարածվեց աշխարհում և միջազգային առևտրի ապրանքատեսակ դարձավ հում մետաքսը՝ խոզակից հանված կամ խոզակի վրա գտնվող, չոլորված, չիյուսված հումքով:

Դայ-շինական առևտրատնտեսական առաջին շփումներն սկիզբ են առել Արտաշատի հիմնադրմամբ (Ք.ծ.ա. 170թ.): Աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ հայոց մայրաքաղաքն արագորեն դարձավ տարանցիկ միջազգային առևտրի կենտրոն, ինչի արդյունքում հայ վաճառականներն սկսեցին Շինաստանից ներկրել հում մետաքս ու մետաքսյա կտորելեն, իսկ փոխարեն արտահանել պղինձ, կապար, արծիջ, ոսկեթել գործվածքներ, Ալեքսանդրիայի ու Միջագետքի ապակե իրեր և անօրներ:

Դան հարստության Վու-Թի միապետի օրոք (Ք.ծ.ա. 140-86թթ.) չինացի վաճառականները հում մետաքսով, լայբայով ու ջեյթով<sup>1</sup> բեռնավորված քարավանները բերում էին միջինասիական Թարիմ գետի հունի մոտ և փոխանակում հայ վաճառականների ուսկու և արժարի հետ<sup>2</sup>:

Դայ-չինական հարաբերություններին անդրադարձել է նաև պատմահայր Մովսես Խորենացին, գրելով. «Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պսուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ քրքում և մետաքս, անչափ շատ կան այնտեղ համուլմեր, հրեշներ և էշայժամ կոչվածներ: Այնտեղ, ասում են, ընդհանուրի կերակուր են կազմում փասյանը, պորը և նմանները, որոնք մեզ մոտ պատվական և քչերին մատչելի կերակուրմեր են: Իսկ ակնեղենների և մարգարիտների հաշիվը, ասում են, չգիտեն: Եվ այն զգեստները, որ մեզ մոտ պատվական է և քչերին մատչելի, նրանց մոտ սովորական զգեստ է: Այսքան ճենաց աշխարհի մասին»:

Ըստ Խորենացու, մ.թ. IVդ. Մամգուն անունով մի նախարար Չինաստանից փախչում և աղխով գալիս-հաստատվում է Դայաստանում հիմք դնելով Մամիկոնյան նշանավոր գերդաստանին:

Վաղ ֆեոդալիզմի շրջանում հայերը Չինաստանում արդեն ունեին կայուն ներկայություն և զբաղվում էին խաղողի մշակությամբ ու գինեգործությամբ: Դրա վկայությունն են VII-Խդդ. պահպանված արձվաքիթ, սև բեղ-մորուքով, գինով լի մեկական տիկ գրկած ու ծալապատիկ նստած հայ գինեվաճառների երեք հախճապակե արձանիկները<sup>3</sup>:

Երկու ժողովուրդների միջև առևտրական հարաբերությունները խորանում են XII-XIVդդ.: Կիլիկյան Դայաստանն իր նշանավոր Այսա նավահանգստով վիթխարի մի շուկա էր, պահեստարան, որտեղով արևելյան ապրանքներն անցնում էին Եվրոպա, իսկ Եվրոպականը՝ Արևելք: Կանոնից վերև նշանավոր էր դարձել Ցուն-Չեռ-Ֆու ծովեղոյա քաղաքը, որն արաբներն անվանում էին Զայթուն, իսկ Եվրոպացիները՝ Saiton: Այդ քաղաքից արտահանվում էր մի նուրբ գործվածք, որ արաբերեն կոչվում էր զայրունիե,

<sup>1</sup> Չինական կաթնագույն կամ կանաչ թանկագին քարեր:

<sup>2</sup> Wels H. G. The Outline of History, p. 475.

<sup>3</sup> Mahler Jean Gaston. The Werternes among the figurines of the Tang dynasty of China, Roma, 1959.

իտալերեն շետու, ֆրանսերեն՝ satin, որը մեր լեզվի սատինն է: Այս ապրանքատեսակն էր նաև, որ հայ վաճառականները բերում էին Այս և արտահանում Եվրոպական երկրներ:

Ֆրանցիսկյան միաբան Անդրեաս Պերուջացի քարոզիչը 1326թ. Չինաստանից գրած իր մի նամակում հայտնում է, որ 1313թ. Թայվանի նեղուցի Ցյուանցոու ծովածոցի համանուն քաղաքում «մեծահարուստ մի հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ եկեղեցի, որ արքեպիսկոպոսի (Չովանի Մոնտեկորվինոյի - Խ.Դ.) հրահանգով դարձվել է կարողիկ տաճար»<sup>1</sup>: Սա վերին աստիճանի հետաքրքիր տեղեկություն է: Ակնհայտ է, որ «մեծահարուստ հայ տիկինը», որի անունը, դժբախտաբար, չի հայտնվում, իր վաճառական ամուսնու (թերևս՝ հանգուցյալ) ծախքով պիտի կառուցած լիներ եկեղեցին: Բանն այն է, որ հայ վաճառականները, որպես կանոն, երթևերում, այլ երկրներում բնակություն էին հաստատում լոկ այն ժամանակ, եթե ապահովված էին լինում տնտեսական ու կրոնական ազատություններով: Դայ տիկնոց ներկայությունը ու եկեղեցի կառուցելու փաստն ապացուցում է, որ հայերը Ցյուանցոույուն ունեցել են այդ ազատությունները. Ըսված մի բարեհաճություն և հանդուրժողականություն հայերի հանդեպ, ինչը չինացիները կտրականապես մերժում էին մյուս բոլոր օտարազգիներին, հատկապես՝ քրիստոնյաներին: (Պատահական չէ, որ հետագա ժամանակներում, ավելի սոտուգ՝ 1603թ., ճիզվիտ քարոզիչները հայ վաճառականի տարագ էին հագնում Չինաստան մուտք գործելու համար):

Խիստ ուշագրավ է նաև Նիկողայոս Սպաթարիոս-Միլեսցու վկայությունը, որը 1675-1676թթ. գլխավորել է Չինաստան մեկնող ռուսական դեսպանությունը: Ըստ նրա, մետաքսի արտադրությունը, թնդանոթ ծովելու գաղտնիքը, նավագնացության մեջ կողմնացուց օգտագործելը և այլ նորույթներ չինացիներից սովորելով՝ Եվրոպայում տարածել են Օդրիկոս Պորդենոնցին, Մարկո Պոլոն և Վենետիկյան հասարակապետության նավապետ Անտոն Դայը: Վերջինիս Վենետիկի հասարակապետության ծերունազարդ նավապետի կտակը գրվել է XIVդ. վերջին և պահպանվում է առայսօր:

Պարսկաստանում Նոր Ջուղայի հիմնադրմամբ (1605թ.) համաշխարհային առևտրի պատմության մեջ երևան եկավ բացարիկ

<sup>1</sup> Monle A. C. Christians in China before the year 1550, p. 191-192.

ու եզակի մի երևոյթ: Հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը, չնչին բացառություններով, տեղի է ունենում նորջուղայեցի վաճառականների շնորհիվ:

Լիսաբոնի մատենադարանում պահպանվում է խիստ արժեքավոր մի վավերագիր՝ Տեր Դավթի որդի Շովկիաննեսի «Ռուզլանայ» կոչված հաշվետումարը՝ առևտրական գործարքների ճամփորդական օրագիրը: Նորջուղայեցի այս վաճառականի օրահաշիվ մատյանն ընդգրկում է 1682-1693թ.: Իր ծննդավայրից նա ճանապարհվում է նախ Շնիկաստան, ապա հինգ տարի՝ 1686-1691թ., բնակվում և վաճառականությամբ է գրաղվում Տիբեթում՝ լինելով առաջին աշխարհական օտարերկրացին: Ըստ նրա հաղորդած տվյալների՝ իր հայրենակիցներ Շատուրը, Մելիջանը, Նիկողոսն ու Դավուքը Լիսասայից անցնում էին Չինաստանի Սինինգ քաղաք և այնտեղից մեծ քանակությամբ ծուլածո ոսկի, մուշկ<sup>1</sup>, թեյ, գործվածքներ և այլ ապրանքներ էին բերում: Իսկ Պողոսի որդի Մելիջանը տևական բնակություն էր հաստատել չինական այդ քաղաքում:

XVIIդ. կեսին հիշատակվում է բրուսացի խոչա Շուքուրը, որը վենետիկարնակ մեծահարուստ վաճառական Շովկիաննես Սեղրոսյանի առևտրային գործակալն էր Պեկինում: Ըստ դարի վերջերին Չինաստանում բնակվող գանձակեցի Մնացական Գասպարյանը խոշոր գումար կտակեց Ս. Էջմիածնին, իսկ Մակաոյում ապրող Շովկիաննես Մաթեոսյանը 80 հազար ռուփի կտակեց Նոր-Նախիջևանի համայնքին:

Ըստ էության, այդ դարի վերջից հայ-չինական առևտրատնտեսական հարաբերություններում կատարվում է որակական բեկում, ինչն էլ հնարավորություն է տալիս եզրակացնելու Չինաստանում հայ վաճառականության մշտական, կանոնավոր ներկայության մասին:

Այս ժամանակ է, որ մեր երկու ժողովուրդների կյանքում տեղի է ունենում պատմամշակութային վիրխարի նշանակության մի իրադարձություն, որի համար կրկին պարտական ենք հայ վաճառականի: 1779թ. Մակաոյում վաճառականի ընտանիքում ծնված Շովկիաննես Ղազարյանը (նույնինքը՝ Զոն Լասար) չինարենը

կատարելագործելու նպատակով մեկնում է Կանտոն և յոթ տարի ուսում ստանում: Ապա, որպես քարտուղար, աշխատանքի է անցնում մի պորտուգալացի վաճառականի մոտ, իսկ 1802թ. Կալկարայում նշանակվում անգլիական Արևելա-հնդկական ընկերության թարգմանիչ: Չինարենի նրա փայլուն ինացությունը նկատելով՝ քրիստոնյա միսիոներները Շովկի. Ղազարյանին առաջարկում են թարգմանել... Աստվածաշունչը: 1805թ. 26-ամյա երիտասարդն ավարտում է Գիրք Ծննդոցի և Մատքեռոսի Ավետարանի թարգմանությունները և մի քանի գլուխ տպագրում: Անժամանակ մահը խանգարում է գործն ավարտի հասցնել, սակայն Շովկի. Ղազարյանի օգնական անգլիացի Ոորելոտ Մորիսոնը 1819թ. լույս է ընծայում Աստվածաշնչի առաջին չինարեն հրատարակությունը, և փաստ է, որ թարգմանիչը եղել է հայ<sup>1</sup>:

XIXդ. չինարենակ հայերի համար դարձավ տնտեսական բուռն վերելքի ժամանակաշրջան: Դարի երկրորդ կեսին մեծաթիվ հայ վաճառականներ ապրում էին Մուկդենում, Շանհայում, Խարբինում, Չանչունում, Տյանցինում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Շոնգ Կոնգը, որի անգլիական գաղութ լինելու հանգանանքը, տնտեսական ազատությունները խիստ գրավիչ էին հայոց համար: 1845թ. Սինգապուրից Կանտոն եկավ, ապա Շոնգ Կոնգում բնակվեց ու 30 տարի վաճառականությամբ գրաղվեց Սեբ Սեբյանը: 1850թ. Կալկարայից Կանտոն, ապա Շոնգ Կոնգ տեղափոխվեց Ավետիս Աղաթեկյանը, ով 27 տարվա առևտրից հետո խոշոր գումար կտակեց ազգին ու Եկեղեցուն: 1850-ական թթ. նաև Չինաստանում լայն գործունեություն սկսեց ծավալել ամրող Շնիկաչինում հանրահայտ Արգարյան գերդաստանը: Սեբ Արգարյանի եղբայրներ Շովկիաննեսն ու Բաղդասարը նավաշինարաններ ու շոգենավային ընկերություններ հիմնեցին ոչ միայն Սինգապուրում, Ցիյունում և այլ վայրերում, այլև Շոնգ Կոնգում: Մինչև 1900-ական թթ. Չինաստանում դեռ կային Սահակ և Արգար աղաները, որոնք շուրջ 100 մլն. ռուփի կարողություն ունեին: Այդ փառապանծ գերդաստանի վերջին շառավիլներից Դիանա Արգարյանը, դարձավ Հայաստանի առաջին Հանրապետության դեսպանը նապոնիայում:

<sup>1</sup> Չինական մշկայծյամից ստացվող, Եվրոպայում օժանելիքի արտադրության մեջ գործածվող անչափ թանկարժեք բուրունավետ նյութ:

1870-ական թթ. Հոնգ Կոնգում կային նաև մեծահարուստ հայ կալվածատերեր, ինչպիսիք էին Շորդանան Խաչիկյանը, Աբգար Միքայելի Աբգարյանը, որը Լոնդոնի միջազգային ցուցահանդեսում Չինաստանի ու Շնդկաստանի ներկայացուցիչն էր, և Սեր Ջառությունյանը՝ Հոնգ Կոնգի բարձրագույն ատյանի քարտուղարը:

Ուշագրավ է, որ կղզում երեք 8-10 ընտանիքից ավելի հայ չի եղել, սակայն նրանց դիրքը տնտեսության բնագավառում բացառիկ էր: Այսպես, ՀՀԴ. կեսերին ամբողջ Հոնգ Կոնգում կար ընդամենը 10 ակնավաճառ, որից 4-ը հայեր էին (ամենանշանավորը Հայկ Իվեցճյանն էր): 1958թ. կղզու համայնքին այցելած Ռերենիկ Եպիսկոպոսը գրում է. «Ուրախալի է, որ այս հայ ընկերությանները իրարու հակառակ չեն, թէաւտ մէկը միւսին դէմ կը մրցի, սակայն միշտ սիրով են իրարու հետ...»:

XIXդ. երկրորդ կեսին մեծ թվով հայեր Ռուսաստանից անցնելով՝ հաստատվեցին Խարբինում, ինչպես նաև Մանչուրիայի այլ քաղաքներում (Չանչուն, Դայրեն, Մոււկդեն և այլն): Չնայած կային բժիշկներ, դեղագործներ, փաստաբաններ, մեքենագետներ ու երկրաչափներ, այդուհանդերձ հայերի ճնշող մեծամասնությունն զբաղվում էր վաճառականությամբ և բարեկեցիկ ապրելակերպ ուներ: Դա դրդապատճառ դարձավ, որպեսզի այլ հայեր Թուրքիայից ու Պարսկաստանից ներգաղթեն Խարբին և կազմակերպեն համայնքի կրօնական ու մշակութային կյանքը: Այսպես, 1918թ. կառուցվեց փայտաշեն մատուռ, իսկ 1923թ. վաճառական Կարապետ Ասպետյանի նախաձեռնությամբ ու զգալի ներդրմանը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ստեղծվեց նաև տիկնանց մասնաճյուղով մշակութային ընկերություն, «Արծիվ» անվամբ մարզակումք և Թատերասիրաց միություն, որը հայոց ու ռուսաց լեզուներով բեմադրություններ էր ներկայացնում:

XXդ. առաջին քառորդ նշանավորվեց նոր զարգացումներով: Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխությունը, քաղաքացիական պատերազմը պատճառ դարձան, որ Շեռավոր Արևելքում գտնվող շատ հայեր (զինվորականներ, բժիշկներ, փաստաբաններ, ծեռնարկատերեր և այլք) բնակություն հաստատեն Մանչուրիայի քաղաքներում: Հայ վաճառականներն իրենց բնատուր ուշիմության ու ծեռներեցության շնորհիվ հատկապես մեծ հաջողությունների հասան Շանհայում: Այսպես, 1920-ական թթ. քաղաքային մարզադաշտի սեփականատերն էր Հայկ Ասատրյանը: 1931թ. այստեղ

կազմակերպվեց Հայ երիտասարդաց միությունը, որը հետագայում ստացավ Շանհայի հայոց բարեգործական միություն անվանումը և որին անդամակցեցին քաղաքի գործեր բոլոր՝ շուրջ 200 հայերը: Իսկ Մանչուրիայի մեկ այլ քաղաքի՝ Տյանցգինի գորգի խոշոր գործարանը, ուր աշխատում էր 2000 մարդ, իիմնել և դեկավարում էին հայերը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ ճապոնական նվաճման շրջանում, Մանչուրիայի հայերը (շուրջ 1200 հոգի) հալածվեցին ինչպես ճապոնացիների, այնպէս էլ չինացիների կողմից: Հետագայում, կոնունիստական իշխանության հաստատման, մասնավոր սեփականության վերացման հետևանքով հայերն ստիպված զանգվածաբար արտագաղթեցին Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա և այլ երկրներ: 1950-1960թթ. Չինաստանում կային ընդամենը 2-3 տասնյակ հայեր, որոնք նույնպես բռնեցին գաղթի ճամփան:

Սակայն բոլոր ժամանակների ամենանշանավոր չինարնակ հայը եղել է նորջուղայեցի Պողոս Խաչատուրի Աստվածատրյանը (նույնինքը՝ սըր Պող Չարեր, 1846-1926թթ.): Այս մարդը սերում էր Նոր Զուղայի Քալանթարյան նշանավոր վաճառականական գերդաստանից: Մանուկ հասակում տեղափոխվել է Կալկաթա, ուսանել «Լա Մարդինիեր» վարժարանում: 1864թ. բնակվել է Հոնգ Կոնգում, ծառայել անգլիական «Բենք օֆ Հինդուստան» դրամատանը: Ապա, բնատուր ծեռներեցության, գործարար բացարիկ ընդունակությունների շնորհիվ դարձել է բիզնեսի ամենաազդեցիկ դեմքերից մեկը: Կառուցել է տեղի նավահանգիստը, համալսարանը, բազմաթիվ բնակելի շենքեր: Հղացել և անգլիական իշխանությունների ջանքերով իրականացրել է Փրայայի ծովեգերքի անմշակ հողերը շահագործելու Praya Rocla mation ծրագիրը, որի համաձայն Վիկտորիա քաղաքի ծովեզրի մոտ ծովի մեջ 2 մղոն երկարությամբ և 250 ոտնաչափի լայնությամբ հող է լցվել, ցամաքի վերածվել ու կառուցվել 1300 տուն 39.000 բնակչի համար: Պ. Աստվածատրյանը կղզու անգլիական գաղութային վարչության և օրենսդիր ժողովի անդամ էր, 1887թ. ցմահ հաշտարար դատավոր: 1897թ. անգլիական կառավարության կողմից պարզեցվել է Ս. Մայքլի և Ս. Զորջի շքանշաններով, իսկ 1902թ. արժանացել է սըր տիտղոսի: Հոնգ Կոնգի քարածիւ ընկերության ամենախոշոր բաժնետերն էր, նավատեր, բանկատեր և համարվում էր իր ժամանակի աշխարհի ամենահարուստ հայը: Պ. Աստվածատրյանը նաև

հայոց նեցուկն էր. 1924թ. Կալկաթայի Ս. Նազարեթ Եկեղեցուն փրկել է նյութական ծանրագույն վիճակից՝ նվիրաբերելով 3 մլն. ռուփի: Իր կտակով պատկառելի գումարներ է հասկացրել բազմաթիվ հաստատությունների, դպրոցների, Եկեղեցիների միությունների՝ առանց ազգի ու կրոնի խտրության: Ի պատիվ նրա Հոնք Կոնգի երկու փողոց կրել են Cheter և Catstick անունները:

Ուշ միջնադարում Դիարքերի նահանգում, Եփրատի ծախ ափին, քարքարոտ լեռնալանջին գտնվող հայկական գյուղից մի հայ վաճառական առևտրական գործերով այցելում է Զինաստան և վերադառնալով ծննդավայր՝ հետո քերում է... թուրակ: Այդ զարմանահրաշ թռչունը իսկական իրարանցում է առաջացնում, գյուղացիները հերթով մտնում են վաճառականի տուն՝ Աստծո ստեղծած տարաշխարհիկ արարածին տեսնելու, և բոլորի շուրբերին երկու բար էր՝ չինի դուշ, չին դուշ: Զին դուշի համբավն այնքան է տարածվում, որ իհն անվանումն աստիճանաբար մոռացվում է, և բնակավայրն սկսում է կոչվել Չնքուշ...

1915թ. Եղենմի ժամանակ ճնքուշցիների մի մասը բարձրացավ լեռները, զինված դիմադրություն ցույց տվեց ու փրկվեց: Մնացածներին՝ 5700 մարդու, ցեղասպանները տեղահանեցին, կոտորեցին ու նետեցին Տիտան կոչվող կիրճի անդունդը:

Այսօր Երևանի նուրարաշեն համայնքի փողոցներից մեկը կոչվում է Չնքուշ:

## ԵԹՈՎՊԻԱ (VIIդ.-XXIդ. սկիզբ)

Դայերը դարեր շարունակ Զարեշստանում հանդիսանում են գործնական կյանքի և հոգևոր գործունեության ամենատարբեր որսևորումների ներկայացուցիչներ:

Բ.Տուրակ  
ուսանական, 1912թ.

Աֆրիկյան այս երկրի հայոց համայնքի պատմությունը հայ գաղթավայրի ծննդի, զարգացման և մարման տիպական նմուշ է:

Դայ վաճառականները Եթովպիային ծանոթ են Եղել դեռևս Ք. ծ. ա. I դարից՝ Աքսումի պետության շրջանից: Կարմիր ծովի ափին գտնվող հարեշական Տեգրե մարզի Աղուլիս նավահանգիստը Դնդկաստանի ծովային ուղու վրա տարանցիկ առևտրի կենտրոն էր, որից օգտվում էին նաև հայերը: Բուն Եթովպիայում հայերը մշտական բնակություն են հաստատել VIIդ. գաղթելով Եգիպտոսից: Ըստ հարեց պատմաբան Բլադա Գեղա Խուրիի, հայերը գաղթավայր են ունեցել, և դրա վկայությունը Ղեսիե (Ղեսեն) բնակավայրում հայտնաբերված հայոց Եկեղեցու ավերակներն են: Խոսքը Ս. Ստեփանոս Եկեղեցու նասին է, և հարցը համառոտ պատմական լուսաբանման կարիք ունի:

451թ. Քաղկեդոնի տիեզերաժողովի ժամանակ միանալով հայերին՝ հարեշները, ասորիները և դպտիները մեծում են բյուզանդական Եկեղեցու առաջարկը, միավորվում «Միաբնակ» խորհրդով, իսկ դավանաբանական պայքարի կենտրոն է դառնում Երուսաղեմի հայկական միաբանությունը:

VIIդ.՝ Արաբական խալիֆայության գերիշխանության օրոք, Եգիպտոսում, ինչպես նաև Սիրիայում ապրող մեծաթիվ հայեր, խուս տալով արաբական բռնապետությունից, գաղթում են քրիստոնյա Զարեշստան՝ Աքոհամ թագավորություն: Կուտակվում են Ղեսիե քաղաքի մոտ, իիմնում բնակատեղի, կառուցում Ս. Ստեփանոս Եկեղեցին, անգամ կազմավորում սեփական գործ և առևտրային հարաբերություններ հաստատում դրաշխարհի հետ: Զարեշական մատենագիտության մեջ այս գաղթօջախը հիշատակվում է «Հայկական կղզի» անվամբ: Կղզին համալրում է ստանում 1169թ.՝ Եգիպ-

տոսի սուլթանի վայրագությունների հետևանքով, ինչպես նաև XIV-դ. Կիլիկիայի անկումից հետո:

1527թ. հարեց ցեղապետ Ահմետ Մուլհամեդ Դումը, հաղթելով երկրի թագավորին, ցանկանում է բռնի մահմեդականացնել նաև հայերին: Մերժում ստանալով, նա հիմնահատակ է անում «Հայկական կղզին» և ավերում Ս. Ստեփանոս Եկեղեցին: Հայերը ստիպված գաղթում են Հաբեշստանի այլ բնակավայրեր:

XVI-XVII դդ. Եթովպիան կրոնական ու տնտեսական եքսպանսիայի է ենթակվում Եվրոպացինների կողմից: Սակայն հարենները 1633թ. ոչնչացնում են Եվրոպացի կղերականների և աշխարհականների մի մասին (հատկապես՝ պորտուգալացիններին), իսկ մյուս մասին արտաքսում արգելելով առհասարակ օտարերկրացինների մուտքը երկիր: Այլազգիններից բացառություն է արվում միայն հայ վաճառականների համար: Դրանից օգտվելով՝ ծիզվիտ քարոզիչները հայի տարագ էին հագնում, թափանցում Եթովպիա, սակայն բացահայտվում էին: Ալեքսանդր Ե. պապի (1655-1667թթ.) հրամանով վեց ֆրանցիսկյաններ հայ վաճառականների գգեստներով ծառյալ թափանցում են երկիր, սակայն հայտնաբերվում ու գլխատվում են:

XVII դ. Եսուս (Ագե-Յասու) թագավորի օրոք արքունիքում կարևոր դիրքի է հասնում հալեպի հայ վաճառական Մուլրատը, որին Վերապահված էր թագավորի ապրանքները Հնդկաստանում և Ծայրագույն Արևելքում վաճառելու իրավասությունը: Օգտագործելով Հնդկաստանում բնակություն հաստատած իր ազգակիցների հնարավորությունները, Մուլրատը հաջողությամբ առևտրական երթևեկություններ է կատարում, միաժամանակ ամեն տարի Եթովպիայի թագավորի անունից ընծաներ նատուցում Անգլիայի ու Չոլանդիայի Արևելա-հնդկական ընկերություններին և նրանցից նվերներ բերում թագավորին: 1660-ական թթ. նա գնում է Դելի՝ Մեծ Մողոլի մոտ, որպես հարեց թագավորի դեսպան: Եթովպիայում այս Մուլրատի եղբորորդին՝ նորից Մուլրատ անունով, դեսպան է նշանակվում Լյուդովիկոս XIV-ի արքունիքում:

XVII-XVIII դդ. հարեց թագավորի մոտ ծառայում էր մի հայ, որը տեղացիններին սովորեցնում էր վառող պատրաստել: Ոմն Եղիա Ենովք դեսպանական թարգմանիչ էր, իսկ արարկիրդի Մելեք ուստան՝ թագավորի գանձապետը, որին 1762թ. այդ պաշտոնում փոխարինեցին Շովիաննես Թովմաջանը և նրա որդի Պողոսը:

Այսպիսով, շարադրեցինք քիչ թե շատ հայտնի, դրվագներով պահպանված կցկոտուր տեղեկություններ, որոնք, սակայն, էական կարևորություն ունեն. հարյուրամյակների ընթացքում հայերի մոտ Եթովպիայի առնչությամբ ծևավորվեց տնտեսական բարենպաստության պատմական հուշ, որը XIX դարից դարձավ պապագ քաղաքական համայնքի ստեղծման նախահիմք: Հայ և հարեց ժողովուրդների միջև առաջացավ փոխանաշողության, փոխվստահության մթնոլորտ, որն ապագայում երկուստեք օգտակարության հենքի վրա վերածեց համագործակցության ամուր կրվանի:

Եթովպահայ համայնքի հիմնադիրը համարվում է Հայրիկ մականվամբ Պողոս Մարգարյանը: Նա ծնվել էր 1830թ. Սեբաստիայում: 1866թ. Եգիպտոսի ու Մասավայի ճամփով գալիս է Եթովպահական Ադրիա քաղաք և հինգ տարի գրաղվում վաճառականությամբ: 1871թ. հունիսի 5-ին Անբաջարա ուղևորվելով հասնում է Յոհաննես VI թագավորի բանակատեղին և նրան վաճառում իր ապրանքները՝ իրացան, փանփուշտ, սպիտակեղեն ու մետաքսյա կտորեղեն: 1872թ. դեկտեմբերին հասնում է Շոայի թագավոր Մենելիքի բանակատեղին ու գրաղվում փղոսկրի և այլ ապրանքների առևտրով: (Նշենք, որ այդ ժամանակ Եթովպիան միասնական երկիր չէր, բաղկացած էր տարբեր ցեղախմբերի իշխանություններից, որոնք առաջնության տիրանալու համար մեկնեկու հետ պատերազմում էին):

1875թ. Պ. Մարգարյանը, որպես դիվանագիտական պատգամավորության անդամ, Մենելիքի կողմից ուղարկվում է Եգիպտոսի խտիվ Խսմայիլ փաշայի մոտ, առաքելություն ունենալով գինյալ աջակցություն ստանալ: Ինանալով այդ մասին, Յոհաննես VI-ը բռնագրավում է նրա ունեցվածքը: Սակայն, երբ 1877թ. Մենելիքը նվաճում է ամբողջ Երկիրը՝ իրեն հռչակելով Մենելիք II թագավոր, ի գնահատումն Պ. Մարգարյանի հավատարմության և մատուցած ծառայությունների, նրան է պարգևում ընդարձակ հողատարածքներ Զուգուլա լեռան ստորոտին: Այստեղ Հայրիկը տնկում է հազարավոր պտղատու ծառեր, էվկալիպտներ և վախճանվելով 92 տարեկան հասակում՝ թաղվում իր իսկ կալվածքում:

Հաջորդ ականավոր հայը Թլլիք Սարգիս (Մեծ Սարգիս) մականվամբ Սարգիս Ավետիսի Թերզյանն է՝ առասպելական մի անձնավորություն: Նա ծնվել էր 1868թ. Արարկիրում, նախնական կրթությունն ստացել տեղի վարժարանում, հետո գրաղվել ատաղ-

ծագործությամբ, ապա Զմյուռնիայում դարձել կառապան: Տեղափոխվելով Եգիպտոս, 1882թ. այնտեղից գալիս է Եթովպական Հարարե քաղաք և զբաղվում զենքի ու զինամթերքի առևտորով: 1886թ. Մենելիք II թագավորը մտադրվում է գրավել Հարարեն, և դա կատարում է Մ. Թերզյանը: Նա 20 զինվորով թափանցում է քաղաք, խուճապի մատնում էնիր Արդուլայի կայազորին, որից հետո Հարարեն անձնատուր է լինում: Մատուցած ծառայությունների համար նա նշանակվում է Գելեսա շրջանի կառավարիչ: Դրանից հետո թլիք Սարգիսը իրեն նվիրում է Եթովպական բանակի կայացմանն ու պետականության ամրապնդմանը: Հպատակեցնում է սոմալեցիներին, որի արդյունքում Եթովպիային է անցնում Բիյո Գարորան, և նա դառնում է նաև այդ շրջանի նահանգապետը: Վերիշելով կառապանությունը, նա ստանձնում է Կրուպի գերմանական թնդանորները կրող կառքերի նորոգությունը: Դառնում է Մենելիք II-ի խորհրդականը, զենքի ու կառավարական պիտույքների մատակարարը: Առևտրական առաքելություններով բազմից ուղարկվում է Եվրոպա, որտեղից բերում է արագահարված հրացաններ: Նրա շնորհիվ առաջին անգամ Եթովպիա մուտք են գործում շոգեշարժ լոկոմոտիվներ, տարբեր մեքենաներ, արդյունաբերական ու երկրագործական գործիքներ: Զանազան մենաշնորհների տիրող մեծահարուստ Ս. Թերզյանը բազմից մեկնում է Փարիզ, Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Շոռն, Բելգիա և Վաշինգտոն՝ որպես Եթովպական դիվանագիտական պատվիրակությունների անդամ: 1895-1896թ. համիլյան ջարդերից հետո իր ծախքով բազմաթիվ հայ ընտանիքներ է բերում Հարարե և դրամական օժանդակություն ցույց տալիս: 1903թ. Հարարեում ամուսնանում է արարեկիրդի Վարդուիի Յազդյանի հետ և ունենում երկու զավակ: Զենքի առևտրին զուգահեռաբար բացում է պարենի վաճառատուն, որի վարչությունը հանձնում է Եղբայրներին: Ս. Թերզյանն սպանվում է 1915թ. Վարձու մարդասպանի կողմից, Գերմանիայի դեսպանատան բակում:

Համայնքի նահապետներից էր նաև Տիգրան Էպեյանը (1845, Կ. Պոլիս-1926, Աղիս Արեբա): Նախնական կրթություն ստանում է ծննդավայրի Սագըզ Աղած թաղամասի վարժարանում: 1871թ. մեկնում է Եգիպտոս և զբաղվում ուկերչությամբ: Երկու տարի անց վերադառնում է Պոլիս, իսկ 1881թ. տեղափոխվում Աղուա քաղաք և Յոհաննես VI-ին նվիրում ուկեզարդ արքայական

գգեստ: 1882-1886թթ. բնակվում է Մենելիք II արքայի Անքորեք մայրաքաղաքում, իսկ 1887թ. Եգիպտոսից բերում է ընտանիքը և վերջնականապես հաստատվում Աղիս Արեբայում: Դառնում է Մենելիքի ուկերչապետը և նրա համար պատրաստում երեք ուկերու արքայական թագ: Պարզևատրվում է «Եթովպիայի աստղ» Գ. և «Սոլոմոն» Գ. աստիճանների շքանշաններով: Երբ Իտալիան պարտություն է կրում Աղուայում, իր տանը պահում է բազմաթիվ իտալացի ռազմագերիների:

Այս երեք մարդիկ վաճառականության, հետևաբար և անձնական բարեկեցության ասպարեզում հաջողության հասնելով, ըստ եւրեյան, դարձան այն մազմիսը, որը ձգեց-բերեց տասնյակ ազգակիցների: Ընդ որում, հոսքը կատարվում էր հետևյալ կերպ: 1896թ. ջարդերից հետո ընտանիքներով գալիս էին Զիբութի, կտրում-անցնում Սոմալիի անապատը և հաստատվում Հարարեում: Մինչև 1903թ. Եթովպիա են գալիս շուրջ 35 պլուտօններ, արարեկիրցիներ, այնթապցիներ, կեսարացիներ, վանեցիներ, բեհեսնեցիներ, պարտիզակիցներ և այլ արևմտահայեր: Այս առաջին սերունդը հիմնականում գրավվում էր զենքի ու ռազմանթերքի, մետաքսյա և այլ կտրուելենի ներմուծմանը, դրա փոխարեն արտահանելով փղոսկր ու մեղրամոն:

Այս սերնոի մեջ կային ականավոր մարդիկ, որոնք վիթխարի դերակատարություն ունեցան թե՛ Եթովպիայի տնտեսության զարգացման, թե՛ հայ համայնքի ամրապնդման գործում:

Մարիկ Գեորգոֆը (Մարենոս Գևորգյան) հոչակված էր Եթովպիայի ամբողջ ծովեզերքում ու շրջակայքում: Մեծահարուստ այս վաճառականը ծնվել է 1867թ. Կ.Պոլսի Սկյուտար թաղամասում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, Յակոր Գուրգենի «Յայկական կրթարանում», ապա տեղափոխվել Եգիպտոս: 1896թ. անցել է Զիբութի (Սոմալի), ապա՝ Եթովպիա և հիմնել «Ս. Գեորգոֆ» առևտրական ֆիրման: Ներմուծել է զենք, բամբակ, մետաքսյա կտրուելեն, ոգելից խմիչք, ծիթայուղ, օճառ, օժանելիք, երկաթ իրեր, արտահանել է սուրճ, կաշի և այլն: 1910թ. Եթովպիայի թագավորից ծեռք է բերել Երկրի ծխախոտի վաճառքի մենաշնորհը: Ծխախոտարդյունաբերական գործարաններ է հիմնել Աղիս Արեբայում, Հարարեում, Դիրե Դավայում:

Ս. Գեորգոֆը մշտապես օժանդակել է Աղիս Արեբայի Ս. Գևորգ Եկեղեցուն և հայոց դպրոցին: Որպես համայնքի ամենաազդեցիկ

4133

մարդ, 1920թ. Դայաստանի առաջին Դանրապետությունը նրան նշանակել է Երովափայում դեսպան: 1927թ.-ից եղել է Գաղութային ժողովի առենապետ, մեծ հարգանք վայելել արքունիքում, պարգևատրվել Երովափական ու ֆրանսիական շքանշաններով:

Դովիհաննես Ասատուրյանը ծնվել է 1868թ. Կ.Պոլսի Օրբագյուղ քաղաքանատում: 1881-1886թթ. Ներսես պատրիարք Վարժապետյանի հանձնարարականով ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա մեկնել Թիֆլիս և 1888թ. ավարտել Ներսիսյան դպրոցը: 1889թ. նշանակվել է «Միացյալ ընկերության» Տարոն-Կասպուրական շրջանի վարժարանների տեսուչ: 1897թ. տեղափոխվել է Երովափայա ու գրադպել բիզնեսով, ուներ օճառի և բուսական յուղերի գործարան, աղաց և ձիթիան: Եղել է Գաղութային ժողովի փոխատենապետ, ՀԲԸՇ տեղի մասնաճյուղի հիմնադիր, 1918թ. Աղիս Արեբայի «Արարատյան» վարժարանի հիմնադիրներից:

Պարտիզակցի Գրիգորիս Պողոսյանը Եգիպտոսից տեղափոխվել է Երովափայա և 1895թ. հիմնել իր անունը կրող առևտրական տունը: Ներմուծել է մետաքսեղեն, երկաքեղեն, գորգ, ցինկ և այլ ապրանքներ, դարձել Մենելիք II-ի արքունի և կառավարության պաշտոնական մատակարարը, խոշոր ավտոֆիրմաների ներկայացուցիչ: Նա Աղիս Արեբայում ուներ բազմաթիվ շենքեր, իսկ Ակակիում (Աղիս Արեբայից 15 կմ հեռավորության վրա) նրան էր պատկանում բարեբեր, ջրարքի, անտառապատ մի ընդարձակ կալվածք, ուր որսի և հանգստի էին գալիս Երկրի բարձրաստիճան պաշտոնյաները: Պարգևատրվել է «Երովափայի աստղ» և «Սողոմոն» Գ. աստիճանների շքանշաններով:

Վանից գաղթած Դակոր Բաղդասարյանը եղել է Երովափայի դրամահատարանի ղեկավարը, դրամագետ, ոսկերիչ: Նա մեծահարուստ հողատեր էր, Աղիս Արեբայի Գուլիելի արվարձանում ուներ դյակ, անտառներ, ուր որսի էին գալիս թագավորը, պալատականները և նախարարները:

1898թ. Ավետիս Սվաճյանի առևտրական տունը ներմուծում էր ոսկի և ոսկերչական գործիքներ, պղնձեղեն, ներկանյութ, բանջարեղենի սերմ և այլն: Սեփական խաղախորդարանից (սպանդանոց) արտահանում էր կաշի ու մորթեղեն:

Երվանդ Դակորյանի առևտրական տունը (հիմնվել է 1901թ.) ներմուծում էր մետաքսեղեն, ոսկերել հյուսվածքներ, պատի պատառ, ապակեղեն և այլն: Նա կարի մեքենաների Mandlos

գերմանական ընկերության, Peters Lacroix բելգիական անանուն ընկերության և ֆրանսիական Et Bouillet Freres et Dufayard (Լիոն) մետաքսագործական ընկերության ներկայացուցիչն էր:

Դամայնքի կազմավորման երկրորդ շրջանն ընդգրկում է 1903 թվականից մինչև Մեծ եղեռնը: Դարարեի և Դիրե Դավայի հայերը տեղափոխվում են Աղիս Արեբա, գրադպում խանութպանությամբ՝ զարկ տալով Երկրի ներսում բիզնեսի զարգացմանը:

1904թ. պոլսեցի Երկրաչափ Գրիգոր Դովոյանը Սուչավայից (Ռումինիա) գալիս է Երովափայամբ գրադպելու համար և Աղիս Արեբայում կառուցում կամուրջներ, որոնք կոչվում են Hovian Sisteme: Նա իրեն պատկանող հողատարածքը կտակեց համայնքին՝ որպես ազգային սեփականություն:

Նույն թվականին Աղիս Արեբա է գալիս կեսարացի Միհրան Նազարյանը և հիմնում Մենելիք II թագավորի գորգի գործարանը, ինչով Երովափայում սկիզբ է դրվում գորգագործությանը:

Սակայն համայնքի ներկապնակին միանգամայն նոր Երանգ հաղորդեց Միհրան Գևորգի Մուրադյանը: Նա ծնվել է 1865թ. Կ.Պոլսի Բոյուքքերե թաղամասում: Մանուկ հասակում հայերենի ու ֆրանսերենի մասնավոր դասեր է ստանում Դակոր Ուսկանի մոտ, հաճախում Պերպերյան վարժարան: 1883թ. մեկնում է Ֆրանսիա և Երկու տարի անց ավարտում Մարսելի Առևտրական վարժարանը, ապա վերադառնում Կ.Պոլսի և գրադպում հոր բիզնեսով: 1895-1896թթ. ջարդերից հետո գաղթում է Սանչեստր և 1901թ. Երեք եղբայրներից հետ հիմնում «Գևորգ Մուրադյան» առևտրատունը: 1908թ. նա եղբայր Եղուարդի և բոքատոցի Գրիգոր Սեֆերյանի ընկերակցությամբ մասնաճյուղ է հիմնում Եգիպտոսում: Շուտով նա «հայտնաբերում» է Երովափայի շուկան, և 1913թ. Աղիս Արեբայում հիմնվում է «Գևորգ Մուրադյան» ֆիրման, որը ներմուծում էր բամբակ, մանվածք, կտավ, Զիբութիից՝ աղ, արտահանում էր սուլթ, կաշի և այլ ապրանքներ, մասնաճյուղեր ուներ Դիրե Դավայում և Զիմնայում: Տնօրեններն էին Երվանդ և Գրիգոր Սեֆերյան եղբայրները, որոնք հետագայում դառնում են ՀԲԸՇ Երովափայի մասնաճյուղի հիմնադիրներից և հայոց դպրոցի բացման նախաձեռնողներից:

Միհրան Մուրադյանը 1897-1922թթ. եղել է Բերայի Ս. Երրորդություն Եկեղեցու կալվածքների հանձնաժողովի գանձապետ և եապես նպաստել Եկեղեցու բարգավաճմանը: Եղել է նաև Կ.Պոլսի

Գուրուչեղմեի ազգային երեսփոխան, Շայոց միացյալ ընկերության գանձապետ, Սանասարյան խնամակալության անդամ: 1913թ. Երովափայում կազմակերպում է խոշոր հանգանակություն՝ ի նպաստ Շայոց միացյալ ընկերության:

Այս երկրորդ շրջանում երովափահայ համայնքում ի հայտ է գալիս վաճառականների մի ամբողջ սերունդ՝ Սամուել, Եղիա և Ոութեն Բեհեսնիլյանները, Եղուարդ Փողարյանը (ներմուծում էր կերպաս, ոսկեթել ծոպք և զանազան նախարարությունների մատակարարն էր), Զարմայր Զատեյանը (ներմուծում էր թուղթ, գրենական պիտույք, խաղալիք), Ղակոր, Օհան, Գասպար և Ղավիթ Խորայելյան Եղբայրները (Օհանը Զիբութից աղ էր ներմուծում և արտահանում եղան, ոչսարի, այժի կաշի, սուրճ), «Կարպիս Եպեյան և Միհրդատ Պողոսյան և ընկերություն» ֆիրման, Զավեն Խաչատրությանն ու Եղիա Գրայանը (ներմուծում էին օժանելիք), Արտաշես Փեշտիմալջյանը (ներմուծում էր արծնապատ և այլումինե ամանեղեն, կապարե և չուգունե խողովակներ, գործիքներ, գամ, մետաղաթել, անագ ու նպարեղեն), Աղանալյան Եղբայրները, Եղուարդ Թուլումճյանը, Մարտիրոս Մանասոֆը, Խաղախորդարաններ (սպանդանոց) ունեին Ստեփան Տարագճյանը, Գևորգ Քեհյայանը և Խսկենդեր Կիրակոսյանը, սղոցարանի տեր էր Գևորգ Որբերյանը: Այսպիսով, ավարտվեց համայնքի տնտեսական ձևավորումը, ամուր հիմքերի կայացումը:

Երրորդ փուլը՝ 1915-1930-ական թթ., երովափահայության համար դարձավ նոր խավերի՝ հայ պետական պաշտոնյանների և արիեստավորների երևան գալու շրջան: Եվրոպայում կրթություն ստացած իրավագետ Յ. Ուրֆայանը երկրի առևտուի նախարարության խորհրդականն էր, Ս. Գայմագյանը՝ անասնաբույժ, Ս. Փափազյանը և Մ. Խերպեկյանը՝ երկրագործության նախարարության պաշտոնյաններ, Ս. Չագրյանը՝ Խոտակայի դեսպանատան թարգմանիչ, Ա. Փեշտիմալջյանը՝ Ֆրանսիայի դեսպանատան թարգմանիչ, հայոց գործերով խառն դատարանի անդամ, Շովի. Սեմերծիպաշյանը՝ գերմանական դեսպանատան թարգմանիչ, Պապիկյանը՝ ոստիկանության պաշտոնյա, փողոսկրի վաճառական Տ. Նազարյանը՝ արքունական պալատի պաշտոնյա և այլն:

Այսպիսով, 1930-ական թթ. այլազգինների թվաքանակով հայերը չնայած երրորդն էին, սակայն տոկոսային հարաբերությամբ

առաջին տեղն էին գրավում Եթովպիայի պետական պաշտոնյանների թվում՝ 60 հոգի:

Շայերի դերը գգալի էր նաև արիեստների ասպարեզում, հույների և այլ եվրոպացինների հետ մեկտեղ նրանց էր պատկանում երկարագործության, կահագործության, կտավագործության, խաղախորդության, կոչկակարության, դերձակության, հյուսնության, քարակոփության ոլորտներում առաջնությունը: Ուսկերչությունը հայերի ու տեղացինների ձեռքում էր, ընդ որում, եթե երովափային աշխատում էր նախնադարյան եղանակներով, ապա հայը արդյունագործական մեթոդներ էր կիրառում: Իսկ լուսանկարչությունը գրեթե ամբողջովին հայերի ձեռքում էր: Այս երկու շերտերից բացի, կային նաև բազմաթիվ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ ու ճարտարապետներ:

Պետք է ասել, որ երովափահայ համայնքն ուներ գրեթե բոլոր ազգային կառույցները: Աղիս Աբեբայի շուրջ 400 հոգանոց գաղթավայրում դեռևս 1923թ. գործում էր Ս. Աստվածածին Եկեղեցին: 1925թ. Սահակ Մեսրոպյան և Արարատյան վարժարանների միավորումով ստեղծվեց Ազգային Արարատյան վարժարանը, որը ֆինանսավորվում էր ռամկավարների կողմից, իսկ 1930թ. ավելացավ Յ. Յ. հովանավորմամբ գործող Շայկական կրթարանը. Երկու ուսումնական հաստատություններում սովորում էին 177 երկսեռ աշակերտներ: Իսկ 1932թ. Մարիկ Գեորգովի բարերարությամբ, Աղիս Աբեբայի կենտրոնական պողոտայում՝ Եկեղեցուն կից, կառուցվում է կահավորված, լուսավոր սենյակներով դպրոցի նոր շենք, որը բարերարի անունով կոչվում է Ազգային Գեորգով վարժարան:

1928թ. Աղիս Աբեբայի հայոց կյանքում տեղի ունեցավ ևս մեկ նշանակալից իրադարձություն. Սիհրան Մուրադյանը, ի հիշատակ հոր և Խսկուի մոր, կառուցեց Ս. Գևորգ Եկեղեցին: Օժնան հանդիսավոր արարողությունը կատարվեց դեկտեմբերի 2-ին. Կնքահայրերն էին Պերճ Պապայանը, Գրաբոս Կարագյովյանը, Արտաշես Բաղդասարյանը, Փայլակ Յազճյանը, Արտաշես Փեշտիմալջյանը, Շարություն Ուրֆայանը, Սահակ Պողոսյանը, Լևոն Գեորգովը, Շովիաննես Աստուրյանը, Շովիաննես Գարասեֆերյանը, դրկտոր Մանուել Թերզյանը, Երվանդ Քյորածյանը, Շարություն (ժորժ) Մինասյանը, Շարություն Պենլյանը, Պողոս Եպեյանը և Գասպար Խորայելյանը: Արարողությունն այնքան կարևոր նշանակություն

ուներ, որ այն իրենց ներկայությամբ պատվել էին Թափարի Մաքոնեն Դայլե Սելասիե կայսրը և Զումեթու կայսրուիին, ինչպես նաև բազմաթիվ տեղացի և օտարերկրացի բարձրաստիճան պաշտոնյաներ:

Դարարեի համայնքում երբեմնի 70 տնից 1928թ. մնացել էր վաճառականների 6 տուն, իսկ Դիրե Դավայում՝ 12-14 տուն, որոնք ունեին Ս. Մինաս Եկեղեցին:

Բնութագրելով ամբողջ եթովպահայ համայնքը՝ հարկ է արձանագրել, որ, նախ, այն զարմանալի համախումը ու համերաշխ էր, գործեք առանց որևէ ներքին տարածայնությունների և չուներ ընդգծված առաջնորդներ: Երկրորդ, բացառիկ տնտեսական հաջողությունների շնորհիվ համայնքն այն հազվագյուտ սփյուռքահայ գաղթօջախներից էր, որտեղ աղքատ և աղքատախնամ գոյություն չուներ:

Սակայն եթովպարնակ հայության վիճակն արմատապես փոխվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Պատճառը եթովպացիների, այսպես կոչված, «ազգային զարթոնքն» էր, մի երևույթ, որի կործանարար հետևանքները հայերս, դժբախտաբար, կրել ենք ամենատարբեր Երկրներում: Եթովպիայի պարագայում «զարթոնքն» ստացավ պետական ներքաղաքական բնույթ, և առաջին թիրախներից մեկը դարձավ բարեկեցիկ կյանքով ապրող, հարուստ, ազգային բոլոր կառուցներն ունեցող հայությունը: Բերենք լոկ Երկու օրինակ:

1956թ. եթովպարնակ հայ համայնքը բաղկացած էր 940 հոգուց, որից 830-ը բնակվում էր Ալիս Աբերայում, 83-ը՝ Դիրե Դավայում, մնացած 27-ը՝ Երկրի այլ քաղաքներում ու շրջաններում: Գաղթավայրը ղեկավարում էր 7 հոգուց կազմված վարչությունը, որի բացառապես բոլոր անդամները արտադրական, արդյունաբերական, առևտուրային խոշոր ծեռնարկությունների սեփականատեր էին (վարչության նախագահն էր 3 մլն. եթովպական դոլար անձնական կարողությամբ Մարտիրոս Տարագյանը՝ սեփականատերը Երկրի կաշվե կոչկեղենի «Տարմար» ֆիրմայի, որի արտադրանքը հայտնի էր աշխարհի շատ Երկրներում): 940 հայից եթովպահպատակություն ուներ ընդամենը 30 ընտանիք, մյուսներն ապրում էին լիբանանյան, սիրիական և այլ Երկրների անձնագրերով: Դայերի՝ եթովպիայի քաղաքացիություն ստանալու դիմումները իշխանությունները քննարկում էին տասնամյակ-

ներով և, որպես կանոն, մերժում, այսինքն՝ գրկում օրինական պաշտպանությունից և իրավունքներից: Իսկ դա հնարավորություն էր տալիս կամայական, չպատճառաբանված բարձր հարկերով, տուրքերով, մաքսերով սահմանափակել հայոց առևտրատնտեսական գործունեությունը, դրանով հանդերձ դուրս մղելով ոչ միայն շուկայից, այլև՝ Երկրից: Պատահական չէ, որ 1973թ.՝ Եթովպական հեղափոխությունից մեկ տարի առաջ, հաբեշաբնակ հայության թիվը նվազեց հասավ 560-ի:

Տիպական է 1973թ. համայնքի Ազգային խորհրդի նախագահ Եղիա Շեռահյանի օրինակը: Այս ազգանվեր մարդը օրահաց սկսել էր վաստակել Ալիս Աբերայի զվարժանքի հաստատություններում ջութակ նվագելով: Խնայել-ժողովելով փոքրիկ դրամագլուխ՝ նա ծերեց կրպակ և բնածիր հատկությունների՝ աշխատասիրության, խելացիության, ուշիմության շնորհիվ նախանձելի հաջողությունների հասավ առևտրի ասպարեզում: Ապա, անսխալ և ճշգրտորեն հաշվարկելով՝ որոշեց զբաղվել պոլիգրաֆիական-հրատարակչական գործունեությամբ, կանխատեսելով, որ այդ ոլորտը ապագայում կարող է խիստ շահութաբեր լինել: Եվ չսխալվեց. 1973թ. նրա «Արթիսթիք փրինթերս» ծեռնարկությունն ամենախոշորն էր՝ 12 մլն. եթովպական դոլար կապիտալով: Ո՞րն էր Եղիահյանի հաջողության գաղտնիքը. աշխատանքի ճիշտ կազմակերպումը և բարձր արդյունավետությունը, նրա մոտ մատուցվող ծառայությունների ինքնարժեք անհամեմատ ցածր էր, հետևաբար՝ կապիտալի շրջանառությունը, շահութաբերությունը և աշխատավարձը՝ բարձր: Օրինակ, «Արթիսթիք փրինթերս» եթովպացի հասարակ բանվորն ամսական ստանում էր 90-100 եթովպական դոլար (եթովպական տպարաններում՝ 35-40 եր. դոլար), վարպետները՝ 300, գրաֆիկ-նկարիչները, կլիշե պատրաստողները՝ 600, իսկ օֆսեթ արտադրամասի հայ պետը՝ ամսական 2000-3000 եր. դոլար, այսինքն ավելի, քան Երկրի նախարարը կամ բանակի գեներալը... Բացի այդ, Եղիահյանը վճարում էր տարատեսակ դրամական նպաստներ, եթովպիայի ազգային ու կրոնական տոնների առթիվ մատուցում նվերներ, տալիս պարզեվճարներ և այլն, և այլն: Սակայն դժգոհողները առաջին հերթին հենց ծեռնարկության եթովպացի բանվորներն էրն, որոնք համարում էին, թե իրենք արժանի են ավելիի:

Եթե հաշվի առնենք, որ գրեթե նույն պատկերն էր հայապատկան գրեթե մյուս բոլոր ծեռնարկություններուն ու հաստատություններում, և դրանից դժգոհ էին եթովապացի բանվորից մինչև նախարար ու գեներալ, ապա միանգամայն հասկանալի են այն չար նախանձը և ատելությունը, որ ձևավորվեց եթովապարնակ հայոց նկատմամբ:

2003թ. տվյալներով եթովապիայում մնացել էր բացառապես Աղիս Արեբայում բնակվող ընդամենը ութ տասնյակ հայ: Իսկ ինչի՞ հասավ եթովապիան՝ իր «ազգային զարթոնքի» ալիքի վրա արտաքսելով հայերին. մնաց նույն հետամնաց և աղքատ երկիրը, որն աշխարհին այսօր հայտնի է, թերևս, միայն երկար տարածության վազորդներով...

**1919թ. Գաղութային ժողովի ատենապետ, եթովապիայում ՀՅ դեսպան, Պողոս Նուրար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունում եթովապիայի համայնքի ներկայացուցիչ Մաթիկ Գեորգոֆը, փոխատենապետ Շովիաննես Ասատուրյանը և փոխդեսպան Դայկ Բաբարանը Առաջին Կանոնապետությանը տրամադրեցին 1000-ական ֆունտ ստերլինգ՝ սավառնակ գնելու համար:**

Դետաքրքիր է Գեորգոֆ ազգանվան ժագման պատմությունը: Դարասկզբին Զիրուրի նավահանգստում Մաթևոս Գևորգյանն ուներ վաճառատուն, որից պարենամթերք և այլ ապրանքներ էին ծեռք բերում Եկող նավերի անձնակազմերը: 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ այստեղից անցնող ռուսական նավերն էլ էին պարենավորվում Մ. Գևորգյանի վաճառատնը, և հենց ռուս ծովայինները նրան սկսեցին կոչել Գեորգոֆ, ինչն էլ «որդեգրեց» թե մեր վաճառականը և թե համայնքը:

**1924թ. Նելասիե կայսրը այցելեց Երուսաղեմի Դայոց պատրիարքարան ու ցեղասպանությունից փոլիված, միարամությունում ապաստանած 1000 որբերից ընտրեց 40 երաժիշտ երեխանների ու տարավ հետոց: Աղիս Արեբայում կայսրը նրանց տրամադրեց հողատարածք ու կացարաններ: Այդ որբերը Գևորգ Ներսեսի Նալբանդյանի դեկավորությամբ կազմեցին արքունական նվազախումբ: Իսկ երգահան ու նվագախմբի դեկավար Գ. Նալբանդյանը հեղինակեց եթովապիայի պետական հիմներգը, որը գործածվեց մինչև 1992թ.:**

Ո՞վ էր Միհրան Մուրադյանի հայրը, ի հիշատակ որի որդին 1928թ. կառուցեց Աղիս Արեբայի հայոց եկեղեցին: Գևորգ Մուրադյանը դեռևս XIX դարավերջին Կ. Պոլսում մի հույն գործընկերոց հետ ուներ սպիտակեղենի վաճառատուն: Ընկերը հանկարծամահ եղավ, և Գևորգը նրան պարտք մնաց: Բագում տարիներ անց գնաց Շունաստան, գտավ գործընկերոց ժառանգներին և վճարեց ոչ միայն պարտքը, այլև շահութառոկուսները: Գևորգ Մուրադյանի մտքով իսկ չէր անցնում, թե ընկերոջը կարելի է, այսօրվա բառով ասած, «քցել»:

**Դ. Բաբարանը 1930թ. գրել է.«Չէ եղած ոչ մեկ հայ կին, որ կենակցած ըլլա տեղացի այր մարդու մը հետ»:**

**Երկրորդ աշխարհամարտի ժամանկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորման համար եթովապարնակ հայերը հանգանակեցին ու տրամադրեցին 1300 ֆունտ ստերլինգ:**

## ՖՐԱՆՍԻԱ (Վլու-ԽՀԿ. առաջին քառորդ)

Աշխարհում քիչ ժողովուրդ կգտնվի, որ հայ ժողովրդի նման լավագույն բարեմասնություններ ունենա: Անենուր նշանաբերի է, որ հայերը մեծ ողջամտություն և խոհականություն ունեն: Նրանք քիչ են խոսում, շատ են խորհրդակցում և իրենց ձեռնարկած բնագավառներում մեծ հաջողություններ ունեն: Նրանց ձեռքում է Արևելքի ողջ առևտուրը և մեծապես նպաստում են Եվրոպայի բազմաթիվ մեծ քաղաքների առևտուրի բարգավաճմանը:

Թոնա Շարլ Ֆլեորիո  
ֆրանսիացի ճիզվիտ, XVIIդ.

Երկար տասնամյակներ, հատկապես Եղեռնից հետո, Փարիզը եղել է սփյուռքահայության մայրաքաղաքը, այստեղ էին գտնվում համահայկական կառույցները՝ Պողոս Նուրար փաշայի ղեկավարած Ազգային պատվիրակությունը և Դայկական Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնակայանը, այստեղ հանգրվանեց մեր ժողովրդի խիղճ մտավորականությունը, այստեղ պատսպարվեցին թուրք ցեղասպաններից փրկված հազարավոր գաղթականներ, ի վերջո, այստեղ հաստատվեցին Բաքվից, Թիֆլիսից, Մոսկվայից, Պետերբուրգից, առհասարակ փլուզված Ռուսական կայսրությունից բոլշևիկյան հեղափոխությամբ քշվածները:

Ֆրանսիան տարբեր բնօրրաններից վտարված, տարբեր քաղաքակրթություններ կրող, զանազան բարեր ու սովորություններ ունեցող, սոցիալական ամենատարբեր խավեր ներկայացնող հայոց մի գգալի զանգվածի համար դարձավ հայրենիք: Ֆրանսիան առաջին երկիրն էր, որ հայերին չփառակեց որպես սոսկ «օգտակար տարր», առաջին երկիրն էր, որ ազգային խորականություն չդրեց, քանզի իր համար գոյություն ուներ միայն մեկ՝ քաղաքացի հասկացություն: Ֆրանսիական ժողովուրդը պատսպարեց մեր ազգի մի գգալի հատվածի և դարձրեց իր ինքնության անբաժան բաղադրյալը:

Եվ հայը վարձահատուց եղավ իր ողջ ներկայության ընթացքում: հարյուրավոր հայ կամավորներ կյանքները զոհեցին ֆրանսիական լեգեններում, հազարավորները Դիմադրության շարժման մեջ պայքարեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ, բյուր հազարներ իրենց ամենօրյա աշխատանքով, եռանդով, գործունեությամբ նպաստեցին ֆրանսիայի տնտեսության, գիտության, առողջապահության, արվեստի, մշակույթի զարգացմանը, միով բանիվ՝ երկրի առաջընթացին:

Ըստ բյուզանդագետ Շարլ Դիլի, հայ վաճառականները ֆրանսիա են եկել VI–VII դդ.: Իսկ անվանապես հայտնի առաջին հայը եղել է Անտիոքի Սիմոն Եպիսկոպոսը, ով պարսիկների գերեվարումից փրկվելով՝ 591թ. հաստատվել է Տուր քաղաքում:

Այս փաստերից հետո պատմությունը լռում է գրեթե հինգ դար, բայց այդ լռությունը, թերևս, պայմանավորված է անհրաժեշտ ուսումնասիրությունների բացակայությամբ: Որովհետև մեր կապիտալի պատմության տրամաբանությունը հուշում է, որ հայ վաճառականներն անհնար է «մոռանային» մի երկիր, որտեղ արդեն ուրբ էին դրել:

Դայ-ֆրանսիական առևտրատնտեսական փոխարաբերությունները նոր մղում են ստանում XI դ. ֆրանսիացի խաչակիրների Կիլիկիա կատարած ռազմարշավից: Այս ժամանակ է, որ մեր լեզվում մուտք է գործուն «փրանկ» (ֆրանկ, ֆրանսիացի) բառը. երբ XIդ. առաջին կեսին թուրք-սելջուկները պաշարում են Մանագերտը, քաղաքի պաշտպանների թվում լինում է մի ֆրանկ, որը կարողանում է այրել թշնամիների պարսպակործան սարքերը:

Փրանկ վաճառականները Կիլիկիա էին բերում չիյուսված դերձան, ածելի, փարիզյան գոտի, դանակ, հայելի, օճառ, մեղրամոն և այլ ապրանքներ, իսկ կիլիկեցիները, որոնց ֆրանսիացիներն Արևելքի բոլոր վաճառականների նման անվանում էին «սիրիացի», Գաղիա էին տանում մետաքս, բամբակ, համեմունքներ, ինչպես նաև գորգ ու կարպետ, որի հետևանքով ֆրանսերենում ու Եվրոպական այլ լեզուներում հայտնվեց carpette բառը:

Առևտրական հարաբերություններն այնքան զարգացան, հայ ու ֆրանսիացի վաճառականների փոխայցելություններն այնքան հաճախակիացան, որ XII դ. հայ վաճառականները առևտրատնտեսական փոքրիկ համայնքներ հիմնեցին ֆրանսիայի հարավում

Պրովանս ու Լանգեդոկ նահագների Մարսել, Մոնպելյե, Նարբոն, Նիմ քաղաքներում: Ուշագրավ է, որ XII-XIVդդ. Մոնպելյեի համալսարանի դրանը փակցվում էին կիլիկյան ու ֆրանսիական դրամական փոխարժույթների սակացանկերը:

Դարկ է նշել, որ կիլիկյան հայոց պետությունը խրախուսում ու նպաստում էր Ֆրանսիայի հետ տնտեսական կապերի զարգացմանը: Այսպես, 1314թ. հունվարի 7-ին Օշին թագավորը, իսկ 1321թ. դեկտեմբերի 29-ին Լևոն Ե. թագավորը հրովարտակներով արտօնություններ շնորհեցին Մոնպելյեի վաճառականներին, որոնք Այսի բաժտանը (նաքսատուն) պետք է վճարեին 2 տոկոս մաքս (այլը վճարում էին 4 տոկոս):

XVIլ. Եվրոպան տնտեսապես յուրացնել սկսեցին ջուղայեցիները. ըստ պահպանված վավերագրերի, վերջիններս 1570թ. արդեն ներկա էին Եվրոպական բազմաթիվ քաղաքներում: Նրանց առևտրական գործունեությունն այնքան զգալի էր, որ վենետիկցիները բոլոր հայերին անվանում էին ջուղայեցիներ, իսկ ֆրանսիացիներն անգամ տարբերակում էին դնում հայերի ու ջուղայեցիների միջև, առաջիններին կոչելով Armeniens, Երկրորդներին՝ Choffelins, (Chappelins, Choppelins):

Ջուղայեցիները Ֆրանսիայի «նվաճումն» սկսեցին Մարսելից: XVIll. առաջին տասնամյակներից նրանք այդ նավահանգիստ էին ներմուծում հում մետաքս, մեծ պահանջարկ վայելող մետաքս ասեղնագործ թաշկինակներ, շապիկներ, ծածկոցներ, ոսկեթել և արժաքաբեր մետաքս ու բամբակե կերպասներ, որոնք Եվրոպականներից ավելի գեղեցիկ ու դիմացկուն էին: Դայաստանից բերում էին նաև գույնզգույն կաշիներ, որոնք իրենց որակական հատկանիշներով զգալիորեն գերազանցում էին Եվրոպայում պատրաստվածներին:

Նշենք, որ այս տնտեսական էքսպանսիան լրջագույն դիմակայության հանդիպեց: Բանն այն է, որ հայ վաճառականները ուղղակի, չմիջնորդավորված առևտուր էին անում, բերած ապրանքները վաճառում ցածր գներով, ինչի հետևանքով ֆրանսիացի վաճառականները դուրս էին մղվում Մարսելի շուկայից: Դա հանգեցրեց զանգվածային դժգոհությունների, ինչի արդյունքում 1622թ. նոր-նոր կարդինալի կոչման արժանացած Արման Ժան Ռյու Պլեսի Ուշելյոն (որը երկու տարի անց պիտի դառնար թագավորական խորհրդի ղեկավար և Ֆրանսիայի անթագակիր տիրակալ)

սահմանափակումներ մտցրեց: Այսպես, ֆրանսիացի նավապետներին արգելվեց հայերի ապրանքները փոխադրել, իայ վաճառականներին բույլ չտրվեց երկրից արծաթ ու ոսկի դուրս բերել, իսկ վաճառած մետաքսի դիմաց պարտավորեցրին տեղական ապրանքներ գնել: Ազգային պատկանելության հատկանիշի, սեփական շահերն ու շուկան պաշտպանելու հիման վրա ընդունված այս արգելանքները, որոնք տևեցին շուրջ 35 տարի, տնտեսապես լիակատար սնանկ ու վնասակար եղան: Նախ, հայ վաճառականների այցելությունները Մարսել զգալիորեն նվազեցին, բացի այդ, որպես պատասխան քայլ, նրանք ֆրանսիացի վաճառականների նկատմամբ լուրջ խոչընդոտներ հարուցեցին արևելյան ապրանքների ծեռքերման հարցում, ինչի հետևանքով, բնականաբար, դրանց գները ֆրանսիական շուկայում կտրուկ բարձրացան: Երկրորդ, հայ վաճառականները շատ արագ գտան սահմանափակումները շրջանցելու ուղին՝ մտերմական կապեր էին հաստատում մարսելցիների հետ և որոշ վճարի դիմաց իրենց ապրանքները բերում նրանց անվան ներքո:

Դարկ է նշել, որ հայ վաճառականների հանդեպ խստությունների անհեռանկարայնությունը գիտակցում էին նաև իշխանությունները: Արդեն 1629թ. նոյեմբերի 23-ին Լյուլովիկոս XIII-ը և կարդինալ Ուշելյոն ստորագրեցին հատուկ կրովարտակ, որով հայ վաճառականներին իրավունք տրվեց ազատ ելումուտ ունենալու Մարսել: 1639թ. մետաքս բերեցին խոջա Ֆահրադը, Նոնիաքը (Ավետիք) և Հովհաննես Սկրտիչը:

Երբ 1642թ. Ուշելյոն անգլիացիների ու հոլանդացիների նման հիմնեց «Ֆանսիական արևելա-հնդկական ընկերությունը», բայց վախճանվեց, ճանապարհ հարթվեց երկու անձանց համար, որոնք անջնջելի հետք թողեցին Ֆրանսիայի պատմության մեջ: Առաջինը ծագումով իտալացի Ջուլիո Մազարինին է (1602-1661, ֆրանսերն Մազարեն), որը 1641թ դարձավ կարդինալ, 1643թ.՝ առաջին նախարար և Ֆրանսիայի հանար ապահովեց գերիշխող դիրք Եվրոպայում: Երկրորդը Ժան-Բատիստ Կոլբերն էր (1619-1683), ով 1665թ.-ից ֆինանսների նախարարն էր:

Այս երկու ականավոր պետական գործիչները հիմնովին վերանայեցին Ֆրանսիայի տնտեսական քաղաքականությունը, մասնավորապես՝ հայ վաճառականության հանդեպ վերաբերմունքը: Կոլբերն սկսեց պետական մակարդակով խրախուսել հայ վաճա-

ռականներին: Դա միանգամայն հասկանալի էր և տնտեսապես արդարացված, մեր վաճառականների ապրանքները, հատկապես՝ հում մետաքսը, նշանակալի կարևորություն ունեին ֆրանսիական մանուֆակտուրային ձեռնարկությունների համար: Կոլբերը հայ վաճառականներին շնորհեց մի շարք արտոնություններ, որոնցից չուներ արևելյան և ոչ մի ժողովուրդ, մասնավորապես՝ ազատեց մաքսատուրքերից: 1669թ. իրովարտակով նա Մարսելը հռչակեց ազատ նավահանգիստ, որից հետո Լիվոռնոյի, Վենետիկի ու նենովայի շատ հայ վաճառականներ տեղափոխվեցին այստեղ:

Այս դարի 70-ական թթ. Մարսելը դարձավ հայոց տնտեսական հետաքրքրությունների կիզակետը: Այստեղ հաստատվեցին խոջա Մկրտիչը, Կարապետը, Մարդար Մարտիրոսյանը, Ավետիս Տեր-Աստվածատրյանը, Գալուստ Արազը, Փանոսի որդի Մալիբարան, Բարձագան Սուլթանումը, խոջա Փանոսը և հայ վաճառականների ղեկավար Մելքոն Նազարը:

Ընդ որում, հայոց բիզնեսում երևան եկավ մի տարատեսակ և թանկագին քարերի առևտուրը: 1675թ. հուլիսի 23-ին նորջուղայեցի Ռաֆայել Ռուպիկն Մարսել քերեց 50 հազար լիվր արժողությամբ 30 ադամանդակուր մատանի, 24 փոքր և 7 մեծ ադամանդ: Այս ամենը նա վաճառեց 70 հազար լիվրով: Իսկ Վենետիկում հաստատված Հովհաննես Ալազարը Մարսել ուղարկեց 2000 հատ ագար և 3000 հատ այլ թանկագին քարեր: Մենք սա կարևորում ենք այն պատճառով, որ ֆրանսիահայ համայնքի բիզնեսում թանկագին քարերի առևտուրը մշտապես պահպանեց իր կայուն տեղը:

Մարսելում մեր վաճառականները համախումբ բնակվում էին Հայոց փողոցում (Rue des Armeniens) և Վաճառականական սակարանի (Bours de Commerce) ետնամասում գտնվող մի փողոցում, որը կոչվում էր Հայաստանի աղբյուր (Fontaine d'Armenie), հավանաբար, հանուն այն աղբյուրի, որի վրա պարզորդ կարդացվում էր կառուցման թվականը՝ 1786:

Այս տարեթիվը, կարծես, ինչ-որ խորհրդանշական իմաստ ուներ: Այս թվականին Բիթար անունով մի հայ Պյուի-դը-Ռոն նահանգում դոյսակ գնեց և հիմնեց Դեզարմենիեն (Desarmenien, բառացի՝ Հայերի, Հայկական) գյուղը: Ահա այդ վավերագրի թարգմանությունը. «Մարի դը Լեզրանժը Լուի դը Շազերոնի կինը, 1786թ. փետրվարի 7-ին կրյողի իր Պեյրուղետ դոյսակը վաճառեց

Բիթար դեզ Արմենիեն դը Բորդին, որի ժառանգների սեփականությունն է այն հիմա: Դայերի հողակտորը, որ իր անունն ստացել է Բիթար ընտանիքից, գտնվում է Բյուսիեր գյուղախմբի մեջ, Պիոնսա կանոնում, Ունի գավառում, Պյուի-դը-Ռոն նահանգում»:

Մարսելը հայաշատության իր առաջնությունը երկար ժամանակ պահպանեց: Եթե 1877թ. հայերն այստեղ ընդամենը 20 հոգի էին, ապա 1882թ. նրանց թիվը հասավ 100-ի: Ընդ որում, բոլորն անխտիր վաճառականներ էին, մեծ մասը՝ ռուսաստանաբնակներ, որոնք գրավվում էին բրոդի, շերամի ու գանգրաբավի (frison) ներմուծմանը: Սակայն կային նաև արևմտահայեր, որոնք ներմուծում էին կաշվեղեն, բամբակ, ընդեղեն, չամիչ և այլն: Սրանց թվում էր հայի աշխատասիրությունը, աշբարացությունը, ձեռներեցությունը խորհրդանշող հայ վաճառականության տիպական մի ներկայացուցիչ: Միհրան Գալփակճյանը Կ. Պոլսից Մարսել եկավ՝ գրանում ունենալով ընդամենը 20 փարա (4 կոպեկ): Իսկ 1894թ. նա արդեն ուներ թղթի արտադրության սեփական գործարան, դեղատուն, միաժամանակ՝ բուրքերեն էր դասավանդում Փարիզի Արևելյան լեզուների վարժարանում և նյութապես օժանդակում հայուսանողներին:

1914թ. Մարսելում արդեն կար 15-20 մշտաբնակ մեծահարուստ և 200-250 արհեստավոր ու մանրավաճառ: Այսինքն ակնհայտ է, որ մինչև ցեղասպանություն Մարսելի համայնքն ուներ գուտ առևտուրատեսական բնույթ: Եղենից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց, ցեղասպանությունից նազապուրծ հազարավոր գաղթականներ փոխեցին սոցիալ-կառուցվածքային դիմագիծը, և համայնքը վերածվեց գաղթավայրի: 1926թ. ֆրանսիական այս նավահանգստում հանգրվան էր գտել ավելի քան 20 հազար հայ:

Սակայն ժամանակագրությունը չխախտենք:

### Ֆրանսիայի սրբարանների հիմնադիրները

Մեր վաճառականների՝ հատկապես ջուղայեցիների, համար սուլքը ապրանքատեսակ է դարձել XVI դ.: Յնդկաստանից ու Յնդկաչինի այլ երկրներից այդ տարօրինակ, տարաշխարհիկ հատիկները բերում էին Պարսկաստան, Արևմտյան Հայաստան, այստեղից՝ Եվրոպա: Սակայն սկզբնական շրջանում եվրոպական երկր-

ներում սուրբը պահանջարկ չէր վայելում, ներկայիս «կենարար» ընթերքը անսովոր էր ու խոր:

Եվ ահա 1672թ. Փարիզ է գալիս վաճառական Յարությունը, որն անունը ֆրանսականացնում է Պասկալ և որը, հավանաբար, ջուղայեցի էր: Այս մարդը Սեն-Ժերմեն հրապարակի մոտ սուրճի խանութ է բացում: Սակայն ապրանքը չի վաճառվում, ֆրանսիացին բովելու, պատրաստելու, խմելու սովորույթ չուներ: Այդժամ Յարությունը էքոլ առափնյակում (Quai de L'Ecole), դը լա Մոնե փողոցի անկյունում բացում է Եվրոպայի առաջին սրճարանը և մեկ գավաթ սուրբը վաճառում 2 սոլ 6 դենիեյով: Սակայն, միևնույն է, ֆրանսիացիներին սուրճը դուր չէր գալիս, հիմնականում սրճարան էին հաճախում Մալբայի օրդենի ասպետները և այլազգիները, ովքեր Արևելքի հետ շփում ունեին, և ում քիմքը քիչ թե շատ սովոր էր ընթելիքին: Յարություն-Պասկալը ստիպված սրճարանը փակում է ու մեկնում Լոնդոն՝ այնտեղ ևս սրճարան բացելու մտադրությամբ (որոշ տվյալների համաձայն՝ բացել է):

Յարությունից 3-4 տարի անց Փարիզ է գալիս մեկ ուրիշ հայ՝ վաճառական Մալիբանը, որը սրճարան է բացում դը Բրյուսի փողոցում՝ Սեն-Ժերմեն աքքայության հարևանությամբ: Մալիբանի կողմից նոր սրճարանի հիմնումն ամենակին պատահական չէր: Յայ վաճառականները գործում էին սերտ համագործակցությամբ, միաբան, տրամաբանված, իրենց բիզնեսը կազմակերպում էին հիմնականում հայրենակիցների և համերկրացիների հետ: Մալիբանն, անկյասկած, տեղյակ պիտի լիներ Յարությունի ծեռնարկից և համարելու, որ դա հեռանկար ունեցող գործ է: Եվ երբ շուտով ստիպված եղավ մեկնել Շուշանդիա, սրճարանը հանձնեց իր գործընթերոջը՝ նորջուղայեցի Գրիգորին:

Վերջինս որոշ ժամանակ անց, արդեն հմտանալով գործի մեջ, սրճարան է բացում Կարդինալ Մազարեն փողոցում՝ «Կոմեդի» թատրոնի հարևանությամբ, զգալով, որ սուրճը լավ ընդունելություն է գտնում հատկապես թատրոնատեր, զվարճասեր հասարակայնության շրջանում: Երբ 1688թ. «Կոմեդին» տեղափոխվում է Ֆուս-Սեն-Ժերմեն դե Պրե փողոց (հետագայում վերանվանվել է լ'Անսիեն Կոմեդի), Գրիգորը սրճարանը վաճառում է իր համերկրացի Մակարին, իսկ ինքը թատրոնի մոտ նոր սրճարան է հիմնում: Այս հաստատությունը բուրն ծաղկում է ապրում, դառնում է Փարիզի բոհեմի՝ դերասանների, նկարիչների, բանաստեղծների և

մյուս արվեստագետների սիրված վայրերից մեկը, իսկ մշտական հաճախորդների թվում էր Վոլտերը: Գրիգորն առաջին մարդն էր, որ մեծ հաջողության հասավ սրճի բիզնեսում, զգալի հարստություն վաստակեց, նույն փողոցում տուն գնեց, սրճարանը վաճառեց Յարություն-Պասկալի սպասյակ Պրոկոպին և խոր ծերության մեջ վախճանվեց 1714թ.:

Զգիտենք՝ Պրոկոպը անվանափոխված հայ՝ էր, թե՛ ոչ, բայց մինչև XXդ. 30-ական թվականները Procope սրճարանը գործում էր, մեծ համբավ էր վայելում և փարիզահայեցի սիրված հավաքատեղիներից մեկն էր: Ավելացնենք նաև, որ այս սրճարանում է առաջին անգամ պաղպաղակ վաճառվել:

Փարիզաբնակ հայերից ետ չին մնում նաև Մարսելի վաճառականները, 1712թ. այստեղ սրճարան է բացում Շովիաննեսը:

Այս նույն ժամանակ Փարիզում սրճի շրջիկ առևտորով էր զբաղվում Շովիանի անունով մեկ այլ հայ: Ընդելիքի հանդեպ օրակուր աճող պահանջարկը նկատելով, նա մայրաքաղաքի զանազան մասերում սրճարաններ բացեց և մեծ կարողության տիրացավ: Շովիանի վերջին սրճարանը գտնվում էր Նոտր Դամ կամրջի ստորին մասում, որտեղ նա ուներ նաև սեփական տուն:

Մարանցից հետո Փարիզ է գալիս հալեպցի Ստեփանը և տեսնելով հայրենակիցների հաջողությունները՝ որոշում զբաղվել սրճարանային բիզնեսով: Ակզրում հաջողություն չի ունենում, սակայն համառորեն շարունակում է գործը: Շուտով խանութ-սրճարան է բացում Շանժ կամրջի վրա և զգալի գումար վաստակում: Ապա, Սենտ-Անդրե դեզ Ալ փողոցում՝ Սեն-Սիշել կամրջի դիմաց մի տուն է գնում, որի երկրորդ հարկում ինքն է բնակվում, իսկ առաջին հարկում սրճարան հիմնում: Այս հաստատությունը XVIIIդ. առաջին տասնամյակներին Փարիզի ամենամեծ և ամենանշանավոր սրճարաններից էր: Միաժամանակ սա քաղաքի առաջին հայելազարդ պատերով ու մարմարյա սեղանիկներով սրճարանն էր, որն անասելի համբավ էր վայելում Լատինական թաղամասում:

Այս ամենից հետո էր, որ ֆրանսիացիներն իրենք էլ ներքաշվեցին սրճարանային գործի մեջ, և XVIIIդ. վերջում Փարիզում արդեն գործում էր 900 սրճարան:

Անփոփելով ֆրանսիայում հայոց առևտրատնտեսական գործունեության այս «քերա» թեման՝ արձանագրենք երկու կարևոր պահ: Նախ, ակնհայտ է, որ հայերը ֆրանսիացիներին ընտելաց-

րեցին սուլթան՝ դրանով հանդերձ պահանջարկ առաջացնելով իրենց ապրանքատեսակի հանդեպ:

Երկրորդ, նաև սրճարանային բիզնեսում հաջողությունները նպաստեցին, որ հայերը մշտական բնակություն հաստատեն Ֆրանսիայում:

Սրճարանատերերից բացի, XVIII<sup>ր</sup> Փարիզում հաստատվեցին վաճառականներ Սիմոնի որդի Աղազարը (1651թ.), Յովիաննես Գրիգորը, Ստեփան Ֆարսին (1686թ.), տրապիզոնցի հայր ու որդի Շահին ու Շեն Զելեբինները (1694թ.), Մարգար Ավագշենցը (Avacsinz), որի նավապետ որդիներ Յովիաննեսն ու Յովսեփը Շնդկաչինի ծովերում թանկագին քարերի առասպելական առևտրով ախտի գրավեցին և թալանվեցին անգլիացի ծովահենների կողմից:

#### **Յեղասպանության վերապրումի քառորդ դար, Փարիզ**

Թե Փարիզի համայնքը կազմակերպական առումով ձևավորման ինչպիսի ընթացք է ունեցել՝ մանրանասն չի ուսումնասիրվել։ Ստուգ է միայն, որ 1854թ. Կ. Պոլսի Հակոբ պատրիարքի խնդրանքով Նապոլեոնը թույլ է տվել Փարիզում մատուռ ունենալ, իսկ դա վկայում է, որ հայոց թիվը զգալի էր։

Մերոնք տարբեր ժամանակներում զանազան մատուռներ էին վարձակալում և դժվար է ասել, թե սեփական եկեղեցի երբ կունենայինք, եթե 1900թ. մի կիրակի մեծն Ալեքսանդր Մանթաշյանցը պատարագի չգնար Վիեննա փողոցում վարձակալած մատուռ։

Նավթարքան ամեն տարի մի քանի ամիս ապրում էր Փարիզում, և դա առաջին հերթին ուներ զուտ գործնական նշանակություն։ Նա առաջին հայ ծեռնարկատերն էր, որ իր բիզնեսը հասցեց համաշխարհային մակարդակի, առաջին հայ նավթարդյունաբերողն էր, որի գործունեությունը որոշիչ ազդեցություն ուներ միջազգային նավթարիզնեսի, հետևաբար և աշխարհի նիստուկացի վրա։ Սակայն համաշխարհային նավթարիզնեսի խնդիրները լուծվում էին Լոնդոնի սակարանում, այնինչ Ալ.Մանթաշյանցը տառապում էր ծովախտով և ի վիճակի չեր հատել Պա դե Կալե նեղուցը։ Այդ իսկ պատճառով ժամանում էր Փարիզ և իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում Լոնդոնի սակարանում եփվող նավթային գործերին։

Տեսնելով կրոնական տեսակետից հայոց անմիտքար վիճակը՝ Ալ.Մանթաշյանցը ծեռնամուխ է լինում գործի։ Նախ, Փարիզի կենտրոնում՝ ժամ Գուտոն փողոցի թիվ 15 հասցեում, 450 հազար ֆրանկով գնում է մի հողատարածք և ֆրանսիացի ճարտարապետ Ալբեր Գիլբերին պատվիրում ուսումնասիրել և նախագիծը պատրաստել Ախթամարի վանքի նմանողությամբ։ Շինարարությունն սկսվում է 1902թ. հուլիսի 14-ին։ Ֆրանսիայի անկախության օրը և ավարտվում 1904թ։ Յոկտեմբերի 2-ին՝ քարերարի ներկայությամբ, կատարվում է օժնան արարողությունը, և եկեղեցին՝ ի պատիվ Ալ. Մանթաշյանցի հոր, անվանվում է Ս. Յովիաննես Մկրտիչ։ Ապա քարերարը 120 հազար ֆրանկ նոտարական ծախս է վճարում ու եկեղեցին պաշտոնապես նվիրաբերում հայ համայնքին։ Շինարարության ողջ ժամանակաշրջանը կազմում է 1 մլն. 540 հազար ֆրանկ։ Ի գնահատումն Ալ. Մանթաշյանցի վեհանձնության, ֆրանսիական կառավարությունը նրան պարգևատրում է Պատվի լեգենդի շքանշանվ։ Ոչ միայն փարիզահայ համայնքը, այլև ամբողջ սփյուռքը, ունենում է ամենագեղեցիկ, շքեղ եկեղեցիներից մեկը։ Ս. Յովիաննես Մկրտիչ եկեղեցին դարձավ հայոց հոգու, մտքի, իղձերի հանգրվան, վերապրումի մեկնակետ, կորուստների և ամտերության փրկատեղի, ընբաստության ու պայքարի ծուրա:

Սակայն եկեղեցին պահել-պահպանել էր պետք, և հայոց կապիտալը շրայլորեն ի սպաս դրվեց։ Եկեղեցու ներսում կա բարերարների Պատվի պատ, ուր փորագրված է 150 անուազգանուն։ Դրանք ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ են, սակայն ակնհայտորեն աչքի են զարնում կապիտալի ներկայացուցիչները, ասենք, Պոլոս Նուբար փաշան, վաճառական ու բանաստեղծ Ռուբեն Ռիբերյանը, Ռաֆայել Մարկոսյանը, Արմենակ և Գաբրիել Շամբարձումյանները և այլք…

1917-1926թթ. Եկեղեցու հոգաբարձության անդամ էր Եվրոպական մակարդակի ակնավաճառ Սերովեն Սվաճյանը։ Նա Պոլսից տեղափոխվել և Փարիզում էր հաստատվել դեռևս 1887թ.։ Եղել էր ՀԲԸ Փարիզի մասնաճյուղի և Ուսումնասիրաց ընկերության նախագահ, ֆինանսապես աջակցել հայ ուսանողներին։ Առաջին աշխարհամարտի սկզբունք հիմնել էր Comite de secours aux Volontaires Arméniens կազմակերպությունը, որի նպատակն էր ֆրանսիական բանակի հայ զինվորների օժանդակումը։

Թեհրանցի խաչատուր Ներսեսյանը պատանեկան տարիքից աշխատել էր պարսից շահի ոսկերչանոցում: 1875թ.՝ 23 տարեկան հասակում, բնակություն էր հաստատել Փարիզում և ավելի քան 40 տարի առաջնակարգ դիրք զբաղեցրել թանկագին քարերի առևտուրի ասպարեզում: Երկու համախոհների հետ հիմնել էր Փարիզի հայոց մատուռը, երկար ժամանակ եղել նրա հոգաբարձության անդամը:

1922-1926թթ. եկեղեցու վարչական խորհրդի անդամ էր Աթանագինն էգմայանը (1847-1926): 19 տարեկան հասակում Կ. Պոլսից անցել էր Փարիզ և ընկերակցել Եղբայրներին՝ Տիգրանին ու Գարբիելին, որոնք զբաղվում էին թանկագին քարերի առևտուրվ: Եղբայրների մահից հետո դեկապարել է «Էգմայան» ֆիրման և բիզնեսը փոխադրել արդյունաբերական, արտադրական հենքի վրա: Սեփական հղացմամբ առաջին անգամ կիրարկել է հղկելու յուրահատուկ եղանակ, որի հետևանքով թանկագին քարերը կլորից բացի, ստացել են այլ ձևեր: Նրա արտադրանքը Փարիզի 1900թ. միջազգային ցուցահանդեսում արժանացել է Ոսկե մեդալի, իսկ 1904թ. Սենթ Լուիսի (ԱՄՆ) և 1908թ. Լոնդոնի ցուցահանդեսներում՝ Սեծ մրցանակների: 1902թ. «Էգմայան» հղկարանը տեղափոխվում է Փարիզի Նեյի արվարձանի նորակառուց գործարան (Լուի Ֆիլիպ փողոց, թիվ 20):

Կովկասի հայ փախստականների օժանդակ մարմնի համարառու ընդիանուր ժողովի ատենապետ Ա. Էգմայանը մահվանից առաջ Պողոս Նուբար փաշային հանձնեց 1 մլն. ֆրանկի կտակ՝ ազգանպաստ ծեռնարկների համար: (Ավելացնենք, որ այդ մեծ ազգասերի մահվանից հետո բիզնեսը շարունակեցին երկվորյակ որդիները՝ Միհրանը և Վահեն):

1925թ. փարիզահայ հանայնքում բիզնեսով զբաղվում էր 249 հոգի, որից 66-ը ակնավաճառներ էին, 7-ը՝ ակնատաշներ, 7-ը՝ նավթարդյունաբերողներ, 13-ը՝ ռեստորանատերեր, 15-ը՝ անտիկ իրերի վաճառականներ, 24-ը՝ գործարանատերեր, 27-ը՝ գորգավճառներ, իսկ 91-ը ընդգրկված էր վաճառականության տարբեր ոլորտներում: Բացի այդ, հայերին էր պատկանում իինգ քանիկ:

...Այսո, ֆրանսաբնակ հայերի համար ՀՀԴ. սկսվեց զվարք: Սակայն 1915թ. եղեռնը տակնուվրա արեց հայի ներաշխարհը, հոգեբանությունը, կերտվածքը: Զազարավոր մազապուրծ գաղթա-

կաներ փրկության հանգրվան գտան ֆրանսիական հողում: Չուտ առևտրատնտեսական, կրթաստաց համայնքը վերածվեց գոյապահանական գաղթավայրի: Տասնյակ քաղաքներում, ավաններում ու գյուղերում բնակություն հաստատեցին հայեր, որոնց ծշգրիտ թիվն իրականում ոչ ոք չգիտեր: Եթե Լիոնում հայերի մասին երբեւ որևէ տեղեկություն չկար, ապա 1925թ. նրանց թիվը 3000 էր, և զգալի մասն աշխատում էր «Քերլին» ավտոգործարանում: Եթե մինչև Առաջին աշխարհամարտը Մարսելում կար հիմնականում բիզնեսի ոլորտում ընդգրկված ընդամենը 400 հայ, ապա 1925թ. նրանց թիվը 13 հազար էր, որոնք ապրուստի միջոց էին վաստակում շաքարի ու կոշիկի գործարաններում:

Մտսավոր հաշվարկներով Ֆրանսիայում հայտնվեց 50 հազար գաղթականություն, որի առաջ ծառացավ մեկ խնդիր՝ ազգային գոյապահապանություն: Այս հիմնախմնդրի լուծնանը զինվորագրվեցին տասնյակ բարեգործական ու հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, վարժարաններ, որբախմամ ընկերություններ, տիկնանց ու երիտասարդաց միություններ...

Սկսվեց մաքառման ու վերապրումի շրջանը:

### Դայկական «սպիտակ շարժում»

Կուգենայինք խոսել մի երևույթի մասին, որն ուղղակիորեն առնչվում է հայոց կապիտալի ու Փարիզի հետ: Ինչպես հայտնի է, Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխության և դրանից հետո ծագած քաղաքացիական պատերազմի ժամանակ «սպիտակները» պարտվեցին ու վտարանդվեցին, հիմնականում Ֆրանսիա: Սակայն պայքարը բոլշևիկյան իշխանության դեմ չդադարեց, շարունակվեց տասնամյակներ շարունակ: Ահա այդ «սպիտակ շարժման» մեջ զգալի դերակատարություն ունեցան հայ կապիտալիստները, որոնք միաձուլվեցին փարիզահայ համայնքին և եական ներդրում ունեցան ազգապահպանության գործում:

Որոշ հայ պատմաբաններ խոսելով ռուսաստանաբնակ հայ կապիտալիստների վերջին նախահեղափոխական սերնդի մասին, մի միտք են արտահայտում, թե այն միաձուլվեց բուն ռուսական կապիտալին և կորցրեց իր ազգային դիմագիծը: Որքանո՞վ է իրավացի այս տեսակետը: Միանգամից ասենք, որ նման պնդումն

անընդունելի է, մակերեսային և իրականությանը չհամապատասխանող:

Նախ, ռուսաստանաբնակ հայ կապիտալիստն ապրում էր Ռուսական կայսրությունում և, բնականաբար, չեղ կարող գեր լինել Երկրի տնտեսական զարգացումներից, դուրս գտնվել քաղաքական գործընթացներից: Սակայն ավելի կարևոր է պատասխանել հարցադրման Երկրորդ մասին՝ Ռուսաստանի քաղաքատնտեսական զարգացումների օրինաչափություններին ենթարկվելով, արդյո՞ք հայոց կապիտալը կորցրեց իր ազգային բնույթը: Սա կարևորագույն, արդիական նշանակություն ունեցող խնդիր է:

Մենք քանից ասել, իինա էլ կրկնում ենք՝ բիզնեսը, որպես փող աշխատելու գործընթաց, ազգային հատկանիշներ չի կարող ունենալ (ընդ որում, սա ասում ենք որոշ վերապահումներով, քանզի XIXդ. Բաքվի նավթարդյունաբերությունում, այդուհանդերձ, ազգային պատկանելիության հատկանիշի վրա փող աշխատելու երևույթ գոյություն ուներ): Ազգային կարող է լինել կապիտալը՝ բիզնեսի արդյունքը, այսինքն պարզունականացված ասած, այն, թե դրամատերն իր փողն ի սպաս է դնում սեփական անձի՞, թե՝ սեփական ազգի շահերին:

Ռուսահայ կապիտալի բնութագրումը պարզելու համար հարկ է անդրադարձնալ ցարական Ռուսաստանի տնտեսության առաջատար ճյուղի՝ Բաքվի նավթարդյունաբերության երեք ականավոր, առանցքային դեմքերին, որոնք էին՝ Պողոս Դովսեփի Ղուկասյանը (Պավել Օսուսով Գյակաս), Լևոն Ալեքսանդրի Մանթաշյանը (Լեոն Ալեքսանդրովի Մանտաշև) և Ստեփան Գևորգի Լիանոսյանը (Ստեփան Գեօրգիևսի Լիանոզով):

1878թ. Բաղրյանը, Մադարյանը և ռուս Բ. դե Բուրը Բաքվում ստեղծում են «Կասապից ընկերակցություն» («Կասպիյսկոե տօարդիտեստվո») նավթարդյունաբերական և առևտրային ձեռնարկությունը: Նույն թվականից Շուշիից Բաքու է գալիս դպրոցավարտ Պողոս Ղուկասյանը, ծանոթանում նավթարդյունաբերությունը: Նույն թվականից Բաքու է գալիս դպրոցավարտ Պողոս Ղուկասյանը, ծանոթանում նավթարդյունաբերությունը, ապա 27 հազար ռուբլով նախ գնում Բաղրյանի մասնաբաժինը, հետո՝ Մադարյանինը և ինքն է ընկերակցում դե Բուրին: Տասը տարի անց նրանց ֆիրման արդեն այնքան եական կշիռ ուներ, որ 1,5 մլն. ռուբլի հիմնական կապիտալով վերածվում է բաժնետիրական ընկերության: Շուշիից գալիս են Պողոսի Եղբայրներ Արշակը,

Դակորը, Աբրահամը, և երբ 1888թ. վախճանվում է դե Բուրը՝ Ղուկասյանները ձեռք են բերում ֆիրմայի բոլոր բաժնետոնները և դառնում լիիրավ տերեր, այսինքն՝ նրանց բիզնեսը ձեռք է բերում ընտանեկան բնույթը: «Կասապից ընկերակցությունը», արդյունահանման ծավալներով և շահութաբերությամբ, մշտապես մնաց Ռուսաստանի նավթարդյունաբերական ձեռնարկությունների լավագույն հնգյակի մեջ:

Դետաքրքիր է Եղբայրների կենսուրին: Պողոսը 1890-1906թթ. ղեկավարեց նավթարդյունաբերական գլխավոր կորպորատիվ մարմինը՝ «Բաքվի նավթարդյունաբերողների համագումարը» (ԲՆՀ), և երբ տեղափոխվեց Պետերբուրգ, մեկ տարի անց նրա փոխարքեն ընտրվեց Արշակը և մինչ ի մահ (1917թ.) մեծ արդյունավետությամբ գլխավորեց ԲՆՀ-ն: Ամուրի Արշակ Ղուկասյանն իր ամբողջ կարողությունը՝ 8 մլն. ռուբլի արժողությամբ, կտակեց ազգին՝ կորպական նպատակներին ծառայեցնելու համար: Սակայն կտակն անիրազործելի մնաց, որովհետև բոլշևիկները բռնազավթեցին նրա ունեցվածքը: Դակոր Ղուկասյանը մինչ մահ (1919թ. հունվար) Բաքվի Զայոց Ազգային խորհրդի նախագահն էր: Աբրահամ Ղուկասյանը շարունակեց կրթությունը՝ Գերմանիայում համալսարան ավարտեց, ստացավ փիլիսոփայության դոկտորի աստիճան, բնակություն հաստատեց Լոնդոնում և դարձավ իրենց ֆիրմայի մշտական ներկայացուցիչը: Նա Փարիզի U. Շովիաննես Մկրտիչ Եկեղեցու 150 բարերարներից մեկն էր, նրա անունը փորագրված է Պատվո պատին:

Պողոս Ղուկասյանը դարձավ Ռուսական կայսրության ամենաերևելի ձեռնարկատերերից մեկը: Նա Բաքվում անցկացրեց առաջին ջրմուղը, որը արդյունաբերական նպատակներով ջուր էր մատակարարում գործարաններին, ստեղծեց «Կասապից մեքենաշինական գործարանը» և Բաքվի Էլեկտրաշինական արդյունաբերության հիմքը դրեց: Եթե 1906թ. Ռուսաստանի առևտրարդյունաբերական շրջանակներից Պետական խորհրդի 12 անդամ պիտի ընտրվեր, ծայների բացարձակ մեծամասնություն ստացավ Պ. Ղուկասյանը և տեղափոխվեց Պետերբուրգ: Այստեղ նա դարձավ համառուսաստանյան չափանիշների վեց խոշորագույն ընկերությունների վարչական խորհրդի անդամ:

Բոլշևիկյան հեղափոխությունից հետո Պ. Ղուկասյանը վտանդվեց Փարիզ և բնակություն հաստատեց Անրի Մարթեն պողո-

տայի թիվ 72 հասցեում: Մի հետորական հարց տանք՝ Ղուկասյանների կապիտալն ազգային բնույթ ուներ, թե՝ ոչ...

Հետո Մանթաշյանցի վերաբերյալ խոսքը սկսենք Շայկական սովետական հանրագիտարանի համապատասխան բառ-հոդվածից, որն ուղղակի թարգմանություն է Մոսկվայում լույս տեսած Խորհրդային պատմագիտական հանրագիտարանից: Այն ոչ միայն բազմաթիվ անշտուրյուններ և փաստական սխալներ է պարունակում (օրինակ, Մանթաշյանց, այլ ոչ թե Մանթաշյան, Ալ. Մանթաշյանցը ծնվել է 1842-ին, այլ ոչ թե 1849-ին, «Ա. Ռ. Մանթաշյանց և ընկ.» առևտրական տաճ վարչությունը Պետերբուրգ է տեղափոխվել ոչ թե 1913-ին, այլ 1912թ. հոկտեմբերի 7-ին, Ալ. Մանթաշյանցը Մայր տաճարը չի նորոգել, կառուցել է վեհարանի շենքը և այլն), այլև նպատակ է հետապնդում կոխկրտել Ալ. Մանթաշյանցի ու նրա որդիների հիշտակը, գեղեցիկ պատմությունը:

Ինչու է այս բառ-հոդվածը գետեղվել ՀՍԴ-ում: Միայն ու միայն գաղափարախոսական նկատառումներով: Միայն ու միայն մեծ հայորդու նկատմամբ ներ ժողովրդի ենթագիտակցական, կոծկված սերն ու հարգանքը նսենացնելու նպատակով:

Սակայն պատմական ճշմարտությունը միանգամայն այլ է:

Նոր մահից հետո բիզնեսի ղեկավարությունն ստանձնեց Հետո միանգամայն այլ մտածողության, այլ աշխարհայացքի տեր մարդ: Նա հասկանում էր, որ բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ են ֆինանսական նոր, խոշոր ներդրումներ, իսկ դրանք կարող էին տրամադրել օրավոր զորացող ռուսական բանկերը և ուղղակի շահ ունեցող անգլիական կապիտալը: Դա էր պատճառը, որ նա ավելացրեց Ֆիրմայի հիմնադիր կապիտալի չափը, թողարկեց նոր բաժնետոմսեր, որոնց մեջ մասին տիրեցին ուսւ բանկատերերը, անգլիացիները, ինչպես նաև մերձավոր գործընկեր Ստեփան Լիանոսյանը: Այս, Մանթաշյանցը օրգանապես միահյուսվեց կայսրության խոշոր կապիտալին, վերացրեց իրենց բիզնեսի ընտանեկան բնույթը, սակայն դա ամենակին անձնատուր լինել չէր, ինքն անձամբ ծեռք բերեց բազմաթիվ ֆիրմաների բաժնետոմսեր, դարձավ զանազան ընկերությունների վարչական խորհրդի անդամ: Բոլշևիկյան հեղափոխությունը Լ. Մանթաշյանցի համար վերածվեց անձնական ողբերգության, նա կորցրեց պապի, հոր և իր վաստակած վիթխարի կապիտալը:

Ուստի գրող Ալեքսեյ Տոլստոյը «Վտարանդիներ» վեպում փարիգաբնակ Լ. Մանթաշյանցին բնութագրում է «անբան», «վատնող», «խորոված սարքող հայ» բառերով, նկարագրում նրա կերուխուները, զվարճանքները և ներկայացնում որպես շարքային բախտախմնդիր: Ա. Տոլստոյի այսպիսի վերաբերմունքը հասկանալի էր ու բացատրելի՝ Լ. Մանթաշյանցը քաղաքական թշնամի էր:

Իսկ ինչպիսի վերաբերմունք ուներ «խորոված սարքող հայը» սեփական ժողովրդի հանդեպ: Նա 1914թ. 300 հազար ռուբլի նվիրաբերեց Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցի նոր շենքի կառուցման համար, Բորչալուի գավառում 3 դեսյատին հողատարածք գնեց ու հատկացրեց գյուղատնտեսական գիտական փորձարկումներ կատարելու նպատակով, 20 հազար ռուբլի հատկացրեց Ներսիսյան դպրոցին, 15 հազար ռուբլի՝ Դայկական դրամատիկական ընկերությանը: 1917թ. նույն դրամատիկականին տրամադրեց 5000 ռուբլի «կյանքի բանկացման պատճառով արտիստների ռոճիկը բարձրացնելու համար»: Իսկ 1918թ. նորաստեղծ Դայաստանի առաջին Դանրապետության համար գնեց և նվեր ուղարկեց... մի անբողջ սանհիտարական գնացք, որը ճամփին անհետացավ և այդպես էլ տեղ չհասավ:

Ես մեկ հետորական հարց՝ Լ. Մանթաշյանցի կապիտալն ազգային էր, թե՝ ոչ...

Ալ. Մանթաշյանցից հետո ուսական նավթարդյունաբերության անթագակիր արքա դարձավ Ստեփան Լիանոսյանը: Ընդ որում, դա կատարվեց այնպիսի անհավատալի, սրբնթաց արագությամբ, որ դրա հեղինակը կարող էր լինել միայն բացառիկ ընդունակությունների, տաղանդի, կազմակերպչական անուրանալի ծիրքի տեր մարդը: Նրա հայրը Բաքվում մի քանի նավթադաշտ էր գնել, որոնց շահագործումը սակայն եական դերակատարություն չուներ, պարզապես կապիտալի ներդրում էր: Նոր մահից հետո (1906թ.) գործի գլուխ անցավ Ստեփանը ու 2 մլն. ռուբլի հիմնադիր կապիտալով ստեղծեց «Գ. Մ. Լիանոսյանի որդիներ» նավթարդյունաբերական և առևտրային ֆիրման:

Ստ. Լիանոսյանի բիզնեսի զարգացումն այնքան արագընթաց էր, որ ուղղակի ապշել կարելի էր: Յոթ տարվա ընթացքում, ներգրավելով ուսական բանկերի և օտարերկրյա ընկերությունների ֆինանսական միջոցները, նա իր ֆիրմայի հիմնադիր կապիտալը հասցրեց 30 միլիոնի: 1912թ. հուլիսի 28-ին 14 գործընկեր-

Ների հետ (որոնց թվում էր և Պ. Ղուկասյանը) Լոնդոնում հիմնեց Russian General Oil Corporation միջազգային խոշորագույն տրեստը, որի կողմանը կազմում էին իր, «Ա. Յ. Մանթաշյանց և ընկ.» և S. Բելոզերսկու «Նեֆտ» ֆիրմաները: 1913թ. նա գերմանացի կապիտալիստների հետ համատեղ 1 մլն. մարկ հիմնադիր կապիտալով Դամբուրգում հիմնեց Deutsche Lianozoff Minerarol Import Act. Ges. ընկերությունը: Ես երկու տարվա ընթացքում համանձան ընկերությունների հիմնեց Անգլիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Բացի այդ, դարձավ 15 խոշորագույն ընկերությունների վարչական խորհրդի անդամ:

Ինչ վերաբերում է ազգակիցների հետ բիզնես վարելուն, ապա ասենք, որ Ստ. Լիանոսյանն իր կորպորացիայում (որի անվանական դեկավարը Ռուս-ասիական բանկի վարչական խորհրդի նախագահ Ա.Պուտիլովն էր) ընդգրկել էր մեկ տասնյակի չափ հայապատկան նավարդյունաբերական ծեռնարկություններ: Այսինքն, մի կողմից՝ հայկական ծեռնարկությունները եռանդուն կերպով ներգրավվում էին միջազգային բիզնեսի մեջ, դառնում առաջատար, մյուս կողմից՝ ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա բիզնես վարելու միտումը պահպանվում էր:

Ի տարբերություն շատ հայ կապիտալիստների, Ստ. Լիանոսյանը հեշտուհանգիստ չհամակերպվեց բոլշևիկյան հեղափոխության հետ: Նա գեներալ Յուդենիչի հետ Ռևոլում (Տալլին) ստեղծեց Հյուսիս-արևմտյան հանրապետությունը՝ լինելով վարչապետ, արտաքին գործերի ու ֆինանսների նախարար: Սակայն երբ Յուդենիչի բանակը 1919թ. պարտվեց, Լիանոսյանը տարագրվեց Փարիզ և բնակություն հաստատեց Շանզ էլիզե թիվ 125 հասցեում:

Ազգային էր, արդյոք, Ստ. Լիանոսյանի կապիտալը: Բավկական է ասել, որ տասնամյակներ շարունակ Լիանոսյանները կանոնավոր ֆինանսական գգալի աջակցություն են ցույց տվել Բաքվի Շայոց մարդասիրական ընկերությանը:

Երբ Ֆրանսիայի մայրաքաղաքը դարձավ «սպիտակ շարժման» կենտրոն, հայրենիքից, սերնդե-սերունդ անասելի ճիգ ու ջանքով, աշխատասիրությամբ վաստակած ինչքից զրկված նախկին հայ ծեռնարկատերերը միացան ռուսական կապիտալի այլ ներկայացուցիչների հետ և կատաղի պայքար ծավալեցին խորհրդային իշխանության դեմ: 1925թ. նրանք ստեղծեցին «Տորգարոն»

հակաբոլշևիկյան կազմակերպությունը, որի կենտրոնի նախագահն էր Ն. Դենիսովը, անդամներ՝ Գ. Նորելը, Աբրահամ Ղուկասյանը, Ստ. Լիանոսյանը, Լ. Մանթաշյանը և այլք: Այդ կազմակերպությունը, որ իրատարակում էր նաև «Վօզրօշենիւ» թերթը, գոյատևեց և ԽՍԴՀ-ի դեմ պայքարեց ընդոհուպ մինչև 1940թ., երբ Փարիզն օկուպացրեց ֆաշիստական Գերմանիան:

Դժբախտաբար, հայկական «սպիտակ շարժումը» դեռևս կարուտ է լրջագույն ուսումնասիրության:

Ավարտելով սույն ակնարկը, մենք գիտակցաբար չենք անդրադանում Պողոս Նուբար փաշային, Գալուստ Գյուլբենկյանին<sup>1</sup> և այլոց, քանզի նրանց նասին շատ է գրվել ու խոսվել, իսկ մեր նպատակն էր բացել այլ շերտեր:

Անփոփելով, փաստենք. ֆրանսաբնակ հայ ծեռնարկատերը հիմնականում ներկայացնում էին Արևմտյան Շայաստանը, Պարսկաստանը և վիլուզված Ռուսական կայսրությունը: Ինչպես արդեն վերևում ենք ասել, լինելով տարբեր սովորությունների ու բարքերի տեր մարդիկ, տարբեր քաղաքակրթությունների կրողներ, նրանք ունեին մեկ ընդհանրություն՝ հայ էին և միավորված էին մեկ գաղափարի շուրջ՝ պահպանել ազգային ինքնությունը և վերապրել հանուն Արդարության:

**Վաճառական Անտոնը եղել է առաջին հայը, ով 1625թ. ընդունել է ֆրանսահպատակություն:**

**XVII-XVIIIդդ. ֆրանսիացիներն Արևելքի բոլոր քրիստոնյաներին անվանում էին հայ:**

**Ալ. Մանթաշյանը 1900թ. մի կիրակի այցելում է Փարիզի հայոց մատուռ: Տեսնելով կիսանկուղում գտնվող աղոթատան խղճակի վիճակը, պատարագից հետո մոտենում է Կումշապուհ ավագ քահանա Քիպարյանին և ասում.**

**– Տերտեր ջան, բա մեզ սազակա՞ն է, արի մի 40 հազար ֆրանկ տամ մի եկեղեցի շինեցեք:**

<sup>1</sup> Պ. Նուբարի և Գ. Գյուլբենկյանի նասին ավելի մանրանասն տե՛ս մեր «10 կապիտալիստ» գրքում:

Սակայն նման գումարով եկեղեցի կառուցելն անհնար էր: Տեղմուտեղը խոստանում է 80 հազար, նույն օրը երեկոյամ՝ 120 հազար: Բայց համոզվելով, որ դա էլ բավարար չէ՝ ինքն է ծեռնամուխ լինում Ս. Շովիաննես Մկրտիչ եկեղեցու կառուցմանը:

Ալ. Խատիսյանի թիկնապահը՝ Սուլենը, թիֆլիսի հայտնի միլիոնատեր Յամբարձում Մելիքյանի որդին էր: Տարագրվելով Ֆրամսիա, Դ. Մելիքյանը 1927թ. Փարիզում հիմնել էր «Շիրակ» անունով օղու եւ գինու երեք խանութ:

## ԲԵԼԳԻԱ

(միջնադար - XXդ. առաջին քառորդ)

Դայերը առևտրականների ազգություն են և անում են ամենաընդարձակ առևտուրը, ավելի, քան որևէ այլ ժողովուրդ: Նրանք տարածվել են ամբողջ Արևելքում, արտակարգ մեծ առևտուր են վարում Ռուսաստանում և իրենց ազգից ներկայացուցիչներ ունեն Եվրոպայի առևտրական խոշոր քաղաքների մեծ մասում: Մի խոսքով, նրանք առևտուրի մեջ հրեաների չափ նշանավոր են: Սակայն նրանց համբավին անհումորեն նպաստող հանգամանքը առևտուրի նրանց կերպն է և միջնորդի իրենց գործելակերպը, որ նրանց նկարագիրը դույզն իսկ չի խաթարել: Ժուժկալությունը և ուղղամտությունը, որովհետև նրանք եռամդուն են, համեստ և ինքնարավ, համեստ շահով բավարարվում են և ժառայում են հավատարմորեն, եղբոր նման սիրում են մեկմեկու, իսկ երկրներին, ուր հաստատվել են, չափազանց օգտակար են:

Զո՞ն Յարիս  
անգլիացի ճանապարհորդ, 1748թ.

Եվրոպական այս երկիրն իր անվանումն ստացել է հնամենի ժամանակներում այստեղ բնակվող բելգ ցեղից: Ք.Ժ.Ա. I դարում Շոռնը նվաճեց Բելգիան և դարձրեց կայսրության գավառներից մեկը՝ Provincia Belgia: Նետագյում երկրին տիրեցին Իսպանիան, ավստրիական Յաքսուրդամերը: XVIIIդ. քաղաքացիական պատերազմ ժագեց, որի հետևանքով հյուսիսային գավառներն անջատվեցին և հիմնեցին ինքնուրույն պետություն Շոյանդիան:

Բելգիա ուտք դրած առաջին հայը «պաշտոնապես» համարվում է Անտիոքի Մակար Եպիսկոպոսը: Նա ծնվել է 970թ., ազնվականի ընտանիքում: Արդեն 25-ամյա հասակում ծեռնադրվում է Եպիսկոպոս, իսկ փառքը, որպես հրաշագործ, տարածվում է ամենուր: Նա ստիպված եղավ Անտիոքից փախչել Երուսաղեմ, ուր հավատքի համար դաժան չարչարանքների ենթարկվեց: Այդեղից անցավ Գերմանիա, իսկ 1011թ. Եկավ Գենտ, ուր սկսեց զբաղվել քարոզչությամբ: Մեկ տարի անց բելգիական այս քաղաքում ժամտախտ բռնկվեց: Շրաշագործ Մակարը խնամում, բուժում էր

հիվանդներին, սակայն ինքն էլ վարակվեց ու մահացավ: Չոռմի Եկեղեցին ընդունեց հայ Եպիսկոպոսի հրաշագործ լինելը, նրան դասեց սրբերի շարքը և արժանացրեց Գենտի Եկեղեցու խորանում թաղվելու պատվին: Սուրբ Մակարի օրը մտավ լատին Եկեղեցու տոնացույցի մեջ, և ցայսօր ամեն տարի ապրիլի 10-ին նշվում է Sant Macarius-ի տոնը:

Հայ-բելգիական «կանոնավոր» ծանոթություններն սկիզբ են առնում խաչակրաց արշավանքներից: Ս. Երուսաղեմն անհավատ-ներից ազատագրելու պայքարի Ելածների մեջ առաջնությունը պատկանում էր թիկնոցներին կանաչ խաչ կրող բելգիացիներին: 1096թ. առաջին արշավանքի ժամանակ Գոդֆրուա դը Բույոնի գլխավորությամբ բելգիացիներն ու մյուս Եվրոպացիները ոտք դրեցին Կիլիկիա, որը դարձավ նրանց հավատակից աջակիցը: Յետագա վեց արշավանքների ժամանակ կիլիկեցիների ու բելգիացիների փոխհարաբերություններն այնքան սերտացան, որ անգամ «ամրագրվեցին» ամուսնական հարաբերություններով՝ Ոուրինյան Կոստանդինի որդի Լևոնը կնության առավ Բոդրուն ոյու Բուրգի դատերը, իսկ Լևոնի աղջիկն ամուսնացավ ժուլենի հետ:

Հայ-բելգիական դաշնակցային հարաբերությունները շատ արագ ձեռք բերեցին տնտեսական բնույթ: Խաչակիրների հետ գալիս էին նաև մեծարիվ վաճառականներ, որոնք առևտրատնտեսական բուռն գործունեություն ծավալեցին Կիլիկիայում: Հայկական թագավորությունը խոշոր առևտրական օլակ էր Արևելքի ու Եվրոպայի միջև: Միջին դարերում Ասիայից բազմատեսակ ապրանքներ էին բերվում Միջերկրական ծովի Տյուրոս, Աքեա, Բեյրութ, Տրիպոլի նավահանգիստներ՝ այդտեղից Եվրոպա փոխադրելու համար: Ծայրագույն Արևելքից Աիլա և Ադեն նավահանգիստներ էին հասցվում չինական հախճապակի, գորգ, մուշտակ, մարգարիտ, մետաքս, բուրումնավետ յուղեր և այլն, որոնք քարավաններով տեղափոխվում էին Միջերկրականի ծովեզերը: Մի շարք քաղաքներում իիմնվել էին արհեստագործական ձեռնարկություններ, որտեղ հումքը վերաճակելով ստանում էին Եվրոպական գործածնան արտադրանք. Անտիքում ու Տրիպոլիում՝ մետաքս գործվածքեղեն, Երուսաղեմում՝ ոսկերչական իրեր, Տյուրոսում՝ շաքար ու քաղցրավենիք, Ներքոնում՝ ապակեղեն և այլն: Նորանոր խաչակիրներ և պարենային մատակարարում բերող

իտալական ու բելգիական նավերը ետ էին դառնում վերոհիշյալ զարմանազան արևելյան ապրանքներով բեռնավորված:

Բնականաբար, հայ վաճառականները չեին կարող անհաղորդ մնալ միջազգային խոշորագույն այս առևտրական գործընթացին: Նրանք սկսեցին նախ միջնորդավորված, ապա ուղղակիորեն Եվրոպա արտահանել բուրդ, բամբակ, Փոքր Հայքից պղինձ ու երկաք, գինի, չամիչ, չիր, կաշի, ամենատարբեր կենդանիներ՝ ծի, ջորի, ուղտ, ավանակ, այծ, գոմեշ և այլն: Սակայն հայոց ամենագլխավոր ապրանքատեսակն, անշուշտ, մետաքսն էր. Կիլիկիայում դա այնքան շատ ու տարածված էր, որ հասարակ մարդիկ անգամ մետաքսն հագուստ էին կրում, այնինչ Եվրոպայում այդպիսի ճոխությունը հասու էր միայն ամենաունարներին:

Շուտով Միջերկրական ծովի ասիական ափի ամենանշանավոր պահեստարան ու փոխադրակենտրոն դարձավ Այասը՝ Կիլիկիայի տնտեսական սիրտը, որը խամրեցրեց մյուս նավահանգիստների համբավը: Այս սկսեցին Երթևեկել իտալացիներ, հույներ, ֆրանսիացիներ, իսպանացիներ, պորտուգալացիներ, ինչպես նաև բելգիացիներ, որոնք այստեղ էին հասնում Բրյուժ նավահանգստից:

Բրյուժը (կամ ֆլամանդերեն՝ Բրյուգեն) գտնվում էր հարմար ու ապահով Զվինել ծովախորշում: Ունենալով աշխարհագրական շահավետ դիրք Ֆրանսիայի, Անգլիայի ու Գերմանիայի միջև, Ֆլանդրիա գավառի այս քաղաքը XI-XVդդ. դարձավ Եվրոպական առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը: Անգլիայից այստեղ էին բերում բրդե կտորեղեն, Ռուսաստանից՝ մորթի-մուշտակեղեն, Շունգարիայից ու Բոհեմիայից՝ մետաղներ և ապակեղեն, Իսպանիայից՝ կենցաղային զանազան իրեր և այլն: Բրյուժը նաև ֆինանսական կենտրոն էր, որտեղ իրականացվում էին խոշոր դրամական գործարքներ: Պատահական չէ, որ «Տյուսիսային Վենետիկ» անվանվող այս քաղաքում բնակչության գերակշիռ մասը օտարերկրացիներ էին՝ աշխարհի տարբեր ծագերից այստեղ հայտնված այլազգի վաճառականներ:

Այդ ժամանակները վերլուծելով՝ Ա. Զիվելեգովը դեռևս 1904թ. գրում էր. «XIII-ի կեսերին սկսվում է Ֆլանդրիայի ծաղկման շրջանը: Բրյուժեն դառնում է Արևմուտքի ամենաաշխույժ նավահանգիստներից մեկը: Ամենատարբեր ապրանքներ, որոնց մեջ աչքի էնկանում տեղական արտադրության մահուդներ, առատուր-

յամբ զարմացնում էին պատահական այցելուներին: XIIIդ. վերջին կազմվեց ապրանքների մի ցանկ, որոնք Բրյուգե էին թերվում տարրեր երկրներից: Այդտեղ գրանցված են 34 երկրներ, ընդ որում հիշատակված չեն ոչ Ֆրանսիան, ոչ իտալական քաղաքները, որոնց հետ հարաբերություններն ավելի սերտ էին, քան թվարկվածներից որևէ մեկի: Այդ ցանկում են Անգլիան, Շոտլանդիան, Իռլանդիան, սկանդինավյան երկրները, Ռուսաստանը, Լեհաստանը, Դունագարիան, Չեխիան, իսպանական իշխանապետությունները, աֆրիկյան էմիրությունները, Կոստանդնուպոլիսը, սիրիական նավահանգիստները, Հայաստանը (ընդգ. մերն է: Խոսքն, անշուշտ, Կիլիկյան Հայաստանի մասին է – Խ.Դ.), Թաթարստանը, ընդ որում, յուրաքանչյուրի կողքին թվարկված են այն ապրանքները, որոնք թերվում են Ֆլանդրիա, իսկ վերջում ավելացված է: «Ոչ մի երկիր ապրանքների առաստությամբ չի կարող համեմատվել Ֆլանդրիայի հետ»<sup>1</sup>: Դավելենք, որ Ա. Զիվելեգովը, հավանաբար, օգտվել է Փարիզի Ազգային գրադարանում պահպող մի վավերագրից, որտեղ Հայաստանից թերված ապրանքներից նշված են բանբակը, պղպեղը, ուրիշ համեմունքներ «և բրեսիսը, որ ներկելու փայտ է»<sup>2</sup>:

Բրյուժում հայ վաճառականների ներկայությունը շարունակվեց հետագայում ևս: Արդեն 1358-1360թթ. բազմաթիվ վաճառականներ կայուն բնակություն հաստատեցին և առևտրական լայն գործունեություն ծավալեցին. իրենց թերած ապրանքների դիմաց նրանք գնում էին տեղական գործվածքներ, այլ երկրների տարրեր ապրանքներ և դրանք տանում կամ առաքում էին Միջերկրականի ասիական նավահանգիստներ: Բրյուժում միջազգային առևտրով զբաղվող բոլոր ազգերի ներկայացուցիչներն ունեին իրենց «ազգային տները», որ կոչվում էին լոժա (loges): Հայերը նույնպես ունեին իրենց լոժան կամ «Հայ տունը», որը կանգուն մնաց մինչ XIII դար:

Սակայն Բրյուժի միջազգային փառքը երկար չտևեց. XVդ. վերջերին ծովախորշը լցվեց ավագով, նավերը գրկվեցին քաղաքին մոտենալու հնարավորությունից, և նավահանգիստը կորցրեց իր առևտրական նշանակությունը:

<sup>1</sup> Дживелегов А., Торговля на Западе в средние века, СПб., 1904г., с. 177.

<sup>2</sup> Le Grand d'Aussy, Fabliaux, Paris, 1829, p. 8.

Դետագա դարերում հայոց այցելությունները Բելգիա, հավանաբար, դրվագային, անկանոն բնույթ են կրել, քանզի տեղեկությունները խստ սուր են: Դայտնի է, օրինակ, որ 1708թ. վախճանվել և Անվերսի (Անտվերպեն) U. Աստվածամոր մայր տաճարի խորանի առջև է թաղվել Թովմաս արքեպիսկոպոս Վանանդեցի Նուրիջանյանը:

1895-1896թթ. Արևմտյան Հայաստանում համիդյան ջարդերը պատճառ դարձան բնօրրանից հայոց զանգվածային արտագաղթի: Մի փոքրաբիվ խումբ էլ հայտնվեց Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում և Անվերս նավահանգստում, ինչի հետևանքով մինչև Առաջին աշխարհամարտը ծևավորվեց շուրջ 50 արևմտահայ վաճառականներից բաղկացած զուտ առևտրատնտեսական համայնք: Ցեղասպանությունից հետո թվաքանակը կտրուկ աճեց և հասավ 1000-ի, ընդ որում, 1917թ. հետո արևմտահայերին համարեցին կովկասահայերը, ի մասնավորի թիֆլիսից կապիտալիստները, որոնք ստիպված էին բոլշևիկյան աղետից փրկել տասնամյակների տքնանքով վաստակած իրենց դրամագլուխները:

Մշշափ հետաքրքիր է համայնքի տնտեսական բնութագիրը: 1926թ. տվյալներով, տարբեր տարիքի երկսեռ 1000 հայից բիզնեսով զբաղվում էր 100 տղամարդ, որոնք ընդգրկված էին տնտեսական գործունեության երեք հիմնական ոլորտներում ծխախոտարդյունաբերության, ակնագործության և գորգավաճառության մեջ:

Թիվ 1 բիզնեսը ծխախոտարդյունաբերությունն էր. բավական է ասել, որ 86 վաճառականներից 42-ը զբաղվում էին ծխախոտի առևտրով, իսկ 14 հայապատկան գործարաններից 12-ը ծխախոտարդյունաբերական էին: Դրանցից ամենանշանավորներն էին Անվերսի «S. Զամքերթեն և ընկ.» «Արաքս» գործարանը ու Բրյուսելում գործող Ա. և Յ. Գոյունճյան եղբայրների «Ելմասը» (Elmas, 20 առ. du Roi, 69 ր. du Pont), Դավիթ Մարյանի «Տավուսը» (Davros, 18 ելվ. Liopold II), Տիգրան Մուրադյանի «Կարսը» (Kars, 131 ելվ. de Waterloo), Անտոն Մաթոսյանի «Մարուֆը» (Marouf, 211 առ. de la Reine), նախկին թիֆլիսից, Հայաստանի առաջին Հանրապետության երբեմնի ֆինանսների նախարար Արտաշես Էնֆիաճյանի «Էնֆին» (Enfi, 188 ր. Massai): Սրանցից բացի, կային ծխախոտարդյունաբերական այլ ծեռնարկություններ ևս: Այսպես, Բրյուսելում Ալեքսան Մաթոսյանն ուներ խավաքարտի (կարտոնաժ), Պալըք-

յան Եղբայրները՝ սիգարետի ժապավենի, Անվերսում՝ Ժ. Նիգորյանը, S. Սալամանյանը՝ խավաքարտի, իսկ Տեր-Սահակյանը՝ սիգարետի տուփերի արտադրության գործարաններ:

Զարմանալի օրինաչափություն էր աչքի զարնում թիզնեսի մյուս երկու հիմնական տարատեսակների՝ ակնագործության և գորգավաճառության հարցում. եթե առաջինը կենտրոնացած էր Անվերսում, ապա երկրորդը՝ Բրյուսելում: Այսպես, եթե 1926թ. մայրաքաղաքում կար ընդամենը 3 ակնագործ (Գասապյան Եղբայրներ և Շ. ճշմարտախոսյան), ապա գորգավաճառների թիզը 19 էր (Օ. Արգուման, Գաբրիելյան, Շ. Գանանյան, Կ. և Տ. Գարաբեկյան Եղբայրներ, Լ. Գոլագոյան, Կ. Զարդարյան, Ա. Էմիրյան, Զ. Ղաճյան, Զ. Մաճառյան, Զ. Մալեզյան, Շ. Ոսկյան, Ե. Պազիր, Շ. Սարաճյան, Շ. Սիմոնյան, Տեվեր, Փափազյան Եղբայրներ, Շ. Փաշինյան): Եվ, հակառակը, եթե Անվերսում կար ընդամենը 5 գորգավաճառ (Շ. Խարայելյան, Շ. Գյումուշյան, Մաղաքյան, Ն. Վրույր, Ա. Քյոսելեցյան), ապա 18 հոգի զբաղվում էր ակնագործությամբ (Շ. Ալբունյան, Շ. Բարթիկյան, Ա. Թոքատյան, Մ. Իփեքյան, Վ. Կյումուշյան, Շ. Ղամամճյան, Գ. Ղամբարձումյան, Ա. ճանիկյան, Գ. Մագսետյան, Բ. Միրտիկյան, Վ. Մարյան, Ա. Չովակիմյան, Լ. Պաքըրճյան, Շ. Պարոնյան, Գ. Պասմաճյան, Գ. Սահակյան, Ա. Սիրակյան):

Մեր ընդգրկած ժամանակաշրջանի ամենաականավոր բելգիակայ Տիգրան Զամբերենն է (? Եվրոկիա-1942, Նիս): Նա ծննդավայրից արտագաղթում է Կ. Պոլիս, ապա 1896թ. ջարդի ժամանակ տարագրվում Ալեքսանդրիա, ուր մեկ տարի ղեկավարում է «Գ. Սանոսյան» ծխախոտի ֆաբրիկան: Հմտանալով գործի մեջ՝ Տ. Զամբերենն մտադրվում է ինքնուրույն թիզնես հիմնել, սակայն եգիպտոսում դա անելը շատ դժվար էր, որովհետև հայ ծխախոտարդյունաբերողները գրավել էին շուկան, և մրցակցությունը խիստ մեծ էր: Այդ իսկ պատճառով մեկնում է Սուդան և իշխանություններին առաջարկում ծխախոտի նոր տեսակ աճեցնել: Նրան տրամադրում են փորձադաշտ, ուր մի քանի տարվա տքնաջան աշխատանքից հետո փայլուն արդյունքի է հասնում: Սակայն կառավարությունը յուրացնում է ծխախոտի այդ նոր տարատեսակը: Այնժամ Տ. Զամբերենն դատական հայց է ներկայացնում ընդդեմ Սուդանի կառավարության և դատը շահում: Որպես վնասի փոխհատուցում ստանալով պատկառելի գումար՝ նա 1900-ական թթ. տեղափոխվում է Բելգիա և Անվերսում հիմնում «Տ. Զամբերեն և

ընկ.» ֆիրմայի «Արաքս» խոշորագույն ծխախոտարդյունաբերական համալիրը (Arax, 15r. General Capiaumont, Berchem):

Տ. Զամբերենը խորապես ազգասեր մարդ էր. 1910թ.-ից թիզ Անվերսի մասնաճյուղի ատենապետն էր, 1914թ. Բարեգործականին հատկացրեց 500 օսմանյան ոսկի: 1919թ. նշանակվեց ՇՇ հյուպատոս Անվերսում, իսկ անկախության կորստից հետո աջակցեց Խորհրդային Հայաստանին՝ 20.000 ֆրանկ հատկացրեց Նոր Եվրոպի ավանի կառուցմանը, 50.000 ֆրանկ տրամադրեց Երևանի Գյուղատնտեսական բանկին՝ բաժնեկից դառնալու պայմանով, սակայն ետ չստացավ ոչ բաժնետոմսերը, ոչ շահութատոկոսները, ոչ դրամագլուխը... Բայց Տ. Զամբերենը չվկատվեց. 1931թ. 15.000 ֆունտ ստերլինգ նվիրաբերեց հայ ուսանողական հիմնադրամներին, ինչի համար հոչակվեց թիզ բարերար-անդամ: 1930-ական թթ., առաջացած տարիի պատճառով թիզնեսից ետ քաշվեց, տեղափոխվեց ֆրանսիական Նիս, որի հայոց համար մատուռ կառուցեց և կնքեց մահկանացուն:

Կուգենայինք պատմել բելգիակայ համայնքի ազգասեր մարդկանցից ևս մեկի՝ Կահան Խորասանճյանի մասին: Նա ծնվել է 1873թ. Կ. Պոլսում, նախնական կրթությունն ստացել Բերայի Նարիկյան վարժարանում, 14 տարեկան հասակից մտել առևտրի ասպարեզ և, որպես հանճնակատար, ծառայության անցել Երկարեղենի թիզնեսով զբաղվող մի հայկական ֆիրմայում: 1896թ. հետո ստիպված տարագրվել է Ալեքսանդրիա, ապա 1904թ. իհմնել սեփական թիզնեսը՝ զբաղվելով Երկարեղենի առևտրով ու Եվրոպայից պարարտանյութ ներմուծելով: Նետագայում տեղափոխվել էր Բելգիա և բնակություն հաստատել Բրյուսելի Եմիլ Ժակմեն բուլվարի թիվ 50 հասցեում: 1906թ. բելգիական ու ֆրանսիական դրամատների օժանդակությամբ հիմնել էր Societe Anonyme d'Enterprise Commerciales en Egipte ընկերությունը, զգալիորեն ընդգրակելով թիզնեսը, հատկապես՝ եգիպտոսի հետ: Եգիպտա-բելգիական տնտեսական կապերի զարգացման համար նա Բելգիայի կառավարության կողմից պարզեցվեց «Լեռապոլդ», իսկ եգիպտական կառավարության կողմից՝ «Մեծիդիե» շքանշաններով: Վ. Խորասանճյանը հիմնադրեց «Արմենիա» հայրելգիական երաժշտական ընկերությունը, իսկ 1933թ. 2,5 մլն. ֆրանկով կառուցեց Մարսելի Ա. Թարգմանչաց հայոց Եկեղեցին...

## ԱՆԳԼԻԱ (XIIդ.-XXդ. առաջին քառորդ)

Դժվար է գտնել մի ժողովուրդ, որի տարեգրություններն առավել նվազ թարախված լինեն հանցագործությունների մեջ, քան հայերինը, որոնց առանձնակիրությունը բարությունն ու խաղաղասիրական հատկություններն են, իսկ արատները բռնությունների հետևամբ:

Լորդ Չորջ Բայրոն

Ներկայացնենք երկու կարծիք Անգլիայի և անգլիացիների մասին: Մեկի հեղինակը լոնդոնահայոց հոգևոր հովիվ Աբել ծ. Վրդ. Նազարյանն է, ով 1922թ. գրել է. «Եվրոպայի զանազան երկրներում եղած մարդը լավ գիտե, որ տեղական լեզվին անծանոթ օտարականը ոչ մի տեղ իրեն այնքան քիչ ճնշված և ապահով չի գտում, որքան Անգլիայում»:

Մյուս կարծիքը 1943թ. հայտնել է հայագետ Յարություն Քյուրությանը. «Անգլիացոց հոխորտ, այլամերժ, եսասեր նկարագիրը, մանավանդ արևելքցիներուն վրա վերեն նայող, տիրական, նախընտրելի ընթացքը սկիզբեն իսկ գիրենք համակրելի ըրած չեր հավասարապես հայուն, պարսիկին կամ թուրքին... Սկիզբեն իսկ անգլիացիք համայնակուլ, համայնակողոպսիչ խրտչեցնող ընթացք մը ցույց տված են, որ բնական է ոչ մեկ կերպով հաճելի պիտի ըլլար նրբակյաց և խորամանկ արևելքցիներուն»:

Այս երկու դիրքորոշումներից ո՞րն է ճշմարիտ ու արդարացի: Ըստ մեզ, երկուսն էլ տարբեր մոտեցումների ծայրահետ դրսնորումներ են՝ ճշմարտանանության տարրերով: Ժողովուրդների փոխհարաբերությունների բուն պատմությունը բաղկացած չէ միայն սպիտակ կամ սև էջերից, ճշմարիտ պատմությունը կազմված է ուսկեցերից:

Յայ-անգլիական հարաբերություններն ինքնատիպ են, բազմաշերտ և միանշանակ գնահատման համար բավականին դժվար, քանզի մեր ժողովուրդների փոխադարձ շփումները կատարվել են տարբեր ժամանակաշրջաններում ու տարբեր տարածաշրջաններում Յայաստանում, Անգլիայում և աշխարհի այլ երկրներում:

Անանիա Շիրակացին VIIդ. իր նշանավոր «Աշխարհացոյց»-ում գրել է. «Բրիտանիան երկու կղզիներ են, որոնք գտնվում են Հյուսիսային օվկիանոսում, Խսանիայից վերև: Արևմտյան կղզու անունն է Յուբառնիա: Նա ունի ծյուղավորված գարեհատիք ծև: Այդտեղ կան տասնվեց խոշոր գետեր և բազմաթիվ ժողովուրդներ: Իսկ Արևելյան կղզու անունն է Ալվիոն, որն ավելի մեծ է, քան առաջինը: Նա ունի բազմացյուղ տղորուկի ծև: Կան այնտեղ քանինգ խոշոր գետեր և խիստ անտառներ: Այս կղզու շուրջ կան քառասունմեկ մասն կղզիներ...»:

Նույն կերպ Մեծ Յայաստանի մասին բավականին հիմնավոր տեղեկություններ ունեին XIIIդ. անգլիացի պատմիչները, մասնավորապես՝ ֆրանցիսկյան օրդենի վանականներ Բարորությմենոս Անգլիացին և Ռուսեր Բեկոնը:

Սակայն հայերի և անգլիացիների բուն փոխշփումն սկսվեց խաչակրաց արշավանքներով, երբ սպիտակ թիկնոցներին կարողի խաչ կրող բրիտանացիները, բելգիացիների ու ֆրանսիացիների հետ մեկտեղ, յոթ անգամ ուսք դրեցին Կիլիկյան Յայաստան՝ նապատակ ունենալով Երուսաղեմն ազատագրել անհավատներից: Խաչակրաց արշավանքները ոչ միայն կրոնական, ռազմաքաղաքական բնույթ ունեին, այլև հիմք դրեցին տնտեսական շփումների: Եվրոպական գրաքանակները, բնականաբար, պարենային մատակարարման խնդիր ունեին, այդ իսկ պատճառով նրանց ուղեկցում էին վաճառականների հոծ խմբեր, որոնք առևտրական սերտ հարաբերություններ էին հաստատում Կիլիկեցիների հետ: Այդ կապերը պատճառ դարձան, որ հայ վաճառականներն արագորեն հայտնվեն Խտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Հոլանդիայում, քայլ ոչ Բրիտանիայում: Կղզիաբնակությունը անգլիացիների հավաքական հոգեբանական կերտվածքի վրա ազդող էական գործոն էր, որն էլ, յ. Քյուրությանի խոսքերով, ծևավորում էր «հոխորտ, այլամերժ, եսասեր նկարագիր»:

Սակայն առևտուրը մարդկային գործունեության այն տեսակն է, որն ընդունակ է հաղթահարելու բոլոր խոչընդոտները, բացելու բոլոր փակ դրսները: Արդեն 1511թ. հայերի շնորհիվ անգլերենում հայտնվում է Carpet բառը: 1534թ. մետաքսով, գորգերով և արևելյան այլ ապրանքներով բեռնավորված անգլիական Holy Cross («Ս. Խաչ») և Mathew Gonson («Մերյու Գոնսոն») նավերը վերադառնում էին Քիոս և Գանտիա կղզիներից:

1635-ական թթ. Պլիմուտի արվարձաններից մեկում բնակություն են հաստատում Ամստերդամից եկած բավականին մեծաքիվ հայ վաճառականներ: Նրանք ունեին իրենց քաղանասը, գրադաւում էին ոսկերչությամբ, ոսկյա իրերի առևտրով և կառուցեցին հայերեն արծանագրությամբ մի աղբյուր (այդ արծանագրության ճակատաքարը պահպանվում է Street ավանի մոտ գտնվող մի գյուղի քանգարանում): Մեզ է հասել այսպիսի մի ավանդություն. Օլիվեր Կրոնվելն իր հեջալ զորախմբով անցնելիս է լինում հայկական քաղանասով, ապա նկատելով մեր վաճառականներին՝ հարցնում է. «Դուք ի՞նձ հետ եք, թե՝ թագավորի»: Այս հարցի ցանկացած միանշանակ պատասխանը կործանարար կարող էր լինել, և հայ վաճառականներն արծագանքում են նրան դիվանագիտությամբ, ասելով. «Աստծուն՝ Աստծուն, Կեսարին՝ Կեսարին»: Խիստ դժգոհ Կրոնվելը հեռանում է, իսկ հայերը, երկյուղելով, թե նա կվերադառնա և իրենց հետ հաշվեհարդար կտեսնի, թողնում են Պլիմուտը: Բայց, հավանաբար, նրանցից մեկը՝ Մարտիրոս անունով, չի հեռանում, հպատակություն է ընդունում և շարունակում առևտրով գրադաւում:

Տնտեսական փոխհարաբերությունները, ճիշտ է, դժվարությամբ, բայց այդուհանդերձ շարունակում են զարգանալ: 1608թ., Չեյս և Թագավորի օրոք, Oatlands-ում հայերը տնկում են թթենիներ և հիմնում շերամաբուժարան: Անգլիացի Զ. Սանտիսը 1610թ. վկայում է, թե հայերը Կ. Պոլսի մետաքսի առևտրի տերերն են, իսկ անգլիացիները նրանցից գնում են նաև Պարսկաստանից բերված գորգեր<sup>1</sup>:

Յինա դիտարկենք այլ երկրներում հայերի և անգլիացիների շփումները, որովհետև դրանք խիստ կարևոր են և XIXդ. Անգլիայում հայ համայնքի ստեղծման համար սաղմեր դարձան:

1667թ. Նոր Ջուլյայի 23 ամենախոշոր վաճառականների ներկայացուցիչներ Ստեփան Ռամադաննեցը և Գրիգոր Լուսիկենցը Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հետ կնքված հայ-ռուսական առաջին առևտրական պայմանագիրը կիրակման մեջ են դնում: Եվ ահա Իվանովյան հրապարակի գրագիր հրեա Զոշկա Ցեկանովը արծանագրում է, որ Մոսկվայում ու ռուսական բոլոր քաղաքներում հայ վաճառականների պաշտոնական ներկայացուցիչ է հանդիսանում անգլիացի թոնասի որդի Թոնաս Բրեյնը: Իր ծառայությունների

<sup>1</sup> A Relation of journey. A. D. 1610. London, 1627, p. 86.

համար նա պետք է վարձատրվեր հետևյալ կերպ՝ հայերի բերած ապրանքներից ստանար 1-ական դենգա, իսկ իրեն ուղարկվածներից՝ ամեն ռուբլուց 2 կոպեկ: Եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ Ռուսաստանում առհասարակ եվրոպացիներին, մեղմ ասած, չէին ընդունում, ապա ակնհայտ է, որ Թ. Բրեյնը հայ վաճառականների վստահելի անձն էր, և նրանց ցանկությամբ ու պնդմամբ էր այդպիսի բարձր դիրք գրադեցրել:

Ժամանակագրությունը չխախտելու համար անցնենք Յնդկաստան: XVIդ. վերջից այս երկիրը կովախնձոր դարձավ եվրոպացիների՝ պորտուգալացիների, իսպանացիների, հոլանդացիների, ֆրանսիացիների, անգլիացիների և անգամ դանիացիների միջև: Սրանցից շատերից ավելի վաղ Յնդկաստան ուժք դրած և տնտեսական լայն գործունեություն ծավալած հայ վաճառականները հայտնվեցին ոչ թե երկու, այլ շատ քարերի արանքում: Եվրոպացիները ներկայացնում էին իրենց պետությունները, այնինչ պետականությունից գուրկ հայերը ստիպված էին պաշտպանել ազգային պատկանելության հատկանիշի վրա հիմնված անձնական կամ խմբակային շահերը: Սակայն պաշտպանել ինչպես՝ Յայ վաճառականները, ինքնապահպանության բնագդից դրված, որդեգրեցին հնարավոր լավագույն վարքագիծը՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատեցին և սերտորեն համագործակցեցին բոլորի հետ, այսինքն՝ վարեցին հավասարակշռված քաղաքականություն:

Ավագի լավագույն ապացույց է նորջուղայեցի Հարությունյան եղբայրների օրինակը: Գրիգորը՝ նույնինքը նշանավոր Գորգին խանը, վաճառականությունը թողնելով ստեղծեց հնդկական առաջին կանոնավոր բանակը, իր հայ հազարապետների հետ դաժանագույն մարտեր մղեց անգլիացիների դեմ և, ի վերջո, զոհվեց, իսկ նրա վաճառական եղբայր Պետրոսը բացեիրաց, անթաքույց աջակցում էր անգլիացիներին:

Նոր Ջուլյայի Սարիայան նշանավոր գերդաստանի ներկայացուցիչներից խոշա Խսրայելը 1698թ. 16 հազար ռուփի վճարելով, կարողացավ հաջողացնել, որ անգլիացիներին վարձով տրվեն կալկարայի մերձակա Սութանար և Կովիդստրուա գյուղաքաղաքները: 1713թ. մի շարք առևտրական գրոծարքներ կատարեց անգլիական «Արևելա-հնդկական ընկերության» հետ, ապա որպես դիվանագիտական ներկայացուցիչ Նելիի Վեհապետից 1715թ. առևտրական առանձնաշնորհներ ծեռք բերեց անգլիացիների համար:

Հայերի օգտակարությունը, վաճառականական բարձր պրոֆեսիոնալիզմը անգլիացիների աչքից չեղ վրիպում: «Արևելահնդկական ընկերության» լոնդոնյան կենտրոնը Շնդկաստանի իր ներկայացուցիչներին հորդորում էր սովորել հայերեն ու պարսկերեն հայերի առևտության մեջ խորանուս լինելու համար և 1691թ. գրում. «Այդ հայերը հարուստ մարդիկ են և երկրագնդի ամենափորձառու վաճառականները»<sup>1</sup>:

Շնդկաստանի համար միջեվրոպական «տուրուղմփոցում» վերջնականապես հաղթանակեց Անգլիան, և պարզ դարձավ հայերի կոնյակին ներկայության անհեռանկարությունը. անգլիացիները եռանդագին կերպով սկսեցին հնդկական շուկայից դուրս մղել այլևս անօգտակար և ավելորդ դարձած հայերին, իսկ հայոց տնտեսական ներկայության վերացումը հանահավասար էր առհասարակ հայոց տարրի անեացմանը: Գործունեության նոր տարածքներ, նոր շուկաներ յուրացնելու մտահոգությամբ հայերը սփռվեցին Շնդկաչինով մեկ Ինդոնեզիա, Ֆիլիպինյան կղզիներ, Ցեյլոն, Բիրմա, Չինաստան, ճապոնիա և այլուր:

Սակայն Շնդկաստանում մնաց հայոց մի հատված, որը ենթարկվեց անգլիական քաղաքակրթության, մշակույթի, լեզվի, վարժութարքի ազդեցությանը, և այս զանգվածն ու դրա սերունդներն էին, որ հետագայում տեղափոխվեցին Անգլիա և դարձան ապագա անգլահայ համայնքի հիմնադիրներից:

XVIII դ. սկզբից մեծահարուստ հնդկահայերը, իրենց երեխաներին լավ կրթություն տալու նպատակով, անգլիացի ուսուցիչներ են վարձում: Գուլիելմուս Ուիսթոնը մադրասարնակ Գ. Աղափիրյանի տնային ուսուցիչն էր: Անգլիացու զավակները՝ Ուիսթ և Զորջը, խոշոր հայ վաճառականի տանը հաղորդակից եղան հայոց լեզվին, մեծ դժվարությամբ յուրացրեցին գրաբարը, ապա 1736թ. Լոնդոնում իրատարակեցին Խորենացու «Դայոց պատմության» և Շիրակացու «Աշխարհացուցի» իրենց անգլերեն թարգմանությունը:

1730թ. Լոնդոն այցելած իսպանացի ուղեգիր Դոն Գոնզալեսը վկայում էր, որ հայոց շուկան կամ walk-ը գտնվում է արևելքից Smithin's Street-ի և հյուսիսից Threadneedle Street-ի միջև, մի կողմում ունենալով հոլանդացի ոսկերիչների, մյուս կողմում՝ պորտուգալա-

ցիների շուկան: Այս walk-երը գտնվում էին Royal-Exchange-ում, և հայերն զբաղվում էին ակնավաճառությամբ ու գորգերի առևտորով<sup>1</sup>:

Նորջուղայեցի Գրիգոր Խալդարյանը, որ շուրջ երկու տասնամյակ Շնդկաստանում առևտորով էր զբաղվել, 1760թ. տեղափոխվեց Լոնդոն՝ նպատակ ունենալով իրականացնել վաղեմի երազանքը՝ հիմնել սեփական տպարան և, գուցե թե, դրանով բիզնես անել: Տար տարվա ընթացքում, վիրխարի կորուստների գնով փափագին հասավ և նույնիսկ տպագրեց «Դավանութիւն հաւատոյ» գիրքը: Սակայն հայկական տպարանը Լոնդոնում ունեմ էր պետք, ունեմ էր պետք հայալեզու արտադրանքը, որն իրացման շուկա չուներ: Դա էր պատճառը, որ Գ. Խալդարյանը 1781թ. տպարանը տեղափոխեց Պետերբուրգ, սակայն այստեղ էլ ընկավ ծանր պարտքերի տակ: 1788թ. Յովսեփ արք. Արդությանը տպարանը գնեց, տեղափոխեց հայահոն Նոր Նախիջևան և տպագրեց մի շաբթ գրքեր:

Մեկ այլ նորջուղայեցի, հնդկահայ Եղուարդ Ռաֆայելի Ղարամյանը՝ հետագայում Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի հիմնադիրը, ուներ հիմնգ զավակ՝ Ալեքսանդր, Յովհաննես, Լուի, Աննա և Մարիամ: Նախ, Յովհաննեսին ուղարկեց Լոնդոն՝ ուսումնառության, իսկ 1785թ. նյուս տղաներին: 1829թ. Ալեքսանդր Ղարամյանը նշանակվեց Լոնդոնի շերիֆ, այսինքն՝ կառավարության ներկայացուցիչ: 1847թ. հուլիսի 29-ին նա մասնակցեց Անգլիայի համայնքների պալատի ընտրություններին: Առաջադրվել էր մայրաքաղաքից 21 մղոն հեռավորության վրա գտնվող Սենթ Օլբանի ավանից և երեք անգլիացի մցակից ուներ: Ընտրությունների արդյունքում ստացավ 295 քվե (երկրորդ տեղն զբաղեցրածից 19 ձայն ավելի) և դարձավ առաջին հայ խորհրդարանականը: Մահից հետո (1851թ.) թողեց 16 մլն. ֆրանկի կարողություն:

Դիշատակենք անգլականության կնիքը կրող, բայց հայի եռթյունը պահող-պահպանող մի զարմանալի մարդու ևս: Նորջուղայեցի Յովհաննես Գալստանյանը XX դարասկզբին, թերևս, Կալկաթայի ամենահարուստ մարդն էր: Ուներ բազմաթիվ վարգաձիեր, մասնակցում էր ծիարշավի մրցումների և մրցանակ էր ստացել Զորջ V թագավորից: Այս մարդը նաև բանաստեղծություններ էր գրում, և պահպանվել է այսպիսի մի քառատող (անգլերենից արևմտահայերեն թարգմանություն է).

<sup>1</sup> Bruce. Annals of the East India Company, vol. II. London, 1810, p. 617.

<sup>1</sup> Thomas Osborne. A Collection of Voyages and Travels. London, 1745, vol. 1, p. 119.

Նոր տուները չեմ սիրեր բնավ ես,  
Անոնք ունին դեմք մ'ամընգգած,  
Դիմերս՝ այրի կիմեր կարծես,  
Կը մշտածեն տըրտում նըստած...

Դին ու նոր տների մասին փիլիսոփայական այսպիսի խոհեր ունեցող Հովի. Գալստանյանն, այդուհանդերձ, տիրում էր կալկարայի պալատների մեջ մասին և մեկը նույնիսկ տրամադրել էր անգլիական կառավարչությանը, որպես բրիտանական Կարմիր խաչի զինվորական հոսպիտալ: Սակայն խոշոր կապիտալիստը նաև խորապես ազգասեր մարդ էր. նա Ս. Հովհաննես Կարապետ (Ս. Նազարեթ) եկեղեցու կառավարիչն էր, ՇԲԸ Կալկաթայի մասնաճյուղի հիմնադիրներից, ատենապետ և մշտապես խոշոր գումարներ էր տրամադրում ազգային կարիքների համար:

Ինչո՞ւ ենք այսքան մանրամասնորեն անդրադառնում հնդկահայերին. կրկնենք այն պարզ պատճառով, որ ապագայում ծևավորվելիք անգլահայ գաղութում նրանք եական դեր էին կատարելու: Եական, բայց ոչ առաջնային, առաջնությունը պատկանելու էր արևմտահայերին, հատկապես՝ պոլսեցիներին:

XIXդ. սկզբին «Եվրոպայի հիվանդ մարդ» Թուրքիան չնչին տեղ էր գրադեցնում համաշխարհային տնտեսության մեջ: Բավական է ասել, որ ապրանքաշրջանառությունում նրան էր պատկանում ընդամենը 1%-ը: Այս հանգանանքը կապիտալիստական զարգացած տերությունների համար պարարտ հոդ հանդիսացավ տնտեսական ներխուժման համար, որոնք Արևելքի հետամնաց Երկրներին հանարում էին «տնտեսական տարածքներ», իսկ այդ տարածքների յուրացումը անխուսափելիորեն հանգեցնում էր գաղութացման կամ կիսագաղութացման:

Թուրքիայի տնտեսական (հետևաբար և քաղաքական) նվաճման գործում զգալի հաջողությունների հասավ Բրիտանական կայսրությունը, որը նման քաղաքականություն վարելու դարավոր, հարուստ ավանդությունը արդեն ձեռք էր բերել Հնդկաստանում: XIXդ. 20-40-ական թթ. Անգլիան իր վերահսկողության տակ վերցրեց Օսմանյան կայսրության ապրանքաշրջանառության շուրջ 31%-ը: Ամբողջ հարյուրամյակի ընթացքում Թուրքիա ներմուծված բանբակյա և մանվածքային կտորեղենի ընդհանուր արժեքն աճեց

ավելի քան 100 անգամ, իսկ բնակչության մեկ շնչի հաշվարկով՝ շուրջ 50 անգամ: Արդյունքը եղավ այն, որ տեղական սպառման շուկայում ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 4-5%-ից հասավ 80%-ի: Երեսուն տարվա ընթացքում 40-ական թթ. սկզբից մինչև 1870-1872թթ., Եվրոպական (և, առաջին հերթին, անգլիական) բանբակյա ատարդանքի մասնաբաժինը թուրքական շուկայում 30%-ից աճեց հասավ 80%-ի:

Իսկ ովքե՞՞ր էին բրիտանական այս տնտեսական եքսպանսիան իրականացնողները: Վատահարար կարելի է ասել, որ այդ հարցում վիթխարի էր հայերի դերը, և դա ուներ մի քանի պատճառաբանություններ: Ուզմաֆեռողական Թուրքիայում հայոց կապիտալ գտնվում էր մշտական սպառնալիքի ներքո, գույքի, ունեցվածքի բռնազավթումները, կեղեցումները, կամայականությունները սովորական երևույթ էին: Այնինչ կապիտալը վերարտադրման, նոր ոլորտների, նոր շուկաների մեջ ներդրվելու բնական ծգուում ուներ: Այս ինաստով Անգլիայի տնտեսական ներխուժումը Թուրքիա լիովին համապատասխանում էր հայոց կապիտալի շահերին: Սակայն կուտակված ֆինանսական միջոցները հայերը ծգուում էին ներդնել ոչ թե արտադրության մեջ՝ երկյուղելով բռնազավթումներից, այլ առևտորի, վարձակալական, միջնորդական, վաշխառուական գործարքների ոլորտներում:

Հայոց և անգլիական կապիտալների փոխներթափանցումը մի բացատրություն էլ ուներ. Թուրքիայի արտաքին առևտորի մեջ մասը գտնվում էր հայոց ծեռքում, և բնական է, որ անգլիացիներն առաջին հերթին գործ պիտի ունենային հայերի հետ:

Այժմ ավելի մանրամասնորեն դիտարկենք, թե այդ ամենն ինչպես կատարվեց: Եթե Մարքսն ասում էր, թե՝ ոչխարները կերան մարդկանց, ապա նույն ոճով ու տրամաբանությանը կարելի է ասել, թե՝ Մանչեստրը կերավ Թուրքիային: Վերևում մենք արդեն ցույց տվեցինք, թե Անգլիայի տնտեսական ներխուժման մեջ որքան մեծ էր բանբակյա և մանվածքային արտադրության ապրանքատեսակների տեսակարար կշիռը: Մանչեստրին համարձակորեն կարելի էր համարել Անգլիայի տեքստիլ արդյունաբերության մայրաքաղաք, և պատահական չէ, որ նոր ժամանակներում հայերն սկսեցին այստեղ հանգրվանել և ծևավորել կայուն տնտեսական ներկայություն:

1835թ. Մանչեստր ուժը դրեցին առաջին հայ վաճառականները պոլսեցի մանուֆակտուրավաճառներ Գրիգոր, Յարություն և Հով-

հաննես Միրասեյիոյան Եղբայրները, որոնք էլ դարձան անգլահայ համայնքի հիմնադիրները: Նրանց հետևեցին տիվրիկցի Մանուկ, Շարություն, Գևորգ և Խաչիկ Գարամաճյան Եղբայրները, որոնք Կ. Պոլսում խնամիանալով Պողոս Տատյան բեր ընտանիքի հետ և օգտվելով Տատյանների Եվրոպական ճանաչումից ու թուրքական կառավարությունում նրանց վայելած վստահությունից, անմիջապես ծեռնամուխ Եղան Մանչեստրում առևտրական տուն հիմնելուն մասնաճյուղ ունենալով Կ. Պոլսում: Մանուֆակտուրա ու Երկարեղեն Թուրքիա մատակարարող այս ֆիրման առաջին հայապատկան առևտրական տունն էր, որ մեծ հեղինակություն ծեռք թրեց անգլիական ֆիրմաների, ֆաբրիկաների, գործարանների շրջանում և առևտրական ընդարձակ ու բազմակողմանի գործառնություններով ակնառու դիրք գրավեց Թուրքիայի ասիական ու Եվրոպական մասերում:

Շարություն Մուշյանն առաջինն էր, որ ամուսնացավ անգլուհու հետ, բայց և «չմոռացավ» Upper Brook փողոցում հայոց Եկեղեցու համար տարածք գնել:

Յովհաննես Յովակիմյանը բացառիկ մի դեմք էր, որին անվանում էին հայ վաճառականների Պապա՝ նահապետ: Այս մարդը որդու՝ Գառնիկի օժանդակությամբ անգլերնից թարգմանեց և 1860թ. Փարիզում լույս ընծայեց անգլիացի մի հեղինակի «Պատմութիւն նախնեաց վաճառականութեան և ճանապարհ հարստութեան» գիրքը: Դրատարակելու մտահոգությունն այն էր, թե իբր Եվրոպացիների համեմատությամբ հայերը թույլ են առևտրի ասպարեզում և գրել էր առաջարանում. «... Առաջ Երբալ գիտցող մարդը դյուրավ կիանոզվի, որ ստակ վաստակելու միջոց եղող բան նը ամեն աղեկություններու ալ պատճառ և արի կըլլա»:

1840թ.-ից հիմնված մանուֆակտուրայի ու Երկարեղենի հայկական առևտրական տներից մի քանիսը ունեցան Երկարատև կյանք. այսպես, Յովի. Շակորյանի ֆիրման գործեց 35 տարի, Մարտիրոս Թոքառյանինը՝ 40, իսկ Կարապետ Եղիազարյանինը՝ 45 տարի:

Պետք է ասել, որ անգլիական իրականությունը հետամնաց Թուրքիայից եկած հայ վաճառականների առջև ի ցույց դրեց մի պարզ իրողություն, այն է «հոխորտ, այլամերժ» Անգլիայում թիգնեսով զբաղվելու համար անհրաժեշտ էին եռանդ, ծեռներեցության ջիղ և կրթվածություն, իիմնավոր գիտելիքներ: Ընդունելով այս «մարտահրավերը», հայ վաճառականներից ոնանք, իիմնելով թիգ-

նես ու ֆիրմաներ, ծեռնամուխ Եղան լավ կրթություն ստանալու և գուգահեռաբար անցում կատարեցին մտավոր գործունեության ոլորտներ: Այսպես, Կարապետ Կարագյոզյանը նաև դասավանդում էր Քոլորջի Սրբուարտ Միլ համալսարանում, Մարտիրոս Թոքառյանը Կոնտիում ուսումնասիրում էր Վիլխստիվայություն, Ֆրանսիական, անգլիական, գերմանական գրականություն, իսկ Գարեգին Փափազյանը Շեքսպիր էր թարգմանում:

Այս առաջին սերնդին հետևում է Երկրորդ՝ 50-60-ական թթ. ալիքը, որը հաստատվելով Անգլիայում՝ պահպանում է Կ. Պոլսի ու գավառների հետ տնտեսական կապերը: Գր. Յուսուֆյանը, Յովի. և Ն. Շակորյան Եղբայրները, Պ. Մինանյանը, Սպարտալյան Եղբայրները, Գ. Ֆնտգյանը, Մ. Շարենցը, Ե. Եսայանը, Կ. Էքիզյանը, Կ. Եղիազարյանը և այլք Թուրքիա էին արտահանում անգլիական ապրանքներ, իսկ այնտեղից ներկրում թուրքական, պարսկական, կովկասյան տնայնագործական ու բնամթերային արտադրանք:

1862թ. ամբողջ անգլահայ համայնքը բաղկացած էր Մանչեստրում ու Լիվերպուլում բնակվող 30 արևմտահայ վաճառականներից: Նրանք էին Ե.Անանուխյանը, Մ.Թոքառյանը, Գր. Յուսուֆյանը, Մ. Շարենցը, Յ. Մուշյանը, Յովի. Շակորյանը, Գ. Յովակիմյանը, Մ. Յովսեփյանը, Յովի. Պետրոսյանը, Պ. Մինանյանը, Պ. Միրունյանը, Պ.Ստեփանյանը, Մ.Իսկեններյանը, Պ.Փափազյանը, Ո.Փեշտիմաջյանը, Յովի. Գաբամաճյանը, Գ. Ֆնտգյանը, Յ. Յազճյանը, Գ. Փափազյանը, Կ. Եղիազարյանը, Ե. Եսայանը, Օ. Շահումյանը, Խ. Վարպետյանը, Մ. Փափազյանը, Կ. Էքիզյանը, Տ. Վարդանյանը, Ա. Տեր-Գասպարյանը, Յովի. Փափազյանը (վերջինս տեղափոխվել էր Յուրիիս, բայց սերտ կապեր էր պահպանում համայնքի հետ):

Տնտեսապես վայլուն դիրքի հասած այս մարդիկ, բնականաբար, պիտի հոգ տանեին իրենց հոգևոր, հավատքային կյանքը կազմակերպելու մասին: 1863թ. նրանք Մանչեստրի Ռամֆորդ սրբիթ թիվ 151 հասցեում վարձակալում են մի մատուռ՝ Մ. Յովի անվանք, որտեղ մարտի 31-ին Կարապետ Վլոդ. Շահնազարյանը կատարում է առաջին ժամերգությունը, և ներկա էին վերոնշյալ բոլոր վաճառականները:

Սկսվում է համայնքի կազմավորման գործընթացը: Նույն 1863թ. վաճառականների նախաձեռնությամբ Կարապետ Վլոդ. Շահնազարյանը սկսում է հրատարակել տնտեսական ու քաղաքական խնդիրներ արձարծող «Երկրագունդ» պարբերականը:

1866թ. Մանչեստրի, Լոնդոնի ու Լիվերպուլի հայերը գումարում են Ընդհանուր ժողով, ծևավորում հոգաբարձություն (Յ. Տամատյան, Պ. Փափազյան, Շովի. Ջակոբյան), որը ձեռնամուխ է լինում համայնքի ներքին կանոնագրքի ստեղծմանը և Մանչեստրում եկեղեցի կառուցելու համար հանգանակություն կազմակերպելուն: Կանոնագրքի ստեղծման ու վավերացմանը մասնակցում է 14 վաճառական, այդ թվում և... Ալեքսանդր Մանթաշյանցը:

Սա էական պահ է: Երիտասարդ Ալ. Մանթաշյանցը դեռևս 1864թ.-ից՝ 22-ամյա տարիքից էր կանոնավոր կերպով այցելում Մանչեստր: Նրա հայրը Թավրիզում գրադպում էր մանուֆակտուրայի առևտրով, և Ալեքսանդրը Մանչեստրից իր ազգակիցների ու հատկապես Եսայի Եսայանի օգնությամբ կտորելենի խոշոր խմբաքանակներ էր առաքում հորը: Մանչեստր կատարած հաճախակի ու պարբերական այցելությունները վիրիսարի ազդեցություն ունեցան որպես վաճառական Ալ. Մանթաշյանցի ծևավորման վրա: Նա գործնականորեն ծանոթանում ու յուրացնում էր բիզնես վարելու առաջավոր Եվրոպական եղանակները, ինչը նպաստեց, որ նա հետագայում դառնա Թիֆլիսի մանուֆակտուրայի մեծածախ խոշոր վաճառականներից մեկը: (Սի անգամ Ալ. Մանթաշյանցի նախանձողներից մեկը նրա երեսին ասել էր. «Թե իս Լոնդոն չիմ գնացի, փուր չիմ աշխատի»...): Այս խոսքը խորապես վիրավորել էր Ալ. Մանթաշյանցին, և երբեք չէր մոռանում): Ապագա նավթարքան Մանչեստրում ձեռք բերեց նաև մտերիմ ընկերներ, որոնց հետ կապը երբեք չխցեց: Քետագայում նրա նավթարդյունաբերական ֆիրմայի ներկայացուցիչներ դարձան. Թուրքիայում ու Եվրոպայում Եսայան եղայրները, Կ. Պոլսում Գ. Շովակիմյանը, Լոնդոնում Շովի. Անդրեասյանը, որը Զեյմս Բրայսի հետ հիմնեց հայոց իրավունքները պաշտպանող «Անգլ-հայկական ընկերությունը»:

Ալ. Մանթաշյանցի՝ Մանչեստրում գտնվելու փաստը վկայում է նաև, որ կովկասահայերը շատ վաղուց են հայտնվել Անգլիայում և հետագայում էական դեր խաղացել համայնքի լիարժեք կազմավորման խնդրում:

1869թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ եկեղեցի կառուցելու համար կազմակերպում է հանգանակություն, որին մասնակցում են 21 հոգի ու ժողովում 2725 ֆունտ ստերլինգ, 10 շիլինգ և 11 փենս: Ամենախոշոր գումարը՝ 205 ֆունտ, տրամադրում է «Մ. Գաբամաճ-

յան և ընկ.» ֆիրման, ամենաքիչը՝ «Արսենյան և ընկ.» ֆիրման՝ 5 ֆունտ, իսկ Մանթաշյանց-Շովակով զույգը՝ 40 ֆունտ:

Երբ 1870թ. նոր հանգանակություն է կազմակերպվում, 26 հոգով ժողովում են 285 ֆունտ, իսկ Ալ. Մանթաշյանցը տրամադրում է ընդամենը 5 ֆունտ (հավանաբար, գործերն այնքան էլ հաջող չէին): Ինչո՞ւ ենք կարևորում Ալ. Մանթաշյանցի հանգանակություններին մասնակցելու այս երկու դրվագը. Մանչեստրում նա հաղորդակից եղավ ազգանպաստությանը, նրա արյան մեջ ներարկվեց բարերարությունը:

Ինչևէ, անհրաժեշտ գումարը ժողովված էր, իսկ Յ. Մուշյանը Upper Brook փողոցում գնել էր տարածքը, ընդ որում, տեղը պատահաբար չէր ընտրվել, հայերը հիմնականում բնակվում էին հարևանությամբ գտնվող High Street փողոցում (հետագայում ցրվեցին և բնակություն հաստատեցին Ուես Դիգբուրի, Սաութ Փորթ, Բեքսթոն, Ֆալսֆիլդ, Արմսթոն, Բոդեն, Շեյլ և այլ արվարձաններում): Նոյն 1870թ. կառուցվեց Ս. Երրորդություն հայոց եկեղեցին, իսկ հաջորդ տարի կնքվեց Մանչեստրում ծնված առաջին երեխան՝ Աբրահամ Կյումուշյանի դուստր Վիրջինիա:

Եկեղեցու գոյությունը ուժ ու կորով, կազմակերպվածություն հաղորդեց Մանչեստրի հայությանը, և նրանք, բիզնեսը զարգացնելուն զուգահեռ, սկսեցին եռանդագին մասնակցություն բերել ազգապահապանությանը: 1875-1890թթ. միայն Մանչեստրում կար 75-80 հայապատկան առևտրական տուն, որոնք 25 մասնաճյուղեր ունեին Կ. Պոլսում ու Զմյուռնիայում: 1874թ. Մանչեստրում հիմնվեց Ջայաստանի սովորակերին օգնող հանձնաժողով: 1880թ. Զեյթունի սովորակերին օժանդակելու համար ստեղծվեց վեց հոգուց բաղկացած Սովելոց հանձնաժողով (անդամներից մեկը Ալ. Մանթաշյանց էր), որը հանգանակեց 90 ֆունտ ստերլինգ: Թուրքիայում 1895-1896թթ. Ղամիդի կազմակերպած ջարդերը հակազդեցության նոր ալիք բարձրացրեցին Մանչեստրում. ստեղծվեցին Գաղթականաց ու Որբախնամ հանձնաժողովներ, որոնք աջակցեցին սպանդից փրկվածներին, Կիպրոսի, Իզմիրի, Այնթապի որբանոցներին: 1897թ. Զեյթունի մեծ հրդեհից հետո հիմնվեց նպաստամատույց հանձնախումբ, որը հանգանակեց 270 ֆունտ:

Մանչեստրի հայոց բիզնեսն ուղակիորեն կապված էր Թուրքիայի հետ, և այդ երկորում կատարվող ցանկացած ցնցում (ջարդ, տնտեսական ճգնաժամ, կամայականություններ, բռնաճնշումներ և

այլն) անմիջական ազդեցություն էր ունենում համայնքի վրա: Համիլոյան ջարդերն առաջին ահազանգն էին, դրանք ակնհայտ ցույց տվեցին, որ Թուրքիայի հետ հայոց առևտորին կարծ ժամանակ է մնացել, իսկ դա հանգեցնելու էր այն բանի, որ հայության կենտրոնն աստիճանաբար տեղափոխվեր Լոնդոն: Այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն նշել է Մանչեստրի հայոց հոգևոր հովիվ Մուշեղ Եպիսկոպոսը. «Մանչեստրի հայ համայնքը իր տնտեսական կյանքով և իր ազգային, կրոնական և ընկերական կազմակերպման տեսակենտով միակն է, որ կարողացել է ամուր կովանի վրա պահել իր գոյությունը և պահպանել իր բնատուհիկ դրոշմը»:

Լոնդոնում բնակություն հաստատած փորձաքիվ արևմտահայերին, Շնդկաստանից և Շնդկաչինի երկրներից տեղափոխված պարսկահայերին ավելացան կովկասահայերը, և դրա պատճառը անգիտական կապիտալի ներթափանցումն էր արդյունաբերության ու նակրաբիզնեսի ոլորտներ, հայ կապիտալիստներն սկսեցին իրենց բիզնեսը վաճառել անգիտական իրենցին:

Առաջինը շուշեցի Առաքել Ծատուրի Ծատուրյանն էր՝ ազգասերը, բարերարը և ողբերգական ճակատագրի տեր մարդը: 1896թ. նա Բաքվի իր նավթահանքերը վաճառեց անգիտական իրենցին, որոնք 1,1 մլն. ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով ստեղծեցին «Եվրոպական նավթարդյունաբերական ընկերությունը» (The European Petroleum Company, Ltd.): Ա. Ծատուրյանը 1897թ. Լոնդոնից 214 մղոն հեռավորության վրա գտնվող Չեսթեր քաղաքի Շավարդն արվածանի եկեղեցում պատրաստել տվեց Ս. Բարդուղիմենսի և Ս. Գրիգոր Լոսավորչի զարդապակյա (վիտրաժ) պատկերները, 8000 ֆունտ ստերլինգ տրամադրեց ցեղասպանությունից փրկվածներին:

Մեկ այլ դարաբաղդի՝ Գևորգ Շովկաննեսի Բալանթարյանը, 1898թ. անգիտական իրենց վաճառեց Բաքվի Սաբունչի նավթադաշտի թիվ 68 տեղամասը՝ 3,043 սաժեն տարածքով, ինչի արդյունքում 50 հազար ֆունտ ստերլինգ հիմնական կապիտալով հիմնվեց «Քալանթարյանի (Բաքվի) նավթարդյունաբերական ընկերությունը» (Kalantaroff (Baku) Oil Company, Ltd.):

Նույն թվականին Բաքվի իրենց նավթաբեր տեղանասերն անգիտական իրենց վաճառեցին «Գ. Ա. Առափելյան եւ ընկ.», «Բուրդայան եղբայրներ» ու «Շակոր և Շովկակիմ Աղամյան եղբայրներ» ֆիրմաները, որոնց հիման վրա 1,4 մլն. ֆունտ ստերլինգ հիմնական

կապիտալով ստեղծվեց «Ռուսական նավթի Բաքվի ընկերությունը» (Baku Russian Petroleum Company, Ltd.):

1899թ. Զանգեզուրի իրենց պղնձահալ գործարաններն ու հանքերը վաճառեցին Ալ. Մելիք-Ազարյանցն ու Մութաֆյան եղբայրները, եւ ստեղծվեց «Անգլո-ռուսական պղնձալեռնարդյունաբերական սինդիկատը» (Anglo-Russian Copper Mining Syndicate, Ltd.):

1902թ. դարաբաղդի Շովկաննես Գերասիմի Թունայանը վաճառեց Բաքվի երկու կերպսինային և մեկ ածխաթթվային գործարանները, և հիմնվեց «Դ. Գ. Թունայանի նավթարդյունաբերական ընկերությունը» (The I. G. Tumaieff Oil Company, Ltd.):

Կապիտալների փոխներթափանցումը, բնականաբար, հանգեցրեց մարդկանց վերաբնակեցումների, ֆիրմաների նախկին տերերը, նրանց հարազատներն ու բարեկամներից շատերը տեղափոխվեցին Անգլիա:

1910-ական թթ. Մանչեստերում բնակվում էր 650 հայ, Սաֆրորդում՝ 150, Լիվերպուլում՝ 20, իսկ Լոնդոնում՝ 400 հոգի: Անգլահայ համայնքն իրենց ներկայացնում էր աշխարհի տարբեր ծագերից ժամանածների մի իսկական խառնարան: Առաջին խումբը արևմտահայերն էին՝ պոլսեցիներ, զմյուռնացիներ, բալասցիներ, խարբերդցիներ, եգիպտոսցիներ, գեյրունցիներ, մարաշցիներ, այնթապցիներ, վանեցիներ, մշեցիներ, կարնեցիներ և այլն: Երկրորդ խումբը պարսկահայերն էին՝ ջուղայեցիներ, թեհրանցիներ, բավրիզցիներ, բուշիրցիներ, ուրմիացիներ, որոնք Անգլիա էին եկել Կալկաթայից, Մադրասից, Մակասարից, Ռանգունից, Սինգապուրից, Խնդոնզեյհայից և այլ վայրերից: Երրորդ խումբը արևելահայերն էին երևանցիներ, դարաբաղցիներ, ալեքսանդրապոլցիներ, ախալցիսցիներ, թիֆլիսցիներ, բաքվեցիներ և այլք: Այս խմբերն ունեին հոգեբանական, մտածելակերպային եական տարբերություններ, նրանք քաղաքակրթական, մշակութային զանազան իրողությունների կրող էին, և մինյանց միջև անհամապատասխանությունն ակնհայտ էր: Եվ սակայն ունեին մեկ ընդհանրություն՝ բոլորը նյութապես ապահով վիճակում էին և գտնվում էին ունեցվածքային գրեթե նույն հարթության վրա: Ահա այս երկու բաղադրյալների միաժամանակյա առկայությունն առանձնացնում էր անգլահայ համայնքին և որոշակի ինքնատիպություն հաղորդում նրա դիմապատկերին:

Պետք է ասել, որ արևմտահայերի և արևելահայերի հոգեբանական ու մտածելակերպային խզվածքն այնքան տեսանելի էր, որ

համայնքն ինքը գիտակցում ու պայքարում էր դրա դեմ. մասնավորապես, այդ անջրպետը հարթելուն էին ծառայում դեռևս 1879թ. Մանչեստրում հիմնված Երիտասարդաց ընկերությունը և 1896թ. Լոնդոնում ստեղծված Միացյալ ընկերությունը:

Սակայն վերահաս համազգային աղետը շատ բան փոխեց: 1914թ. նոյեմբերի 4-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց դաշնակից պետություններին: Մանչեստրում անմիջապես գումարվեց Ազգային ընդհանուր ժողով, կազմավորվեց հանձնաժողով՝ Ս. Մանուկյան, Զ. Գամպերյան, Տ. Իբլիզյան, Գ. Ֆնտայյան, Տ. Գալբակյան, Ս. Յալտօքյան, Մ. Պաքրյան, Լ. Արշավիր, Ե. Էպեյան, Բ. Խերպելյան, Տ. Տովեթյան, Մ. Սրապյան, Ա. Դակորյան, Ա. Քեհյայան կազմով, որին հանձնվեց անգլահայ համայնքի շահերի պաշտպանությունը: Դանձնաժողովի շնորհիվ անգլիական կառավարությունը թրքահպատակ հայերին թշնամի չհամարեց և լիազորներ ճանաչեց՝ Լոնդոնի համար հնդկահայ գնդապետ Գրեգորիին, Մանչեստրի համար՝ Դավիթանես Գամպերյանին: Վերջինս վերին աստիճանի հետաքրքիր անձնավորություն էր:

Ծնվել էր 1870թ. Սիլիի Դիսարում: 1878թ. ընտանյոք տեղափոխվել էր Մարզվան, 1890թ. ավարտել «Անատոլիա» քոլեջը, ապա անցել առևտրի ասպարեզ՝ Սամսոնում հիմնելով այսուհետ արտադրության ընկերություն: Տեղափոխվել էր Մանչեստր և հիմնել առևտրական տուն: Դինգ տարի եղել էր Ազգային ընդհանուր ժողովի ատենադպիրը, ՀԲԸ Մանչեստրի մասնաճյուղի հիմնադիրներից: 1907թ. մտել էր մասոնների շարքը, իսկ 1914թ. ձեռնադրվել լիազոր: 1915թ. անգլիական կառավարությունում հայոց ներկայացուցիչն էր:

Հայոց ցեղասպանության ժամանակ անգլահայ համայնքը բողոքի հզոր ալիք բարձրացրեց, կազմակերպեց հանրահավաքներ, պաշտպանեց Հայոց դատը, քարոզչական նպատակներով հանգանակեց 5000 ֆունտ ստերլինգ և Լոնդոնում հիմնեց Armenian Bureau:

Քարոզչական աշխատանքում հատկապես աչքի ընկան Ավետում և Ներսես Պատիկ Դակորյանները: Եղբայրները ծնվել էին Նոր Ջուղայում, առևտրական լայն գործունեություն ծավալել ճավայում, ապա տեղափոխվել Լոնդոն: Ա. Դակորյանը Լոնդոնի «Հայոց միացյալ ընկերության» փոխնախագահն էր, պատվավոր գանձապետը և գրեց «Armenia and the War» («Հայաստանը և պատերազմը») գիրքը,

որով պաշտպանեց Հայ Դատը: Իսկ Ն. Դակորյանը 1913-1920թ. ֆինանսավորեց «Ararat» ամսագրի հրատարակումը:

Դամենատաբար փոքրաթիվ անգլահայ համայնքը եական նյութական օժանդակություն ցուցաբերեց եղեռնից փրկվածներին: Դանգանակվեց շուրջ 150 հազար ֆունտ ստերլինգ, որից 6000-ը տրամադրեցին Կովկասում ապաստանածներին: Մանչեստրում հիմնեցին Դայկական հիմնադրամ, 8000 ֆունտ հատկացրեցին ընչազուրկներին, 1500 ֆունտ՝ որբերին, 2000-ական ֆունտ՝ Կիլիկիայի ու Երևանի հայոց գորաբանակներին, 50 հազար ֆունտ՝ գորավար Անդրանիկի հիմնադրամին:

1920-ական թվականներից համայնքի համար սկսվեց նոր՝ վերապրումի փուլ: Ներգաղթողների հիմնականում նավթարիզնեսի ներկայացուցիչների, գորգի ու մորթի-մուշտակելենի վաճառականների ազգականների ու մտերիմների, շնորհիվ անգլահայերի թիվը հասավ 2000-ի, ընդ որում, լոնդոնարնակներինը՝ 800 հոգու: Այս ժամանակից էր նաև, որ համայնքի առաջնորդի ուղղակի և անուղղակի պատասխանատվությունն անցավ հռչակավոր Գալուստ Գյուլբենկյանին, որը 1922թ. 21.500 ֆունտ ստերլինգ գումարով կառուցեց Ս. Սարգսի հայոց եկեղեցին:

Ներկայացնելով անգլահայ համայնքի ծագման ու զարգացման, հայ-անգլիական դարավոր փոխհարաբերությունների համառոտ պատմությունը, մենք կարող ենք հանգել եզրակացության, որ համայնքի առաջացման բուն պատճառը առևտրատնտեսական գործուն էր: Իսկ գաղթավայրի կազմակերպվածության համար եական նշանակություն ունեցան դժվարությունները հայրահարելու ծգուումը, միասնական ու համախումբ գործելու կամքի դրսւորումը:

Սա է անգլահայ համայնքի առանձնահատկությունը ի շարս սփյուռքի այլ գաղթօջախների:

**ԱՄՆ**  
(XVII<sup>րդ</sup>. կես-XX<sup>րդ</sup>. առաջին քառորդ)

Գրքերը կրում են ժամանակի կմիջք, ենթարկվում դրա փորձությանը եւ մարդկանց նման ունեն ինքնուրույն ճակատագիր: Դայաստանի Ազգային գրադարանում պահպանվում են գրքեր, որոնց անվանում են «քաղբանտարկյալներ» և որոնց խորհրդային իշխանությունը քաղաքական անքարեհուսության, գաղափարական վտանգ պարունակելու պատրիարքով բանտել էր «վիակ ֆոնտ» կոչված մենախցում: Նման մի ազատագրյալ գիրք էր 1952թ. Փարիզում լույս տեսած «Ակն և ակնցիք» ժողովածում, որի առաջին ընթերցողը դառնալու բախտ ինձ վիճակվեց: Այդտեղ մի անակնկալ կար. գիրքը խորհրդային Դայաստան ուղարկած մարդը՝ Գրիգոր Ս. Գալուստյանը, գրքի շապկադարձին մեկ էջ ծեռագիր էր սոսնձել, որտեղ հիացական արտահայտություններով հորդորում էր ընթերցել իր ծննդավայրի մասին պատմող այդ ժողովածում: Սակայն անակնկալը դրանով չափարտվեց, գրքի վերջում նա թողել էր իր 12 էջամոց ծեռագիրը... Դա ցեղասպանություն վերապրածի վկայություն էր, վավերագրի արժեք ունեցող մի հուզիչ փաստաթութք, ուր նա պատմում էր, թե ինչպես 1915թ. եղեռնի ժամանակ հորն սպանում են թուրքերը, ինքը թողնում է մորք, քույրերին, հարազատ Ակնը ու երեք տարի պատսպարվում մի քուրդ բեկի մոտ: 1920թ. նրան հաջողվում է մոր ու քույրերի հետ արտագաղթել ԱՄՆ և գրում է. «Ատրճանակը, որ ես միշտ իմ մօտս ունեի, մինչև 1920, երբ Ամերիկա հասայ և տեսայ Ազատութեան արձանը Նիւ-Եօրքի առջև, խաչակնքեցի ու նետեցի զայն համբուրելով New York-ի նաւամատույցի ջուրերուն մեջ: Պետք չունեի այլեւս անոր, որովհետև Ազատ Երկիրի մը մեջ պիտի ապրեի»:

Մրանք խորհրդանշական խոսքեր են:

Դայերն Ամերիկան «նվաճել» են XVII դարում: ԱՄՆ-ում հայտնված առաջին հայը եղել է Յովիհաննես Մարտիրոսյանը կամ Զոն Մարտինը: 1618թ. Վիրջինիա ներգաղթածների մեջ նա գրանցվել է որպես Լոնդոնի Զեյմս-թաուն քաղամասի անդամ եւ նրան տրվել է 95 ակր<sup>1</sup> հողատարածք: Ընդ որում, գրանցման մեջ նշվել է ազգային պատկանելությունը՝ John Martin the Armenian:

<sup>1</sup> 1 ակր = 4060 քառ.մետրի:

1650թ. Վիրջինիայի կառավարիչն էր Էդուարդ Դիգսը՝ զավակը սըր Դաուի Դիգսի, որը մի որոշ ժամանակ եղել էր Ռուսաստանում Անգլիայի դեսպանը: Էդուարդը հավանաբար այս ընթացքում է շփվել հայերի՝ ճասնավորապես նորջութայեցի վաճառականների հետ, որոնք պարսկական հում մետաքսի առևտուի մենատերերն են և ապագա եռամբուլ առևտուանտնեսական գործունեության առաջին քայլերն են կատարում Ռուսաստանում: Է. Դիգսը ցանկանում էր Վիրջինիայում հիմք դնել շերամաբուժությանը և մետաքսի արտադրությանը, Անգլիայից պարբերաբար շերամի սերմ էր ստանում, սակայն արդյունքի չէր հասնում՝ համապատասխան փորձառության և ունակությունների տեր մարդիկ չկային: Դա պատճառ դարձավ, որ նա սեփական ծախսով Վիրջինիա բերել տա երկու հայի: Սեկի անունը չի պահպանվել, իսկ մյուսի անունը Գևորգ էր<sup>1</sup>: Ենթարաբար, այդ հայերը Պարսկաստանից էին: Սրա օգտին է խոսում այն փաստը, որ արևմտահայ աղբյուրներում նրանց մասին որևէ հիշատակություն չկա, այնինչ Կոստանդ Զուղայեցին 1683թ. գրած իր նշանավոր «Աշխարհաժողովում», ուր թվարկում է նորջուդայեցիների այցելած երկրները, հիշատակում նաև «յենկի դունյան»՝ «յանկիների աշխարհը», որն Ամերիկան է:

Ի վերջո, արտադրվեց ամերիկյան առաջին մետաքսը, և դրանում, անկասկած, իրենց ներդրումն ունեցան հայերը: Սակայն Վիրջինիայում լայն թափ ստացավ ծխախոտի մշակությունը: Տեսնելով նման զարգացում, հայ շերամաբույժները, բնականաբար, մտադրվեցին վերադառնալ հայրենիք, բայց նահանգի ծերակույտը շատ էր ցանկանում, որ նրանք մնան, շարունակեն իրենց գործը, և հայ Զորջին Գևորգին, սիրաշահելու նպատակով անգամ նվիրվում է 4000 ֆունտ ծխախոտ՝ առևտուվ գրանցելու համար<sup>2</sup>:

Առաջին այս ծանրությունից հետո հայ-ամերիկյան փոխադարձ շփումներում տիրում է ավելի քան մեկուկես դարյա դադար, որն ունի մի քանի պատճառ: Խախ, բաժան-բաժան եղած հայոց աշխարհի արևմտյան հատվածը գտնվում էր թուրքական, իսկ արևելյանը՝ պարսկական լջի տակ, և մենք հայրենիքում գրադարձ էինք հավաքական գոյապահպանության խնդիր լուծելով:

<sup>1</sup> Edward Eggiston. The Beggars of a Nation. New York, 1897, p. 78.

<sup>2</sup> Bruce Philip Alexander. Economic History of Virginia in the 17<sup>th</sup> Century. V. 1, p., 365, 368.

Երկրորդ պատճառը տարածության հեռավորությունն էր, ինչը հնարավորություն չընձեռոց ծևավորելու առևտրատնտեսական ներկայություն, բացի այդ, Ամերիկան ինքը լինելով նոր գոյացություն՝ ծևավորման ու կայացման փուլ էր գտնվում:

Արդյունքում, ի տարբերություն Եվրոպական, ասիական, աֆրիկյան ի սկզբանե առևտրատնտեսական համայնքերի, ամերիկահայ գաղթօջախն ունեցավ ծագման այլ՝ ոչ տիպական դրդապատճառներ և զարգացման քիչ այլ օրինաչափություններ:

XIXդ. առաջին տասնամյակում Արևելքում քարոզչական լայն գործունեություն է սկսում ծավալել ամերիկյան բողոքական եկեղեցին՝ նպատակ ունենալով ծանոթացնելու Նոր աշխարհին և քրիստոնեական իրենց դավանանքին: Արդեն 1818-1822թթ. Երուսաղեմում հանդիպում են հայն ու բողոքական միսիոները, տեղի է ունենում կրոնական հաղորդակցություն, որն էլ հիմք է դնում հայամերիկյան ընդհատված փոխարարերությունների վերսկսմանը: Բերեք գյուղում Ղամբար Աստիկի տանը բացվում է բողոքական վարժարան, և շուտով այդպիսի հաստատություններ հիմնվում են բազմաթիվ հայաբնակ վայրերում սկիզբ դնելով հայ բողոքականության ի հայտ գալուն:

Նոր ժամանակների առաջին հայը, որ հայտնվում է ամերիկյան հողի վրա, 16-ամյա պոլսեցի Խաչատուր Ոսկանյանն էր: 1834թ. այս պատանին ամերիկյան միսիոներների հովանավորությամբ մեկնում է Նյու Յորք և վեց տարի կրթություն ստանում: Այդ տարիներին ծևավորվում է նրա բնավորությունը, խառնվածքը ապրելով ազատախոհության, միանգամայն այլ բարերի պայմաններում, նա, ըստ եռթյան, ծեռք է բերում ամերիկացու հատկանիշներ՝ լրջությունն ու համարձակությունը զուգակցելով զարմանալի թերևամտության հետ: Այսպես, 1840թ. Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա հիմնում է «Ազդարար Բիւզանդեան» թերթը և առաջին բանը, որ անում է, պոլսահայության իրական առաջնորդներին և Օսմանյան կայսրության ամենաակնառու դեմքերին՝ հայ ամիրաներին, խստորեն քննադատելու լինում: Դա պատճառ է դառնում, որ հանդեսը տեղնուտեղը փակվի:

1854թ. նա ստիպված կրկին բռնում է ԱՄՆ-ի ճամփան: Նավի վրա պատահաբար ծանոթանում է «Նյու Յորք հերալդ» թերթի տնօրեն-խմբագիր Զեյմս Գորդոն Բենեթի հետ և վերջինիս զարմացնում իր գիտելիքներով, անգերենից բացի Եվրոպական մի

քանի այլ լեզուների իմացությամբ: Արդյունքը լինում է այն, որ Բենեթը նրան առաջարկում է աշխատակցել թերթին: Նա եռադուն գործունեություն է ծավալում, «Նյու Յորք հերալդում» տպագրում է բազմաթիվ հոդվածներ Արևելքի և հայերի մասին՝ հային անվանելով Փոքր Ասիայի յանկի: Խիստ քննադատում է նաև բողոքական միսիոներներին, որոնք մեր ժողովորդին ներկայացնում էին որպես կիսավայրենի և անկրոն ազգություն: Միաժամանակ «Դայու տղա» կեղծանվամբ հոդվածներ է տպագրում Կ. Պոլիսի «Մասիս»-ում՝ ներկայացնելով Ամերիկյան և ամերիկյան ապրելակերպը: Երկու անգամ վերադառնում է Կ. Պոլիս (ընդորում, մեկ անգամ՝ ամուսնանալու նպատակով), ապա ընդմիշտ հաստատվում է ԱՄՆ-ում: Աշխատում է Նյու Յորքի մաքսատան գրագիր, Կոլումբիա համալսարանի իրավաբանական ֆակուլտետի գրքապահ ու շենքի պահակ, որոշ ժամանակ՝ Թուրքիայի հյուպատոս, ապա ծեռք բերելով անվանի լրագրողի համբավ՝ դառնում Նյու Յորքի Մամլո ակումբի (Press Club) նախագահ...

Խ. Ոսկանյանը հղանում է նաև մի գաղափար, որը նրա մահվանից (1900թ.) հետո դեռ Երկար ժամանակ շարունակում է գոյատևել: Նա արևանտահայ Թոփիհանելյանի և արևելահայ Մանգասարյանի հետ կազմում է մի ծրագիր, ըստ որի ԱՄՆ-ում պիտի հիմնվեր մի հայկական քաղաք և կոչվեր «Նյու Անի»: Արևելքից արեւմուտք ծգվող սրբիները պիտի կոչվեին Վան, Մուշ, Զեյթուն, Կարին և այլն, իսկ հյուսիսից հարավ ծգվող ավենյուները՝ իրենց և այլ ներգաղթողների ազգանուններով: Դետաքրքիր է, որ քաղաքում պիտի լիներ Եկեղեցի, հանրային գրոսայգի, դպրոց, թատրոն և... թուրքական բաղնիք:

Խ. Ոսկանյանն իր գործունեությամբ, լրագրային քարոզությամբ դարձավ այն դրդիչ ուժը, որն այլ հայերի և մղեց բախտ որոնելու Ամերիկայում: Եվ այստեղ մենք առնչվում ենք արտագողթի եռթյան ու մեխանիզմի հետ: Դայն արտագողթել է տարբեր դրդապատճառներով: Եթե հին ժամանակներում նա, որպես հնագույն ժողովորդի ներկայացուցիչ, աշխարհաճանաչողության և միջազգային առևտրական կապեր հաստատելու բնատուր ծգմանն էր հագուրդ տալիս, ապա կորցնելով պետականությունը՝ Ենթարկվում է ազգային, քաղաքական, կրոնական, տնտեսական բռնածնչումների և մշտապես ստիպված լինում ապահով գոյատևման հանգրվաններ որոնել: Ընդ որում, ծևավորվում է ազգային

հոգեբանության մի առանձնահատկություն ևս. զարմանալի դյուրահավատություն դրսևորելով իր նկատմամբ ցուցաբերված բարությանը կամ նույնիսկ բարի խոսքերին ու խոստումներին, նա արտագաղթելու հարցում բացարձակ կասկածամտությամբ է վերաբերվում օտարներին: Բոլոր ժամանակներում արտագաղթի պատրաստվելիս հայի համար վճռորոշ են եղել հայրենակցի հավաստիացումը և ապրելակերպը: Այս թե ինչու խաչատուր Ոսկանյանի քարոզչությունն իսկովն սկսեց արդյունք տալ: Եվ պատահական չէ, որ ամերիկահայության առաջին սերունդը բաղկացած էր նրա համերկրացի պոլսեցիներից. մի կողմից՝ բնական ծգուում կար փրկվելու Օսմանյան կայսրության ծիրաններից, մյուս կողմից՝ աչքի առաջ էր հայրենակցի օրինակը:

Արտագաղթողների սոցիալական կազմը բավականին խայտարդետ էր: Այսպես, եթե երկրորդ հայը՝ Սենեքերիմ Տեր-Մինասյանը, 1837թ. ավարտեց Փրինսրոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը և դարձավ ամերիկահայ առաջին բժիշկը, ապա երրորդը՝ նիսիոներ Դուայթի սպասավոր Թադևոսյանը, որն սկզբում «վիթխարի» աշխատավարձ էր ստանում՝ ամսական կես դոլար, անգլերեն սովորելուց հետո 1841թ. սկսեց զբաղվել ռահաք լոխումի (ֆիք փեստ՝ թզի խմոր) պատրաստմամբ, երկար տարիների ընթացքում մեծ հարստություն դիզեց, բայց հանդուգն ծեռնարկների մեջ մտավ և ամեն ինչ կորցրեց:

Եթե 1843թ. Խարբերդից Նյու Յորք եկած Քրիստովոր Սերոբյանը մի քանի տարի սպասավորություն արեց, եղավ ախոռապան ու ծիաբույժ, ավարտեց Յելի համալսարանը ու դարձավ ճանաչված քիմիկոս, ապա հայտնի է մի հայ, որ երեք տարի ապրեց մորմնների մոտ ու ևս մեկը, որ դարձել էր կովրոյ:

Ամերիկահայ համայնքի այս առաջին՝ 1834-1867թթ. շրջանը սահմանավորման փուլ էր, և գաղթականություն չէր հասկացության դասական իմաստով, դրանք 50-60 ուսանողներ, արհեստավորներ և վաճառականներ էին, որոնց զգալի մասը վերադարձավ հայրենիք՝ Արևմտյան Հայաստան: Ընդ որում, եթե առաջին արտագաղթողները պոլսեցիներ էին, ապա 1853-1854թթ.-ից, երբ բողոքականությունը տարածվեց Թուրքիայի նահանգներում, ԱՍՍ սկսեցին մեկնել նաև գավառաբնակները, որոնց մեջ թվային գերակշռություն էին կազմում խարբերդիները:

Երկրորդ շրջան՝ 1867-1896թթ., կարելի է բնորոշել որպես ինքնահաստատման փուլ, և դա, թերևս, ամենաբարդն էր: Զարկ է հաշվի առնել այն իրողությունը, որ ԱՍՍ-ն ինքը կազմավորման և զարգացման փուլում էր, և հայերը լիովի կրում էին բոլոր դժվարությունները, մասնակցում երկրի կայացմանը: ԱՍՍ-ը ներկայացնում էր վիթխարածավալ մի տարածք, որն անհրաժեշտ էր յուրացնել, իսկ դրա համար աշխատուժ էր պահանջվում: Եվրոպայից, Աֆրիկայից, Ասիայից ժամանողները գերհագեցրեցին աշխատանքի շուկան, և աշխատուժի էժանությամբ այլոց համար մրցակցային վտանգ էին ներկայացնում հայերը, որոնք տարագրվելով աղքատ ու հետամնաց Թուրքիայից, միայն մեկ նպատակ ունեին ապրուստի նվազագույն միջոցներ հայթայթել և նյութապես օժանդակել բնօրրանում մնացած իրենց հարազատներին: Անգամ կենցաղային իմաստով հայերը լուրջ նեղություններ էին կրում, բավական է ասել, որ բոլու նաշկի, և աչք-ունքի պատճառով դիտվում էին որպես սևամորթներ, և ապրելու իրենց իրավունքը, հատկապես «բնիկների» հոլանդացիների հետ, երբեմն ստիպված էին լինում պաշտպանել պարզունակ ծեծկուտությի միջոցով: Սակայն դարերով կուտակված գենետիկական աշխատասիրությունը, դժվարությունները հաղթահարելու, զրկանքներին դիմակայելու անկոտրում կամքը և ծեռներեցության ոգին այստեղ էլ բարեբեր աղդեցություն ունեցան. Եթե մինչև 1875-ական թթ. նրանք հիմնականում ապրում էին Նյու Յորքում ու շրջակայքում, ապա աստիճանաբար յուրացնելով լեզուն, ծանրանալով նոր բարեբերին ու թվապես ավելանալով՝ սկսեցին սփովել երկրի նահանգներով:

1880-ական թթ. հիմնվում են Մասաչուսեթսի նահանգի Բուտոն և Ուորչեսթ (Ուստոր) քաղաքների համայնքները: Ուշագրավ է հատկապես վերջինիս պատմությունը: Առաջին հայ տարագրյալը եղել է ոմն բիթլիսի Կարապետ, որը 1867թ. եղել է ամերիկյան միսիոների սպասավոր, ապա բանվորություն արել American Steel Write Trust երկարաթելի գործարանում: Նրա նամակ-հորդորներից Ուստոր են գալիս Խնուսի Շեվիրնե գյուղից Յովի. Յազճյանը և մշեցի Յովի. Փոթիկյանը: 1880թ. այստեղ արդեն կային մեկ տասնյակ հայեր, որոնց թվում էր և կարպետի գործարանատեր, պոլսեցի Թովման Նշանյանը (սրա եղբայր Օննիկ Նշանյանը 1910-ական թթ. Սան Դիեգոյում դարձավ միլիոնատեր): 1888թ., երբ Ուստորի հայոց թիվը հասնում է մի քանի հարյուր հոգու (ամբողջ ամերիկա-

հայոց թիվը 1200 էր), ստեղծվում է «Կաճառ հայկական» առաջին կազմակերպությունը՝ 70 անդամով, որի եռանդուն մասնակցությամբ և ամերիկահայոց կամավոր ու քաջմերախտ հոգևոր առաջնորդ Յովսեփի ծ. վրդ. Սարաջյանի ջանքերով կազմավորվում է առաջին հոգաբարձությունը: Դիմնական նպատակ է դառնում Եկեղեցի կառուցելու համար 5200 ոտնաչափ հողատարածքի գնումը, որի արժեքն էր 1275 դոլար<sup>1</sup>: Փող հայրայթելու նպատակով «Կաճառի» ատենապետ Միքայել Թոփիհաննեյանը՝ Խ. Ուկանյանի գաղափարակիցը, մեկնում է Մանչչստր, Լոնդոն, Փարիզ և հանգանակում 830 դոլար: Ի վերջո, 25 քաղաքների հայերի դրամահավաքի և նյույորքարնակ խոշոր գորգավաճառ Յովի. Թավշանճյանի ու փաստարան Գյուլբենկյանի նվիրատվությունների շնորհիվ 9460 դոլարով 1890թ. կառուցվում է Ս. Փրկիչ Եկեղեցին (որը, չգիտես ինչու համարվում է ամերիկահայության առաջին Եկեղեցին, չնայած նույն թվականին Ֆրեզնոյում արդեն գործում էր Ս. Երրորդություն փայտաշեն Եկեղեցին):

Արևելքին զուգընթաց, հայերն սկսեցին եռանդորրեն «նվաճել» նաև Երկրի արևմուտքը՝ Կալիֆորնիան: Ի տարրերություն օրավուր արդյունաբերապես զարգացող, բնապահպանական տեսակետից վնասակար, խստաշունչ ծմեռներ ունեցող արևելքի, ԱՄՆ-ի արևմուտքը բնակլիմայական պայմաններով հայերին հարմար էր, նաև էր իրենց բնօրրանին, ապրելու բնական միջավայրին և կարելի էր զբաղվել գործունեության ավանդական տեսակներով՝ երկրագործությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ:

Արևմուտքում հայտնված առաջին հայերը եղել են 1880թ. Ֆրեզնոյում բնակություն հաստատած մարզվանցի եղբայրներ Ջակոր և Կարապետ Սերորյանները, որոնք զբաղվում էին պտղավաճառությամբ: Երկու տարի անց նրանց հորդորներով Ուստրից տեղափոխվեցին նյուև Եղբայրները՝ Սիմեոնը, Գևորգը, Յովհաննեսը, ինչպես նաև մի քանի այլ հայրենակիցներ: Ջակոր Սերորյանն առաջինն էր, ով կալվածք գնելով՝ դարձավ հողի սեփականատեր:

1883թ. Արևմտյան Ջայաստանից ներգաղթում է 60 հոգի, իսկ նյույորքարնակ մշեցի Մելքոն Մարգարյանն իր ծեռքով կառուցում է առաջին սեփական տունը:

<sup>1</sup> Այս գումարի մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ Յ. ծ. վրդ. Սարաջյանի տարեկան ոռնիկը 500 դոլար էր:

1897թ. այստեղ արդեն բնակվում էր 329 հայ, որոնք ունեին 1800 ակր սեփական հող, իսկ հավաքական նյութական կարողությունը կազմում էր 150-200 հազար դոլար: Կցանկանայինք առանձնակի ուշադրություն հրավիրել այս իրողության վրա. հայը, զրկված լինելով իր հայրենիքում սեփական հողին տեր կանգնելու հրավունքից՝ օտար ափում դառնում էր հողի սեփականատեր...

Լու Անջելեսի մերձակայքում գտնվող Սան Բեռնարդինո բնակավայրում հաստատված առաջին հայերը եղել են խարթերդի Դավիթ, Գասպար և Մովսես Թաշճյան Եղբայրները, որոնք 1890թ. այստեղ են գալիս Վերմոնտից և զբաղվում գերեզմանաքարեր պատրաստելով, ինչպես նաև հողի ու կալվածքների առևտորվ:

Սան Ֆրանցիսկոյում հատնված առաջին հայը եղել է այն նույն մշեցի Ս. Մարգարյանը, որը 1883թ. մի քանի ամիս այստեղ ապրելուց հետո տեղափոխվում է Ֆրեզնո, իսկ առաջինը բնակություն է հաստատում պոլսեցի Մանուկ Մանուկյանը:

1880-1890թթ. հայկական համայնքներ են սաղմնավորվում նաև Ոոդ Այլենդ նահանգի Ուոնսաքեր, Փոնթաքեր-Սենթրալ Ֆոլս, Յուտայի նահանգի Սոլը Լեյը Սիթի, Վաշինգտոնի նահանգի Սիեթը, Չոննեքքիքութի նահանգի Բրիջփորթ, Ջարթփորդ, Նյու Բրիթան, Մասաչուսեթսի նահանգի Լոուրենս, Լոուել, Յեյվերիլ, Նյու Զերսի նահանգի Փաթերսոն, Վիսկոնսինի նահանգի Ռեյսին քաղաքներում և այլ բնակավայրերում: Այսպիսով, աստիճանաբար ստեղծվեց մի կենսամիջավայր, իհմք դրվեց մի հանգրվանի, որն ապագայում պիտի պատսպարեր սպանդից փրկված հայության ստվար զանգվածներին:

1895-1896թթ. Դամիդի կազմակերպած ջարդերը պատճառ եղավ ամերիկահայության թվի ավելացմանը, որով սկսվեց Երրորդ 1897-1915թթ. շրջանը: Ըստ ԱՄՆ-ի ներգաղթի դեպարտամենտի պաշտոնական տվյալների, 1900-1910թթ. Երկիր ներգաղթեց 25.824 հայ, բացարձակ մեծամասնությամբ թուրքիայից: Այսպես, եթե 1890թ. Փրովիդենսում կար ընդամենը 35 հայ, ապա 1897թ.՝ 500, 1902թ.՝ 1350, իսկ 1910թ.՝ 2500: Եթե 1890թ. Ֆրեզնոյում կար 165 հայ, 1897թ.՝ 329, ապա 1910թ. Արևմտյան Ջայաստանի 76 բնակավայրերից գաղթել և այդտեղ հաստատվել էին 2326 հոգի:

Դայոց թվի կտրուկ աճը պատճառ դարձավ ամերիկյան այլ քաղաքներում նոր գաղթօջախների ստեղծման: Այդպիսիք էին Միչիգանի նահանգի Դետրոյտը, Վիսկոնսինի նահանգի Սաութ

Միլուոկին, Նյու Յորքի նահանգի Սիրակուլը, Նյու Ջերսի նահանգի Յունիտն Սիթին, Մասաչուսեթսի նահանգի Ուոթերբաունը և այլ բնակավայրեր:

Ուշագրավ, գրեթե նովելային պատմություն ունի Ֆրեզնոյից 42 մղոն<sup>1</sup> հեռավորության վրա գտնվող Եդեմ (Eden) քաղաքի գաղթօջախի հիմնումը: Սա ԱՄՆ-ի միակ հայանուն բնակավայրն էր: Նախկին անվանումը Լոուել էր, որտեղ ապրում էին 5 ամերիկացիներ, երբ 1901թ. Մալաթիայից տարագրվում է Գաբրիել Բաղդոյանը: Նա բնակություն է հաստատում քաղաքի արևելյան մասում, գնում 40 ակր հող և դառնում առաջին այգի տնկողը: 1902-1903թթ. այստեղ են տեղափոխվում Ֆրեզնոյից՝ Զ. ժողեֆյանը, Բոստոնից՝ Ն. Խապենճյանը և Մ. Թոգմանյանը, ապա՝ պատվելի Դ. ճենանյանը, Յովի. Թայանը, Ն. Արամյանը, Դ. և Գ. Ասլանյանները: Մի քանի տարվա ընթացքում հայեր են ներգաղթում Ադանյայից, Մարաշից, Ձեյրունից, Էվերելից, Ռուֆայից, Չոնագլուից, Չնքուշից, Խարբերդից և Արևմտյան Դայաստանի այլ վայերից: Նրանք հողատարածքներ են գնում, այգիներ, պարտեզներ տնկում և անապատը վերածում ծաղկաստանի: Շուտով քաղաքը վերածվում է գրեթե քացառապես հայերով բնակեցված մի վայրի, և բնակիչների խնդրանքին անսալով՝ ամերիկյան կառավարությունը քաղաքը վերանվանում է Եդեմ: Քաղաքում կար մեկ լուսավորչական (Ս. Աստվածածին, օծվել է 1911թ.) և մեկ բողոքական եկեղեցի, իսկ 1917թ. այստեղ ապրում էր 800 հայ:

Կալիֆորնիայում հայերի տնտեսական հաջողությունները, նյութական ձեռքբերումներն այնքան ակնառու էին, որ 1900-1902թթ. ճենանյանը, Սանդիկյանը և այլք, վերակենդանացնելով Ուսկանյանի, Թոփիանելյանի և Սանգասարյանի երեմնի գաղափարը, հոդվածներով ու քարոզներով ամերիկահայությանը կոչ են անում թողնել բանվորությունը, տեղափոխվել Ֆրեզնո և ստեղծել ... Ամերիկյան Դայաստան:

1915թ. Դայոց Ցեղասպանությունից հետո ամերիկահայության կյանքում սկսվեց նոր շրջան՝ կորցրած հայերնիքի մորմոքի, գոյապահանության, արդար պահանջատիրության ժամանակը:

Վերևում արդեն նշեցինք, որ, ի տարբերություն այլ համայնքների, ամերիկահայ գաղութի ժագումն ու զարգացումն ունի իր

անձնահատկությունները: Եթե ավելի հին համայնքները (Դնդկաստան և Դնդկաչյնի երկրներ, Եգիպտոս, Եվրոպա, Ռուսաստան և այլն) հիմնում էին պրոֆեսիոնալ վաճառականները՝ բացառիկ օգտաբերության համար հաճախ արժանանալով հարկային ու մաքսային արտոնությունների, ապա հեշտ է նկատել, որ ԱՄՆ տարագրվողների մեծ մասը, որպես կանոն, հալածյալներ էին, որոնք դրամագլուխ ու վաճառականական հմտություններ չունեին: Սակայն արագորեն ընթանելով երկրի ընդհանուր դրվածքը (որը պարզունակ կերպով կարելի է այսպես բնութագրել՝ Ենթարկվել օրենքներին և այդ սահմաններում գործել ազատորեն), պարզելով խաղի կանոնները և վստահություն ունենալով դրանց անխախտության նկատմամբ, նրանց մեջ արքացավ ձեռներեցության, աչքաբացության, ստեղծարարության դարերով ձևավորված գենը, որը գուգակցվելով ֆանտաստիկ աշխատասիրության հետ՝ հանգեցրեց բացառիկ արյունքների:

ԱՄՆ-ում հայոց առևտրատնտեսական ներկայությունն սկսվում է հենց առաջին շրջանից (1834-1867թթ.): Առաջին վաճառականը պուլսեցի Սարգիս Սինասյանն էր, որն ուսանել էր Բերեթի Սայրուս Դամինի ամերիկյան վարժարանում, ապա 1848թ. մեկնել ԱՄՆ, բնակվել նախ Նեչուայում, հետո՝ Բրուքլինում և երկար տարիներ ամերիկյան ապրանքներ արտահանել Թուրքիա: Լինելով խորապես ազգանու մարդ՝ նա վիրխարի օժանդակություն է ցուցաբերել հայոց Եկեղեցիների կառուցմանը և հայ երեխաների կրթությանը. 1856-1866թթ. իր տարեկան եկամտի կեսը, իսկ դրանից հետո մինչ ի մահ (1905թ., Նյու Յորք)<sup>2</sup> մեկ երրորդը նվիրաբերել է զանազան ազգանպաստ ձեռնարկների:

Նրան հաջորդում են զյուրնացի Սարգիս Փափազյանը (Թրոյում զբաղվել է առևտրով և մեծ հաջողությունների հասել), տիգրանակերտցի Ասլան Սահակյանը (1862թ. Ֆիլադելֆիայում եղել է վաճառական ու կալվածատեր. 85 հազար դոլար է կտակել ազգային բարեգործության համար), մարաշցի Դակոր և Դարություն Խոկյան Եղբայրները (մեկը Ձերսի Սիթի Դայցում, մյուսը Նյու Յորքում 1867թ. հիմնել են գորգի արտադրություն), մեզ արդեն հայտնի մշեցի Մելքոն Մարգարյանը (նախ Եղել է վաճառական, ապա՝ 1871թ. Նյու Յորքում հիմնել է կարպետի գործարան, որի սենյակներից մի քանիսը նորեկ հայրենականների համար անհատույց վերածել էր հյուրանոցի):

<sup>1</sup> 1 մղոն = 1,609 կմ:

Երկրորդ (1867-1896թթ.) և երրորդ (1896-1915թթ.) շրջաններում, քանակային ավելացմանը զուգընթաց, աճում է նաև ծեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների թիվը:

1878թ. Փրովիդենսում (Ոոդ Այլենդի նահանգ) բնակություն են հաստատում և խանութներ բացում S.Խոհարարյանը, Ա.Մավյանը, Ղ.Ղազարյանը, Դ.Պապոյանը, Վ.Սարգսյանը, Մ.Էվարյանը, Սողիկյան Եղբայրները և այլք: 1894թ. այստեղ հիմնվում է առաջին հանայնքային կառույցներից մեկը՝ «Ազգային տնտեսական միություն», որի նպատակն է նպաստել հայոց տնտեսական, մտավոր ու ֆիզիկական զարգացմանը: 1910թ. Փրովիդենսի 2500 հոգանոց գաղթօջախում կար շուրջ 150 մանրավաճառ, 10 գործարանատեր (5-30 բանվորով) և 40 կալվածատեր (միայն անշարժ գույքի արժեքը կազմում էր 92.680 դոլար):

Նույն նահանգի Նյու Փորթ քաղաքում խարբերդի Պետրոս և Հովհաննես Գաղանցյան Եղբայրները 1884թ. հիմնում են առաջին ամերիկահայ առևտրային ընկերությունը, որն զբաղվում էր գորգերի և արևելյան ասեղնագործ իրերի վաճառքով: Ընկերությունը փակվում է 1893թ., երբ Եղբայրները վերադառնում են հայրենիք, բայց 1896թ. Դամիդի կոտորածների ժամանակ նրանք վերադառնում են ԱՄՆ և մեկը՝ Նյու Փորթում, մյուսը՝ Նյու Յորքում, զգալի հաջողությունների հասնում բիզնեսում:

Նահանգի Փոնթաքեթ-Սենթրալ Ֆոլս քաղաքում բնակություն հաստատած (1891թ.) առաջին հայը Եղել է սուրուցի Գ. Յաղուայանը, որը նպարեղենի ու հրուշակեղենի խանութ է բացել Միլ սթրիթում: Ուտնսաքեթ քաղաքում 1910թ. կար 120 հայ, որոնցից 13-ը պտղավաճառ էին, 4-ը՝ նպարավաճառ, մեկը՝ մսավաճառ, մեկը՝ կաթնավաճառ: 1913թ. նահանգի ամենաունետր հայերն էին կալվածատեր Դ. Պոյաճյանը (30.000 դոլար կարողությամբ), նպարավաճառ Ն. և Գ. Տեմիրճյան Եղբայրները (20.000 դոլար) և 100 ակր հողի սեփականատեր Խ. Պողոյանը (10.000 դոլար):

Ի տարբերություն արևելյան ափի, ուր հայոց բիզնեսը հիմնականում առևտրարդյունաբերական էր, արևմուտքում՝ Կալիֆորնիայում, հայերի տնտեսական հաջողությունների հենքը հողի սեփականությունն էր ու գյուղատնտեսությունը: 1913թ. Ֆրեզնոյում 2326 հայեր (ի դեպ, այս թվի մեջ մտնում են նաև կանայք ու երեխաները) տիրում էին 12.816 ակր հողատարածքի և արտադրում տեղական չամիչի 1/5-ը: Եղեմի 300 հայերի պատկանում էր

հողի 1/5-ը (2574 ակր): 1902թ. Կարապետյան Եղբայրների հիմնած Թուլարա քաղաքի համայնքում 1911թ. կար 70 հայ (62-ը՝ բազմաշենցի), որոնց պատկանում էր 1075 ակր հողատարածք: Ամբողջ Կալիֆորնիայում 1913թ. բնակչություն էր 6925 հայ, որոնց պատկանում էր շուրջ 19 հազար ակր հող, իսկ հավաքական ունեցվածքը կազմում էր 4 մլն. դոլար:

Այժմ փորձենք վերլուծության ենթարկել և գնահատել ամերիկահայ կապիտալը XXI դարում: առաջին քառորդում, ինչն, ըստ եռթյան, միաժամանակ նաև ԱՄՆ-ում հայոց շուրջ հարյուրամյա ներկայության ամփոփումը կլինի:

Դա անելու համար, անշուշտ, անհրաժեշտ էր հիմնվել վիճակագրական տվյալների վրա: Այդպիսի լավագույն աղբյուր է 1925թ. տպագրված մի գուցակ, ուր ընդգրկված են ԱՄՆ 23 նահանգների 91 քաղաքների 5000 հայեր: Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակ ԱՄՆ-ում հայության թիվը մոտ 30.000 էր, իսկ ցանկում միայն տղանարդիկ են, ընտանիք պահողներ՝ զբաղվունքի տեսակի և հասցեի նշումով, ապա տրամաբանական է Եղբադրել, որ կունենանք ամերիկահայության վերաբերյալ գրեթե ամբողջական, հավաստի և ճշգրիտ պատկեր:

Եվ այսպես: Այդ 5000 հոգուն կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին ստվարածավալը խումբը՝ շուրջ 3000 հոգի, բանվորներ էին, ուսանողներ, բժիշկներ, իրավաբաններ, ծառայողներ և այլ զբաղվունքի տեր մարդիկ:

Երկրորդ խումբը՝ մոտավորապես 1000 հոգի, զբաղվել է մանր առևտրով: Սա վկայում է այն մասին, որ զգալի մի հատված, չունենալով կրթության անհրաժեշտ մակարդակ կամ դրամագլուխ, հանապազորյա հաց վաստակելու խնդիր է լուծել:

Երրորդ խումբը զբաղվել է բիզնեսով, և դրա վերլուծությունն անշափ հետաքրքիր է: Թվական աճման սանդղակով առաջնորդվելիս՝ վեցին տեղում են (բայց, անշուշտ, ոչ կապիտալի արժողությամբ) գործարանատերները՝ 23 անձ: Մրանց թվում աչքի էին ընկերությունների հայ գործարանատերները, իսկ ամենանշանավորը Սամուելյան Եղբայրների պաղպաղակի գործարանն էր Բոստոնում:

Դաշորդը բիզնեսի զանազան տեսակներով զբաղվողներն են 23 անձ և 3 ընկերություն: Մրանց մեջ նշանավոր էին Ոոդ Այլենդում Մ. Քայարյանի հիմնած «Քայարյան Եղբայրներ» խոշոր

վաճառատունը, Բոստոնում՝ նպարավաճառ Հովի. Նահիկյանը, ածխավաճառներ Ադամյան Եղբայրներ, «Քյուրքճյան և որդիներ» կանանց գգեստի վաճառատունը, նպարեղենի «Արարատ» ընկերությունը: Սակայն ամենահինը և ամենանշանավորը «Մ. Մ. Կոնդապյան և որդիներ» հագուստի առևտրական տունն էր:

Ծխախոտարտադրությամբ և վաճառքով զբաղվում էր 28 անձ: Սա դարավոր տնտեսական գործունեության այն տարատեսակն էր, այն ավանդական բիզնեսը, որին հայերը հրաշալի էին տիրապետում, և պատահական չէ, որ «հայկական» ծխախոտը կայուն տեղ ուներ ամերիկյան շուկայում: Ամենահինը 1894թ. Ուստրում հիմնված Մ. և Յ. Հովհաննիսյան Եղբայրների (Hovenesian Bros.) Փարբիկան էր: Նույն քաղաքում Գ. Մարգարյանը տեղական և թուրքական հումքից պատրաստում էր «Մուշ» և «Egyptian Queen» անվանումներով բուրումնավետ, ընտիր սիգարետներ, և ամեն տուփի վրա գետեղված էր նրա անունը ու հասցեն: «Հովհաննես Կյուրենյան և որդի» (John Gorakian & Sons) Փիրման ձեռք էր բերում թուրքական, ռուսական, բուլղարական հումք և Բոստոնում արտադրում «Haremına» անվանմամբ սիգարետներ:

41 անձ զբաղվում էր ակնագործությամբ և ակնավաճառությամբ: Այս ոլորտը ոչ միայն հայոց առևտրատնտեսական գործունեության դարավոր ավանդույթների շարունակումն էր, այլև մի բիզնես, որ պահանջում էր մտավոր կարողությունների դրսնորում և դաժան մրցակցությանը դիմակայելու ունակություն: Սա վկայում էր նաև այն մասին, որ ջարդերից խույս էր տվել և ապահովություն որոնելով ԱՄՆ ներգաղթել նաև արևմտահայ խոշոր կապիտալը: Բոստոնում նշանավոր էին «Արոյան ակնեղենի ընկերությունը», Մ. Շամյանը, Օ. Օհանյանը, Լ. Միսիրյանը, Թեփիկյանը, Նյու Յորքում՝ «Արամ Սարայտարյան և Անդրանիկ Պուճաքճյան» ընկերությունը, Վարդերեսյան Եղբայրները, Փափազյան Եղբայրները, Մինասյան Եղբայրները, Բրիջփորթում՝ Մ. Նալպանտյանը, Բերկլիում՝ Ալյան Եղբայրները, Պ. Ազատյանը, Ուստրում՝ «Բրուտյան» վաճառատունը և այլն:

Դաջորդ երեք տեղերը գրավում են հյուրանոցատերերը (45 անձ), ռեստորանատերերը (76 անձ ու մեկ ընկերություն) և անշարժ գույքի առքուվաճառքով զբաղվողները (77 անձ և 2 ընկերություն): Բիզնեսի այս ճյուղերում նման մեծ թվաքանակն, անշուշտ, թելադրված էր պահանջարկով և դրան համարժեքորեն

արձագանքելով: Ընդ որում, եթե առաջին երկու տարատեսակները համեմատաբար ապահով էին, և մրցակցային խիստ վտանգ չէին պարունակում, ապա վերջինը պահանջում էր ձեռներեցություն և միջնորդական գործարքներ կատարելու ունակություն, իսկ սա նույնպես հարյուրամյակների ընթացքում ծևավորված ազգային վաճառականական յուրահատկություն էր:

Ի վերջո, ամերիկահայոց առևտրատնտեսական գործունեության թիվ 1 տեսակը գորգավաճառությունն էր. 1925թ. այդ բիզնեսով զբաղվում էր 332 անձ և 29 ընկերություն:

Պ. Կյոլճուկյանը, որ ավարտել էր Չիկագոյի թենտ իրավաբանական քոլեջը, թղթակցում էր Թիֆլիսի «Նոր Ղարին» և Զմյուռնիայի «Արևելյան մամուլին», անգլերեն էր թարգմանում հայ ժողովրդական հեքիաթներն ու բանատեղծներին, բայց ապրուստը վաստակում էր գորգավաճառությամբ՝ Սենթ Փոլ ու Միննեապոլիս քաղաքներում, և առաջիններից մեկն էր, որ փորձեց ամերիկահայ բիզնեսը տնտեսական վերլուծության ենթարկել, 1912թ. գործ էր. «Ամերիկահայ վաճառականություն ասելով՝ պետք է հասկանալ արևելյան գորգի վաճառականությունը»: Ըստ նրա դիտարկումների, տարեկան ընդհանուր առնամբ 5 մլն. դոլարի գորգ էր ներկրվում ԱՄՆ, և դրա 3/4-ը հայերի ծեռքում էր: Սա միանգամայն արժանահավատ տվյալ է, որովհետև, ըստ մեր հաշվարկների, չկար ամերիկահայ մի համայնք, որտեղ գորգավաճառներ չլինեն: Օգտվելով այն հանգամանքից, որ ԱՄՆ-ում լայն հետաքրքրություն կար արևելյան կոչված գորգի հանդեպ, ամերիկահայերն օգտագործելով իրենց ազգակցական, հայենակցական կապերը, գորգ էին ներմուծում թե Պարսկաստանից ու Թուրքիայից, թե Ղարաբաղից, Շամախուց, Նուխուց և Արևելյան Ջայաստանի այլ վայրերից՝ ԱՄՆ-ում գորգավաճառությունը, փաստորեն, վերածելով մենաշնորհի:

Գորգավաճառների առաջնայնության և սփովածության մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ Բինգհեթոն (Սյու Յորքի նահանգ) քաղաքի համայնքի հիմնադիրն եղել է Կ. Կերըմենյանը, առաջիններից են եղել Ուրֆայանը՝ Սոլթ Լեյք Սիթիում, Գառթոյան Եղբայրները՝ Օրեգոնի նահանգի Փորթլենդ և Թեքեճյան Եղբայրները՝ Տագոնա քաղաքներում, Չիկագոյում (Իլինոյսի նահանգ)՝ «Փյուշմանյան» առևտրային տունը, Մելտոնյանը,

Յունիոն Սիրիում (Նյու Ջերսիի նահանգ)՝ «Թավշանճյան» առևտրական տունը և այլն:

1910-1920-ական թթ. նշանավոր էին «Մ. և Գ. Տեմիրջյան եղբայրներ» ընկերությունը, Փիրանյան եղբայրները՝ Բոստոնում, Մ. Թյուֆենկյանը՝ Ուստրում և այլն:

Սակայն հայոց գորգավաճառության կենտրոնն, անշուշտ, Նյու Յորքն էր, ուր այդ բիզնեսով զբաղվում էր 121 անձ և 19 ընկերություն: Ավելին, միայն 5-րդ ավենյուի թիվը 225 հասցեում գործում էին 22 անձ և 4 ընկերություն: (Զգիտենք այդ շենքը պահպանվել է, թե՝ ոչ, բայց եթե պահպանվել է, ապա արժեք հետևյալ արձանագրությամբ մի ցուցատախտակ փակցնել՝ ի գնահատումն նրանց ազգանպաստ գործունեության: «Դայ գորգավաճառներին՝ երախտապարտ հայրենակիցներից»): Այս հասցեում գորգավաճառությամբ էր զբաղվում նաև Շարություն Քյուրտյանը, ում կարելի է համարել ժամանակի ամերիկահայ լավագույն հայագետներից մեկը: Նա, թերևս, առաջինն էր, որ հետազոտեց գորգարվեստը և գիտական ծանրակշիռ փաստարկներով ապացուցեց, որ գորգ (կարպետ) երևույթը զուտ հայկական ծագում ունի, որ հնամենի ժամանակներից գորգագործությամբ զբաղվել են հայերը, ապա այն սովորեցրել, «հանձնել» պարսիկներին, թուրքերին և արևելյան այլ ժողովուրդների, իսկ իրենք անցել վաճառականության ոլորտ:

Ամփոփելով թվական տվյալներն ասենք, որ 1925թ. ԱՄՆ-ում կայուն, լրջմիտ բիզնեսով զբաղվում էր 645 անձ ու 35 ընկերություն: Եթե նկատի ունենանք, որ ընկերությունները գործում էին փայտիրության սկզբունքով, և դրանցում տասնյակ մարդիկ էին ընդգրկված, ապա ամենահամեստ հաշվարկներով բիզնեսում ընդգրկված էր 1000 հոգի: Եթե այս թվին ավելացնենք մանր առևտրի ոլորտում գտնվող ևս 1000-ին, ապա կնկատենք, որ տղամարդկանց 2/5-ը զբաղված էր առևտրատնտեսական գործունեությամբ:

Նույն Պ. Կյոլճուկյանը 1912թ. պնդում էր, թե այլ ազգերի համեմատ սնանկության ամենացածր ցուցանիշը ամերիկահայերի մոտ է՝ 4-5%: Սա կասկածի տեղիք չտվող ընդունելի և հավաստի տվյալ է, որն ունի պարզ ու միանգամայն գիտական բացատրություն: Դայոց կապիտալի 25 դար ընդգրկող գրավոր պատմությունը վկայում է, որ հայերի մոտ առհասարակ չնշին թիվ են կազ-

մում ֆինանսատնտեսական անհաջող գործարքների հետևանքով ունեցվածք կորցրածները, սնանկացածները (դրանք 1-2 տասնյակ են, իիմնականում՝ բախտախնդիրներ, որոնք, ի դեպ, եզակի տեղ կարող են գրավել արկածախնդրության համաշխարհային պատմության մեջ, քանզի ինչպես մեր լավից լավը չկա, այնպես էլ վատից՝ վատը): Դրա պատճառը հետևյալն է. հայն ունեցվածք վաստակել, հարստություն դիմել է արդար քրտինքով, խելքով, աշխատասիրությամբ, ծեռներեցությամբ և գիտակցության նստվածքներում ունենալով ինքնապահպանության զգացողությունը, այն բանի ընթացքում, որ փողն է գոյապահպանության լավագույն երաշխիքը՝ խիստ զգուշավորությամբ, խնամքով, հաշվենկատությամբ և վերաբերով կապիտալին: Այնպես որ ամերիկահայերի սնանկության 4-5 տոկոսանոց ցուցանիշը դեռ կարելի է համարել բարձր, իսկ դա էլ իր հերթին կարելի է բացատրել հայերի առաջին հոսանքների պրոֆեսիոնալ վաճառականական թույլ կարողություններով և ամերիկյան բիզնեսի առանձնահատկություններին առժամանակյա անընտելւությամբ: Ասում ենք առժամանակյա, որովհետև շատ շուտով նրանք հասան փայլուն հաջողությունների:

Ի վերջո, ինչո՞ւ ենք կարևորում մեր ժողովրդի ընդհանուր զաղաքակրթական համակարգի տնտեսական բաղադրյալը: Մենք պետք ենք ընթանք մի իիմնարար ճշմարտություն: Կորցնելով պետական անկախությունը, հայն, ըստ եռթյան, հետագայում միայն մեկ նպատակ է հետապնդել, միայն մեկ գործառույթ է ունեցել՝ պահպանել ազգային ինքնագիտակցությունը: Չունենալով պետականություն՝ հայը տարբեր երկրներում ձգտել ու բացահիկ հաջողությամբ ծեռք է բերել տնտեսական անկախություն, որովհետև կապիտալը գոյապահպանան լավագույն երաշխիքն էր: Փողը ազգային ազատություն էր...

Իսկ ինչպիսի՝ գործառույթ ուներ կապիտալն ամերիկահայ գաղթօջախի ինքնակազմակերպման խնդրում: Առաջին հերթին, բնականաբար, դրա կիրառությունը դրսնորվում էր եկեղեցաշինության մեջ: Եթե կապիտալը համեմատական ազատության լավագույն երաշխիք էր, ապա գոյատևման, ազգային ինքնագիտակցության պահպանման մարմնավորումը եղել է Դայ Առաքելական Եկեղեցին: (Ի դեպ, երախտիքի խոսք ունենք նաև ամերիկաբնակ հայ կարողիկներին, բողոքականներին, ավետարանականներին):

Ամերիկահայոց Եկեղեցիների կառուցումն ուներ մի առանձնահատկություն, որ բխում է առհասարակ գաղթավայրի «ոչ ավանդականորեն» ծևավորվելուց և զարգացման ինքնատիպությունից: Եթե այլ Երկրների պարագայում, որպես կանոն, Եկեղեցիները կառուցել, նորոգել, պահպանել են կոնկրետ անձինք, ապա ամերիկահայոց պարագայում այդ ամենի մեջ զգալի դեր ունեին հանգանակությունները: Վերջիններիս շնորհիվ են կառուցվել գրեթե բոլոր Եկեղեցիները: Այսպես, Փրովիդենսի Ս. Թարգմանչաց Եկեղեցին արժեցել է 9.100 դոլար (1914), Լոուելի Ս. Կարդանանցը՝ 10.156 դոլար (1916), Ռեյսինի Ս. Մեսրոպը՝ 25.000 դոլար (1925), Ֆիլադելֆիայի Ս. Սահակ-Ս. Մեսրոպը՝ 65.000 դոլար (1932), Նյու Յորքի Ս. Խաչը՝ 44.500 դոլար (1937), Պատերսոնի Ս. Ղևոնդյանցը՝ 13.000 դոլար (1938) և այլն, և այլն: Եթե ուշադրություն դարձնենք Եկեղեցաշեն հոգաբարձությունների և օծման կնքահայրերի ցուցակներին, ապա կնկատնք, որ դրանց մեջ եւկան գերակշռություն են կազմում առևտրատնտեսական գործունեությանը զբաղվողները: Ամենահամեստ հաշվարկներով կապիտալիստների մասնակցությունն ընդհանուր հանգանակություններին կազմում է կես առ կես: (Թեպետ, այստեղ ևս բացառություն կաբարերար Սամվել Տոնյանը 1915թ. Չիկագոյում գնել է մի լուրերական Եկեղեցի, որը ենթարկվել է անհրաժեշտ ծևափոխումների և մեկ տարի անց օծվել որպես Ս. Գրիգոր Լուսավորիչ): Դանգանակություններով Եկեղեցիներ կառուցելը ևս ուներ իր բացատրությունը. նախ, ԱՄՆ-ում կենսամակարդակը, դոլարի գնողունակությունը բարձր էր, իսկ աշխատանք ունեցող, քչով բավարվող հայը բաժին էր հանում նաև Եկեղեցուն, և դա հոգու տուրք էր, կենսակերպ, պարտականություն: Երկրորդ, դա նաև վկայում էր, որ ազգային խոշոր կապիտալը դեռևս կայացման փուլում էր:

Դեռ պիտի գար Կարագոյան Եղբայրների, Ալեք Մանուկյանի, Քըրք Քըրքորյանի և հարյուրավոր, հազարավոր այլ ազգանվեր հայկացուների ժամանակը, որոնք ժողովուրդ պիտի պահեին Սփյուռքում և էական ավանդ ունենային Դայաստանի Դանրապետության կայացման գործում...

Պոլսահայ մի քանի նշանավոր մտավորականներ խաչատուր Ուկանյանին տանում են Մեծ Եպարքոս Ալի փաշայի մոտ և խնդրում, որ պաշտոնի նշանակի: Եպարքոսը Ուկանյանին հարցում է: «Ամերիկացիներին թուրքերի հետ ծանոթացնելու լավագույն միջոցը ո՞րն է»: Դետևում է այսպիսի պատասխան: «Պետք է Նյու Յորքի մեջ թրքական բաղնիք մը շինել»: Բնականաբար, նման պատասխանից հետո աշխատանք ունենալու հույսերն ի չիք են դառնում:

Ամերիկյան դոլարի կանաչ գույնի բաղադրությունը հորինել է Թրիստափոր Սերոբյանը (մինչ այդ դոլարն ուներ դեղին գույն և հեշտությամբ կեղծվում էր): Նյութական անձկության պատճառով Ք. Սերոբյանը 6000 դոլարով իր գյուտի մենաշնորհը վաճառում է ամերիկյան կառավարությանը, վերադառնում 4.Պոլիս և պաշտոն ստանում թուրքիայի դրամահատարանում

Լու Անջելեսում հայտնված առաջին հայը եղել է կեսարացիուսանող Փառնակ Սերոբի Յետի-Գարտաշյանը, որն այստեղ բնակություն է հաստատել հիվանդությունից ապաքինվելու նպատակով:

Միերլում (Վաշինգտոնի նահանգ) բնակություն հաստատած առաջին հայը եղել է բալուցի գորգավաճառ Փիլիպոս Գլօյանը (K.L.Phillipos): Այս մարտը 1890թ. ժամանում է Նյու Յորք, հաստում ամբողջ Երկիրը, հասնում Ֆրեզնո, Սամ Ֆրանցիսկո, ապա նորից վերադառնում արևելյան ափ Սիեթը, 1894թ. Ս. Տիգրանյանի հետ բացում գորգի վաճառատում: 1893թ. նրա հորդորով ԱՄՆ է գայլս Եղբայրը՝ Նազարեթը: Երբ Ամերիկայում սկսվում է «ուսկու տեղողը», և ամենքի շուրբերին էր Քլոնդայկը, Նազարեթը «հիվանդանում» է արագ հարստանալու մարմածով և 1897թ. մի քանի բուտոնարնակ խարբերդցիների հետ մեկնում Այսակա: Եթե մտաբերենք Զեկ Լոնդոնին և զանազան կինոփիլմեր, ապա հեշտությամբ կպատկերացնեմք, թե ինչպիսի տաժանակիր աշխատանք էր ուսկեխուզությունը: Ի վերջո, նրանց հաջողվում է ուկու համք հայտնաբերել, բայց ստիպված են լինում, ինչպես աղբյուրն է նշում, միմյանց միջև ծագած «անմիաբանության պատճառով վաճառել այն ու վերադառնալ»:

1864թ. Ակնա Մաշկերտ գյուղում ծնված Ս. Կոնդազյանը 20-ամյա հասակում գնում է Արարկիր և դառնում դերձակի աշակերտ: 1890թ. տեղափոխվում է Նյու Յորք, այնտեղից՝ Բուստոն, ընդ որում, գրպա-

Առում ոչ մի ցենտ չուներ, իսկ անգլերեն գիտեր միայն մեկ քառ՝ tailor (դերձակ): Բոստոնի փողոցներում բոլոր հանդիպած մարդկանց կրկնում է իր իմացած քառը: Ի վերջո, հասկանալով, թե ինչ է ուզում, տանում են մի իրեա դերձակի մոտ: Յերեկներն աշխատում է իրեայի, իսկ գիշերները՝ իր մի հայրենակցի մոտ: Մեկ տարի ամց՝ 1891թ., իիմնում է սեփական ֆիրման՝ «Ս. Ս. Կոնդազյան և որդիներ» հագուստի առևտորային տունը, իսկ 1925թ. նրա մոտ աշխատում էր 200 հայ:

## ՀՈՒԱՆՈՒԱ

(XVII.-XIX. առաջին քառորդ)

Դայ համայնքի պատմությունը մի ուսյա էք է Ամստերդամ քաղաքի հուշամատյանում:

«Ամստերդամ» շաբաթաթերթ  
1887թ. օգոստոսի 14

Դայոց կապիտալի և մտապաշարի երջամիկ գուգակցման շնորհիվ Ամստերդամը դարձավ հայ գրատպությամ ամենափառապանծ կենտրոններից մեկը, հայ վաճառականների ու հոգևորականների համերաշխությամբ Ամստերդամում տպագրվեցին առաջին Աստվածաշունչը, հոգևոր գրքեր, բազմաթիվ աշխարհագրական ատլասներ, քարտեզներ և վաճառականական ծեռնարկներ:

Քանի որ Եվրոպայի հետ հայոց կանոնավոր առևտորատնտեսական հարաբերությունները սկսել են կիլիկեցիները՝ XI դ., ապա միանգանայն տրամաբանական է ենթադրել, որ հայ վաճառականները հայտնվել են նաև Շոլանդիայում: Եթե նրանք 1340թ. գտնվել են բելգիական Բրյուժ քաղաքում, ինչը պատճական իրողություն է, ապա դժվար է պատկերացնել, որ մեր վաճառականները այցելած չլինեին նաև Շոլանդիա:

XVI-XVII դդ. փոքրիկ Շոլանդիան (կամ Ներքին նահանգները՝ Nether-lands) դարձավ նավագնացային խոշոր տերություն: Ընդ որում, ի տարբերություն խապանական, պորտուգալական, իտալական, անգլիական աշխարհաճանաչողական և ռազմանվաճողական նավատորմերի, հոլանդական նավագնացությունը գրեթե զուտ առևտորատնտեսական նշանակություն ուներ: Ամստերդամը վերածվեց խոշորագույն միջազգային առևտորական կենտրոնի և նույնիսկ սկսեց կրել «Եվրոպական կայսրութիւն» տիտղոսը: Այս առևտորային նավահանգիստ ադամանդներ, մարգարիտներ և այլ թանկագին քարեր բերած հայ վաճառականներն առաջին անգամ հիշատակվում են 1560-1565թթ.: Ասվածի ապացույցն է ժամանակի ալբոմը, ուր կա արևելյան տարագով մարդու պատկեր, որի

տակ հոլանդերեն գրված է. «Խոշոր աղամանդավաճար մի հայ»<sup>1</sup>: Ովքե՞ր էին այդ հայ վաճառականները. անկասկած՝ հինջուղայեցիներ, որոնք Հնդկաստանից հայրայթած թանկագին քարերը հասցրել էին Ամստերդամ՝ այստեղից հոլանդական ապրանքներ, մասնավորապես՝ կտորեղեն, տանելու համար:

Երասխի ձախ ափին գտնվող Յին Զուղայում ուշ միջնադարում ծևավորվեց հայոց հավաքական առևտրավաճարույթը: Յինջուղայեցիներն էին, որ սկսեցին գրադիվել աշխարհաշրջիկությամբ և հասան բացառիկ հաջողությունների: Սակայն դա էլ հանգեցրեց բնակվայրի կործանմանը: 1604թ. Շահ Աբասն ասպատակեց Արևելյան Հայաստանը, ահավոր ջարդերով տեղահանություն իրականացրեց և ավերեց Յին Զուղան, տեղի վաճառականներին քշելով Սպահան, որի մերձակայքում նրանք մեկ տարվա ընթացքում կառուցեցին Նոր Զուղան<sup>2</sup>:

Հաստատվելով նոր քաղաքում, ջուղայեցիները չմոռացան իրենց հին առևտրային հանգրվանները, մասնավորապես՝ Ամստերդամը. հայ-հոլանդական տնտեսական կապերը նոր թափ ստացան: Դրան նպաստեց նաև այն հանգանաքը, որ 1612թ. պայմանագիր կնքվեց Թուրքիայի ու Յոլանդիայի միջև, հանձայն որի հոլանդացիներն իրենց նավերով կարող էին թուրքական նավահանգիստներ տանել հոլանդական ապրանքներ: Օգտվելով այդ դյուրությունից Զմյուռնիայի նավահանգիստն իրեւ փոխադրակետ օգտագործող հայ վաճառականները, որոնք առևտրական տներ ունեին իտալիայում, Ֆրանսիայում և անմիջական շինան մեջ էին նաև Յոլանդիայի հետ, սկսեցին բնակվել կամ առևտրական տների մասնաճյուղեր հիմնել Ամստերդամում: Դրա շարժառիթն այն էր, որ ուղղակիորեն, առանց միջնորդների գրադիվեին ներմուծմանը ու արտահանմամբ, և արդեն 1617թ. քաղաքի սակարանում (բորսա) նորջուղայեցի խոշաները առևտրական խոշոր գործարքներ էին կատարում:

1627թ. նոյեմբերի 21-ին Ամստերդամում բնակվող վեց հայ վաճառականներ՝ Սարհաղը, Զաքարը, Օհանը, Մարկոսը, Պետրո-

<sup>1</sup> Catal. Muller, IV, 4166.

<sup>2</sup> Այն, ինչ կիսատ էր բողել շահը, XXդ. ավարտին հասցրեց Ադրբեյջանը՝ ամիսնա, բարբարոսարար ոչնչացնելով Յին Զուղայի հայոց պատմաշակութային արժեքները:

սը և Յովակիմը, պայմանագիր են կնքում հոլանդացի նավապետ Սթինի հետ առ այն, որ վերջինս նրանց ապրանքները Ամստերդամից հասցնի իտալական Լիվոռնո (ստորագրությունների փոխարեն մեր վաճառականները դնում էին այսօրվա հայացքով արվեստի բարձրարժեք նմուշներ հանդիսացող անհատական կնիքներ, որոնց վրա պարզորոշ կարդացվում էին նրանց անունները):

Թուրք-հոլանդական առևտրային պայմանագրում թուրքերը մի նախապայման էին դրել՝ իրենց նավահանգիստներում թույլ էին տալիս խարիսխ ծգել միմիայն Յոլանդիայի դրոշ կրող, այլ ոչ օտարերկրյա, թեկուց հոլանդական ապրանքներով բեռնավորված նավերին: Զայ վաճառականներն ուշադրություն դարձրեցին պայմանագրի այդ կետին: Մի կողմից ակնհայտ էր, որ հոլանդական նավերով ապրանքներ փոխադրելը շահավետ էր, մյուս կողմից պարզ էր, որ ավելի ծեռնոտու էր ոչ թե վարձակալելը, այլ սեփական նավ ունենալը (բնականաբար, ապրանքի ինքնարժեքը կնվազեր): Սակայն ինչպես:

1653թ. ապրիլի 21-ի թվակիր մի հիշատակություն կա այն մասին, որ Ամստերդամից դուրս են գալիս 5 առևտրանավեր, որոնց ուղեկցում էին 7 ռազմանավեր՝ ծովահեններից պաշտպանելու համար: Յոլանդական դրոշի ներքը լողացող առևտրանավերից չորսն ուղևորվում էին Թուրքիա, մեկը՝ Վենետիկ: Այդ չորս նավերից երկուսն իրենց կողերին կրում էին այսպիսի անվանումներ՝ Coopman van Armenian («Հայաստանի վաճառական») և Coopman van Persien («Պարսկաստանի վաճառական»): Կասկածից վեր է, որ այդ նավերը պատկանում էին հայ վաճառականներին, թերևս՝ նորջուղայեցիներին, որովհետև անհնար է պատկերացնել, թե հոլանդացիներն իրենց նավերն այդպիսի անուններով կոչուին: Բնական է ենթադրել, որ հայերն իրենց նավերը կառուցել, պաշտոնապես գրանցել էին Ամստերդամում և հոլանդական դրոշն օգտագործելով առևտուր էին անում Թուրքիայի հետ:

Զմյուռնիայի հոլանդական հյուպատոսի գրավոր տեղեկագրում նշվում է, որ 1653թ. մայիսի 5-ին «Հայաստանի վաճառականը»՝ «Գերողերլանդ» ռազմանավի ուղեկցությամբ, բարեհաջող խարիսխ է ծգել նավահանգստում: Հայկական այս առևտրանավի մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1699թ., ըստ որի այն Ամստերդամից եկել ու բեռնաբափվել էր Զմյուռնիայում:

Վերջին անգամ այս նավը հիշատակվում է Զմյուռնիայում 1714թ.՝ Smirnsche Coopman («Զմյուռնիայի վաճառական») անվամբ, այսինքն, հայոց առևտրանավը Միջերկրականի ջրերում լողացել է առնվազն 61 տարի:

Այս իրողությունները վկայում են այն, որ հայոց առևտրական գործարքները թե խոշորածավալ էին և թե միջազգային բնույթ էին կրում: Վաճառականներից ունաճ առևտրական տներ կամ նասնաճյուղեր ունեին Վենետիկում, Լիվոնոյում, Մարսելում և անգամ Խսպանիայում: Արևելքից՝Պարսկաստանից, Սիրիայից, Զմյուռնիայից բերած հում մետաքսը, բուրդը, համեմունքները Ամստերդամում նրանք հաճախ բարձում էին հոլանդական նավեր և առաքում հյուսիս՝ Բալթյան ծովի ափամերձ նավահանգիստներ, փոխարենն ստանալով երկարէ իրեր, կտորեղեն և հատկապես սաթ, որը մեծ հարգ ուներ Զմյուռնիայի շուկայում:

Դայ վաճառականները, որոնց շարքում նորջուղայեցիններից զատ կային ագուլեցիններ, դարաբաղջիններ, դափանցիններ, առևտուր էին անում Ամստերդամի «Արևելյան շուկայում» (Oostermarckt): Իսկ բնակություն էին հաստատել Կրոնավորների փողոցում (Mouppikenstraat), Թագավորական փողոցում (Koningstraat), Թմբի փողոցում (Dykstraat), Կայսերական փողոցում (Keiserstraat) և Բոնի առափնյակում (Boomsloot): Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեր վաճառականներն ապրում էին խիստ համերաշխ, եղբայրաբար, իսկ մինյանց միջև ծագած առևտրական վեճերը հարթելու համար դիմում էին հայ քահանայի: Ընդ որում, նրանք այնքան հավատացյալ էին, այնքան անկեղծ քրիստոնյա, որ անվարան կերպով ենթարկվում էին քահանայի կայացրած ցանկացած վճրին, անկախ այն բանից հոգևորականը տնտեսական վեճը արդար էր լուծում, թե՝ ոչ:

1660թ. Ամստերդամում արդեն կար առնվազն 60 հայկական առևտրական տուն: Նրանցից շատերը հաջողության էին հասել և մեծ հարստություն դիմել: Սակայն կային նաև այնպիսիք, ովքեր ծախսորդության էին նատնվել ու ստիպված թողել-հեռացել էին. քաղաքային նոտարական տեսրականներում հիշատակություններ կան այն հայ վաճառականների մասին, որոնք անվճար են թողել 4000-5000 ֆլորինի մուրհակներ, ինչի համար դատական պատասխանատվության են ենթարկվել:

Դայ վաճառականները, որպես կանոն, Ամստերդամ էին գալիս ժամանակավորապես: Դաջողության հասնելու դեպքում բնօրրանց բերում էին ընտանիքներին և մշտական բնակություն հաստատում: Ամուրի վաճառականներն ամուսնանում էին հոլանդուհիների հետ կամ տեղացիների ընկերակցությամբ իմանում համատեղ առևտրական տներ և գրանցվում որպես քաղաքացի: Այս այսպես, աստիճանաբար ձևավորվեց կայուն համայնք, որն ավարտուն տեսք ստացավ եկեղեցու կառուցմանբ:

Դեռևս 1668թ. հայերը Թմբի փողոցում ունեին մի աղոթատուն: 1713թ. Բոնի առափնյակում գնեցին պահեստարան, որի տեղում մեկ տարի անց նորջուղայեցի վաճառականներ Բաբաջան Սուլթանյանը և Նիկողայոս Թեոդորյանը կառուցեցին հայոց Ս. Յովի եկեղեցին: (Փակվել է 1806թ. և վերածվել կաթոլիկ բարեգործական միության կրթարանի):

Դարկ է նշել, որ XVIIդ. հայ վաճառականները Դոլանդիա էին գալիս երկու ուղղով: Նորջուղայեցինները Սպահան-Թավրիզ-Կարիմ-Թոքատ-Զմյուռնիա երթուղով հասնում էին ծով, նավերով հատում Միջերկրականը և ճանապարհվում Ամստերդամ. ճամփորդությունը տևում էր 1 տարի 28 օր: Ուղին չնայած համեմատաբար կարճ էր, սակայն վտանգներով լի՛ Միջերկրական ծովում վխտում էին ծովահենները: Այս սպաննալիքը, ինչպես նաև թուրքական տարածքների անապահովությունը նորջուղայեցիններին դրդեցին նոր ուղի գտնել:

Ավելի քան կես դար հաջողությամբ առևտուր անելով Ռուսաստանում, խիստ արդյունավետ, փոխշահավետ տնտեսական հարաբերություններ զարգացնելով Պարսկաստանի և Ռուսաստանի միջև, նորջուղայեցինները հասան այն բանին, որ 1676թ. հուլիսի 17-ին ռուսաց արքան նրանց (ավելի ստույգ՝ Դակոր Պողոսյանին ու նրա 10 ընկերներին) թույլ տվեց Արխանգելսկով մեկնել Դոլանդիա: Դամեմատաբար ապահով այս առևտրական ուղղով, որ գոյատևեց մինչև 1718թ., հայ վաճառականները Ամստերդամ էին տանում հում մետաքս, մետաքս գործվածքեղեն, մորթիներ, սուրճ, թուրումնավետ յուղեր, գինի, ինչպես նաև պարսկական բրինձ, որին հոլանդացիններն անվանում էին «Մոսկովյան բրինձ»:

XVIIIդ. հայ-հոլանդական առևտրատեսական հարաբերությունները նոր զարգացում ստացան: Այդ հարյուրամյակը բնորոշ-

Վում է Շոլանդիայում ապրող և առևտրով զբաղվող մի շարք հայ վաճառականների գործունեությամբ, որոնք եական հետք են թողել մեր ժողովրդի պատմության մեջ:

Նոր Զուղայի ամենանշանավոր վաճառականներից մեկը՝ Գրիգոր Խալդարյանը, որը 1708թ. 27 ստորագրյալ վաճառական ուներ (այսինքն, նրանց ղեկավարում և լուծում էր միմյանց միջև ծագած վեճերը), Ամստերդամում զգալի հաջողությունների հասավ, ապա անցավ Լոնդոն, ամբողջ 10 տարի չարչարվելուց հետո հիմնեց հայկական տպարան, որը հետագայում հանգրվանեց Ռուսաստանում:

1714-1716թթ. Պետրոս դի Սարգիս Գիլանենցը Ամստերդամում զգալի կարողության տիրացավ, հովանավորեց տպագրիչ Ղուկաս Վանանդեցու «Պատկերասեր պատկերատեաց» գրքի տպագրությունը, ապա զիխովին նվիրաբերվեց մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: 1723թ. նա Գիլանում ստեղծեց «Հայկական եսկադրոնը»՝ 80 հոգանոց այրուծին, որը սեփական միջոցներով պահեց մեկ տարի՝ իսպառ կորցնելով «հոլանդական» փողերը և զոհվեց մարտի դաշտում:

Շոլանդիայի հետ է առնչվում նաև հայ-ռուսական հարաբերությունների մի էջ, ավելի ստույգ՝ Պյոտր I ցարի առաջին շփումը մեր ժողովրդի հետ, որը տեղի ունեցավ խոշոր հայ վաճառական Պետրոս Ապրոյի միջոցով:

Ապրոյան գերդաստանը սերում էր Անիից: Մայրաքաղաքի անկումից հետո նրանք տեղափոխվում են Կարին, իսկ 1521թ. տոհմի նահապետ Ալֆիարը (Արփիար) իր աղխով բնակություն է հաստատում Բելգրադում: Յարկ է նշել, որ այս ընտանիքը սփյուռքի ամենահինամենի և ամենանշանավոր գերդաստաններից մեկն էր: Ապրոյանների տոհմը XVIII դ. տեղափոխվում է Կ. Պոլիս, ունաճ Զմյուռնիա ու Եգիպտոս: Քիմնականում զբաղվել են վաճառականությամբ, կառուցել են Եկեղեցիներ, վարժարաններ, զգալի գումարներ են տրամադրել ազգանպատ գործերին:

Ապրոյան տոհմը տվել է բազմաթիվ ականավոր դեմքեր, սակայն գերդաստանին ամենամեծ համբավը բերեցին միջազգային նակարդակի վաճառականներ Պետրոս, Արքահամ և Ստեփան Եղբայրները, որոնք մեծածավալ առևտուր ունեին Ղնդկաստանում, Պարսկաստանում, Թուրքիայի հողում և այստեղի Եվրոպական պետություններում, և որ այդ առևտուրը մեծավ մասամբ կազմում են մետաքսը և պարսկական ու հնդկական այլ ապրանքները: Ապա ցարը Ապրոյ Եղբայրներին թույլ է տալիս ազատորեն առևտուր անել Ռուսաստանում, ընդ որում, մաքսեր ու հարկեր վճարել այնքան, որքան նորջուղայեցիները, այսինքն՝ արտոնյալ պայմաններով:

Շոլանդիայի առևտրատնտեսական համայնքը գոյատևեց շուրջ 200 տարի: XVIII դ. վերջին–XIX դ. սկզբին Նապոլեոնը նվաճեց Շոլանդիան, վերջ դրեց Ամստերդամի նավագնացությանն ու միջազգային առևտուրին, ինչով էլ ավարտվեց հայոց գործունեությունը և նույնիսկ գոյությունը: 1826թ. Շոլանդիայում մնացել էր ընդամենը երեք հայ՝ Ալեքսան և Միքայել Մասեհյան Եղբայրները և Ստեփան Գարբիելյանը: Ա. Մասեհյանի անվանական կնիքը պահպանվում է Շարլեն քաղաքի Teyler բանգարանում, իսկ վերջին վաճառական Գարբիելյանը վախճանվեց Ամստերդամում 1835թ.:

Շոլանդիայի հայաքավիման այս շրջանը շարունակվեց մինչև համիլյան ջարողերը և 1915թ. ցեղասպանությունը, որոնցից հետո բնօրրանից վտարված և կյանքները փրկած հայոց նոր զանգվածները խարիսխ ձգեցին այն երկրում, որի հանդեպ ունեին պատմական բարի հուշ և որտեղ ապահով ապրել ու հաջողությունների էին հասել:

Սակայն հայ-հոլանդական հարաբերություններն ու գործակցությունը կատարվում էին նաև այլ երկրներում, ի մասնավորի՝

Ինդոնեզիայում, ինչի մասին ընթերցողը կարող է ծանոթանալ հաջորդ գլխում:

Սորջուղայեցի վաճառական Ավետիս Ղյիմենցը 1658-1660թթ. Ամստերդամում հիմնել է տպարան, ուր Ոսկան Երևանցին 1666թ. տպագրել է առաջին հայերեն «Աստվածաշունչը»: Տպագրությունն իրականացնելու համար ֆինանսական օժանդակություն են ցույց տվել նորջուղայեցի վաճառականներ Պետրոս Ավագը, Քրոշենց Թեոդորոսը և Խոնենց Ստեփանը:

Դին հույները ատլասներ էին անվանում այն հսկաներին, որոնք ուսերի վրա պահում էին Աֆրիկայի արևանյան եզրի երկրամասի ժայրերը, որտեղ էլ գտնվում էին Ատլասյան լեռները: Աշխարհագրական քարտեզների ժողովածուներն անվանվել են ատլաս այն պատճառով, որ 1595թ. տպագրված առաջին ժողովածուի՝ Մերկատորի քարտեզների ժողովածուի վրա պատկերված էին ուսերին երկրագումը պահող ատլասներ:

Դայոց առաջին տպագիր քարտեզի՝ «Դամատարած աշխարհացոյցի» լույս աշխարհ գալը իրականացվել է Ամստերդամում 1695թ. Մերկատորի ատլասից ծիշը ու ծիշը 100 տարի անց: Քարտեզն աշխատասիրել ու տպագրել են Թովմաս Էպիսկոպոս Վանանդեցին, վաճառականներ Ղուկաս ու Միքայել Նուրիջանյանները, Մատթեոս Շովիաննիսյանը, իսկ փորագրությունը կատարել են Աղիանուս և Պետեր Սխոներեկ եղբայրները: «Դամատարած աշխարհացոյցի» տպագրությունը թելադրված էր բացառապես հայ վաճառականների կարիքները բավարարելու գործնական նպատակով, իսկ վաճառքի գինն էր 15 ֆրանկ:

## ԻՆՊՈՆԵԶԻԱ (XVII-ի.-XX-ր. առաջին քառորդ)

Աշխարհի մեջ ոչ մեկ տեղ չեմ հանդիպած ընդհանուր հանգիստին, որ ճավայի մեջ ապրողներու առանձնաշնորհումն է: Կքալեն, բայց արտորանը չունին, հանգիրտ մը կըմրշյնեն քալելուն մեջ, կաշխատին և հանգստության երևույթը կա իրենց աշխատանքին վրա, կխոսին հանդարտորեն, իրենց ուժերը խնայողներու հոգածությամբ...

Ու ճավացին առաջինությունն է մաքրասիրությունը: Բնիկն անգամ օրական իր երկու լոգանքը պետք է ընե: Որքան մեծ տարբերություն Ղնդկաստանի բնիկին ու ճավային բնիկին միջև:

Դրաչ Երվանդ հրապարագիր, 1926թ.

Տարաշխարհիկ այս երկիրը բաղկացած է 13.666 կղզիներից, որոնք սկսված են հասարակածի երկու կողմերում՝ Ղնդկական ու Խաղաղ օվկիանոսների միջև: Կղզիներից 9622-ը անուն չունեն, իսկ 931-ում ապրում են մարդիկ, ովքեր քանակով աշխարհում հինգերորդն են: Այստեղ եղանակները չեն փոխվում, տիրում է մշտական բարձր ջերմաստիճան է, և առատ տեղումներ են լինում: Մշտադար արևադարձային անտառներում աճում է 2000 ծառատեսակ: Տարվա ընթացքում հողը տալիս է երեք բերք, այդ բվում՝ սուրճ, թեյ, կակաո, կոկոս, բանան, ծիսախոտ, բամբակ, բրինձ, ձգախնեֆ (կառուցուկ), համեմունքներ՝ պղպեղ, մեխակ, զաֆրան:

Կղզիներում ապրում են բազմաթիվ ցեղեր: Այլազգիներից այստեղ ապրում են չինացիներ, արաբներ, հնդիկներ, ճապոնացիներ, եվրոպացիներ, և այդ խառնարանում հայերս հայտնվեցինք այն ժամանակ, երբ Ինդոնեզիա երկիր չկար, կային միայն մի քանի հշխանություններ, բնակչության բացարձակ մեծամասությունը մահմեդական չէր և նավթ դեռ չէր հայտնաբերվել:

1596թ. Բանթամ կղզի հասավ Հոլանդիայի ռազմական նավախումբը՝ Կորնելիս վան Շաութմանի գլխավորությամբ: Քանի որ հոլանդացիներն արդեն ուտք էին դրել Ղնդկաստան, ապա նրանք

այս նոր կղզիներն անվանեցին Նիդերլանդական Շնդկաստան և դարձրեցին իրենց գաղութը: Ծայրագույն Արևելքը յուրացնելու նպատակով Ամստերդամի առևտրական ու բանկային կապիտալը 1602թ. ստեղծեց «Արևելա-հնդկական ընկերությունը», որն օգտվելով պետական հովանավորությունից՝ ստանձնեց թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական գործառույթներ: 1619թ. գեներալ-նահանգապետ Յան Պիտերսզոն Կունը ճավա կղզու Զակարտա իշխանությունում մի ամրոց կառուցեց և այն անվանեց Բաթավիա՝ ի պատիվ իրենց հնամենի նախնիների՝ գերման բաթավ ցեղի: Միայն 1949թ. երկիրը նվաճեց անկախություն, կոչվեց Ինդոնեզիա, իսկ Բաթավիան վերանվանվեց Զակարտա:

Ի՞նչ էինք հայերս կորցրել և ի՞նչ էինք փնտրում այս դրախտային կղզիներում:

Դոլանդական «Արևելա-հնդկական ընկերության» 1656թ. «Որոշումներ» հավաքածուում իշխատակվում է Սուլավեսի կղզու գովա իշխանության մայրաքաղաք Մակասարում (Ներկայիս Ուջանգապանդանգ) հաստատված խոչա Սոլիմա հայ վաճառականը: Այս մարդուն կարելի է համարել Նիդերլանդական Շնդկաստանում հայտնված առաջին հայը և կասկածից վեր է, որ նա այն նորջուղայեցիներից էր, որոնք վաղուց ի վեր եռանդուն առևտրական գործունեություն էին ծավալել Ամստերդամում:

XVIIIդ. առաջին կեսին Մադրասից մի քանի հայեր անցնում են նախ Սանկտա, ապա գալիս են ճավա և բնակություն հաստատում Բաթավիայում: Մի կողմից, Շնդկաստանում անգլիացիներից ակնհայտ ճնշումների ենթարկվելով, մյուս կողմից, Նիդերլանդական Շնդկաստանի բնության պարգևած հարստությունները, ապրանքատեսակների անբավ առատությունը դրդեցին, որ հայ վաճառականներն աստիճանաբար այստեղ տեղափոխվեն:

Շուտով հայ վաճառականների ենթայությունն այնքան զգալի դարձավ, որ 1747թ. մարտի 31-ին հոլանդական «Արևելա-հնդկական ընկերությունը» հայերին տվեց ազատ քաղաքացու պաշտոնական արտոնագիր՝ այլ Եվրոպացիներին հավասար իրավունքներով: Այս արտոնությունը, այսինքն՝ առևտրատնտեսական, կրոնական, մշակութային այլկայլ ազատությունները պատճառ դարձան, որ Շնդկաստանից հայ վաճառականների նորանոր հոսքեր գան: Եվ քանի որ հայոց հիմնական գրաղմունքը առևտուրն էր, բնակա-

նարար, նրանք հաստատվեցին խոշոր կղզիների՝ ճավայի ու Սուլավեսիի մարդաշատ և վաճառաշահ քաղաքներում: 1781թ. Բաթավիա եկան Յովիաննես Շերիմանյանը, Մանուկ Յակոբյանը, Վարդան Գասպարյանը, ավելի ուշ՝ Պողոս, Կարապետ, Բարսե Անդրեասյան եղբայրները, Մ. Ե. Անդրեասյանը: 1801թ., 89 տարեկանում, Բաթավիայում վախճանվեց Յարություն Զաքարյանը, և դա հայի ամենահին գերեզմանն է:

Այս մարդիկ Պարսկաստանից ներմուծում էին կերպաս, արհեստական մեղրամոն՝ կտավեղեն դաշելու համար, այսուր, արմավ, յուղ, վարդաջուր, արտահանում էին սուլբ, շաքար, տարատեսակ խեժեր, համենունք, հնդկընկույզ, ափիոն<sup>1</sup>: Բեռնափոխարումները, բնականաբար, կատարվում էին հոլանդական առագաստանավերով, որոնք պարսկական Բուշեր նավահանգիստ էին համար 1,5-3 ամսում:

XVIIIդ. վերջին Բաթավիայում հաստատվում է Գևորգ Մանուկի Մանուչարյանը, որն իր եղբոր դուստրերի հետ վիթխարի ավանդ է ունենում թե՛ ինդոնեզահայ համայնքի կազմավորման, թե՛ առհասարակ ազգապահպանության գործում: Նա ծնվել էր 1763 թ. Նոր Զուղայում չքավորի ընտանիքում և «ընդունված կարգի» համաձայն եղբոր՝ Մելքոնի, հետ գաղթում է Շնդկաստան: Մադրասում գրադիվելով առևտուր, տքնաջան աշխատանքով ծեռք է բերում մեծ հարստություն: Այդ ընթացքում Նոր Զուղայում մահանում են ծնողներն ու եղբոր կինը, և Գ. Մանուչարյանը 1795թ. Մադրաս է բերում եղբոր աղջիկներին՝ 14-ամյա Մարիամին և 10-ամյա Թագուհուն: Մի քանի տարի անց, անգլիացիների կողմից ճնշման ենթարկվելով, նա ստիպված է լինում տեղափոխվել Բաթավիա՝ ունենալով այն ժամանակվա համար վիթխարի մի գումար՝ 4 մլն. ֆրանկ: Այս կապիտալը հաջողությամբ ներդնելով բիզնեսի մեջ՝ նա էլ ավելի մեծ կարողության է տիրանում, դառնում առհասարակ ճավայի ամենաանվանի նարդկանցից մեկը և բազմից խոշոր գումարներ տրամադրում հոլանդական իշխանություններին:

<sup>1</sup> Յարկ ենք համարում նշել, որ հնուց ի վեր ափիոնի առևտուր եղել է հայոց բիզնեսի հիմնական տարատեսակներից մեկը: Եվրոպայում ափիոնը ոչ միայն թմրանուր էր, այլև գործածվում էր դեղագործության և օծանելիքի պատրաստման մեջ ու շատ բարձր գին ուներ:

Սակայն Գ. Մանուչարյանը նաև մեծ ազգասեր ու բարերար էր. 25 հազար գուլդեն է տրամադրել Ս. Էջմիածնին, 30 հազար ռուփի՝ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանին, 30 հազար՝ Մադրասի հայոց դպրոցին, 25 հազար՝ Երուսաղեմի Ս. Յակոբա վանքին, 10 հազար՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին, 5 հազար՝ իր ծննդավայրում Ռուսաստանի հրչակավոր Լազարյանների նախահայր Եղիազարի կառուցած Ս. Կատարինե կուսանոցին: Նա մտադիր էր նաև ազգային համալսարան հիմնել Լոնդոնում, սակայն վախճանվեց 1827թ.՝ անկատար թողնելով մտադրությունը:

Քանի որ Գ. Մանուչարյանն ամուրի էր, հոլանդական օրենքների համաձայն իր ամբողջ ունեցվածքը՝ 5 մլն. գուլդեն արժեքով, կտակեց մերձավոր հարազատներին՝ եղբոր դուստրերին, որով հայոց բարեգործության պատմության մեջ բացվեց մի ամբողջ էջ: Բանն այն է, որ Գ. Մանուչարյանի եղբոր՝ Մելքոն Մանուկյանի մասին (այս մարդը որպես ազգանուն գործածում էր հայրանունը) կցկոտուր տեղեկություններ են պահպանվել: Սակայն Դր. Աճառյանն իր «Դայ գաղթականության պատմություն» գրքում հիշատակում է մի նորջուղայեցի Մելքոն Մանուկյանի, որին համարում է Ավստրալիա ոտք դրած առաջին հայ, և որն, ըստ մեզ, Գ. Մանուչարյանի եղբայրն է: XIX դարասկզբին Դնդկաստանում լուր է տարածվում, թե Ավստրալիայում հայտնաբերվել են ոսկու հանքեր, և եթե որևէ մեկը հողատարածք վերցնի ու 30 տարի աշխատի, ապա այդ հողը կդառնա նրա սեփականությունը: Ահա այս հեռանկարից ոգնորված՝ Ս. Մանուկյանը երկու ընկերների հետ մեկնում է նախ Մելքոն, ապա հաստատվում Սիդնեյի մոտակայքում գտնվող Լաք Լենդ գյուղում, բացում նպարեղենի խանութ և ամուսնանում: Նա, հավանաբար, մահացել է մինչև 1827թ., այլապես Գ. Մանուչարյանը նրան պիտի կտակեր իր հարատությունը:

Տիրելով հորեղբոր ունեցվածքին, քույրերը՝ Թագուհի Մանուկյանը և վաճառական Հակոբ Հարությունյանի հետ ամուսնացած Մարիամ Հարությունյանն իրենց գործունեությունը լիովին ի սպաս են դնում ազգին: Նրանց դրամագլուխը կազմված էր կալվածքներից ու բանկային արժեքներից, որոնցից ստացված շահույթը տրամադրում էին բարերարությանը:

Ժամանակակիցները վկայում են, որ «սուն նոցա ապաւն աղքատաց և որրանոց աղքատութեան» էր: 1831թ. Մարիամի

անուսին Դ. Յարությունյանը Բաթավիայում կառուցում է Ս. Յովիաննես Սկրտիչ փայտաշեն մատուռը, որի տեղում նրա մահից տասը տարի անց՝ 1854թ., քույրերը կառուցում են նույնանուն քարաշեն Եկեղեցին՝ նվիրելով նաև իրենց հոյակերտ տունը՝ 1853թ. քույրերն իրենց ծննդավայրի Ս. Ստեփաննոս Եկեղեցու բակում հիմնում են դպրոց, որը գործում է երեսուն տարի, իսկ Նոր Ջուղայի հայրենական տունը նվիրում Եկեղեցու թաղին:

1855թ. նրանք Բաթավիայում հիմնում են «Մանուկ և Յարությունյան» առաջին օրիորդաց դպրոցը, որի համար տրամադրում են 20 հազար ռուփի դրամագլուխ: Նիդերլանդական Դնդկաստանի մայրաքաղաքում հիմնում են նաև երկու ազգային կազմակերպություն՝ «Գանձանակ Ջուղայու տնանկացը» Նոր Ջուղայի կարիքավորներին օգնելու համար և «Գանձանակ գրավոր աշխատանացը», ազգի համար օգտակար գրքեր տպագրելու նպատակով: 1858թ. քույրերը մեծ գումարներ են հատկացնում ճավայի «Դայկյան միաբանությանը» և Նոր Ջուղայի «Աղքատանաց սննդուկին», իսկ Մարիամն իր ծախքով տպարան է հիմնում Կալկաթայի Մարդասիրական ճեմարանում: Թագուհի Մանուկյանը վախճանվում է 1857թ., իսկ Մարիամ Հարությունյանը՝ 1864թ. 83 տարեկանում: Նրա մարմարյա անդրին դրված է Ս. Յովիաննես Սկրտիչ Եկեղեցու հյուսիսային կողմում:

Գ. Մանուչարյանի հետ է կապված մեկ այլ նշանավոր հայորդու՝ Նոր Ջուղայի Փարսադանենց տոհմի Մանուկ Յորդանանյանի (1800, Նոր Ջուղա-1879, Բաթավիա) գործունեությունը: Նա աղքատ ջուլհակի զավակ էր: Ապրուստ վաստակելու նպատակով 18 տարեկան հասակում գաղթում է Բաթավիա և ծառայության անցնում իր համաքաղաքացի Գևորգ Մանուչարյանի մոտ՝ հասու դառնալով առևտրի այբուբենին: Դինգ տարի անց տեղափոխվում է մեկ այլ հայաշատ քաղաք՝ ճավայի Սուլարայա, հիմնում սեփական բիզնես և գգալի հարստություն վաստակում: 1835թ. նորջուղայեցի Ղազար Օհանյանի հետ ծեղը է բերում Մոջոկերտո քաղաքի մոտի «Գուղո» անվանք շաքարի առաջնակարգ գործարանը:

1841թ. հիվանդությունից ապաքինվելու համար մեկնում է Եվրոպա և մեկ տարի Ս. Ղազար կղզում Ղանդ Ալիշանի մոտ հայերեն ուսանում: 1844թ. Եվրոպայում գնում և ծննդավայրի Ս. Ամենափրկիչ վանքին է նվիրում տպարան: 1851թ. Վերադառնում

Ե Սուրաբայա և բիզնեսն անմիտքար վիճակում գտնելով՝ վաճառում է շաքարի գործարանը ու փոխադրվում Բարավիա: 1857թ. Նոր Չուղայի Ս. Կատարինե կուսանաց վաճռում հիմնում է օրինութաց դպրոց, որին կտակում է իր ամբողջ հարստության կեսը, իսկ մյուս կեսը՝ ծննդավայրում հոգևոր դպրոց հիմնելու համար: Մինչև օրս ամեն տարի մարտի 7-ին՝ Ս. Մանկանցն Քառասնից օրը, Նոր Չուղայի Ս. Ամենափրկիչ վաճռում ի հիշատակ Մանուկ Շորդանանի կատարվում է հոգեհանգիստ:

Հայոց համար, սակայն, առևտրական կենտրոն դարձավ ավելի քան 1000 կմ ծգվածություն ունեցող ճավայի մեկ այլ քաղաք՝ Սուրաբայա նավահանգիստը, որտեղ նրանք տնտեսական բուրն գործունեություն ծավալեցին:

Առաջին, ամենախոշոր և ամենաերկարատև բիզնեսն ունեցան նորջուղայեցի Եղիգարյան եղբայրները՝ Գալուստը, Խաչիկը, Ջարությունը և Շովիաննեսը: Ավագը՝ Գալուստը, 1862թ. բարավարնակ Շովիաննես Ասրգույանի հետ Սուրաբայայում հիմնում է «Սարգիս, Եղիգար և ընկ.» առևտրական տունը, որը գոյատևում է 25 տարի: Խաչիկը Բարավիայի «Մայիլ և ընկ.» ֆիրմայի հետ 1872թ. Սուրաբայայում հիմնում է «Եղիգար, Մայիլ և ընկ.» առևտրական տունը, որը գործում է 12 տարի: 1884թ. Խաչիկը միանում է «Սարգիս, Եղիգար և ընկ.» ֆիրմային, իսկ Գալուստն անցնում է Սինգապուր և այնտեղ հիմնում «Եղիգար և ընկ.» առևտրական տունը:

Խաչիկը շարունակում է «Սարգիս, Եղիգար և ընկ.» գործունեությունը, սակայն առաջացած տարիքի պատճառով 1927թ. բիզնեսը հանձնում է Ֆրեդի անունով որդուն (ծիշտ է, տարիքով ավագ էր Գալուստը, սակայն բիզնեսը շարունակել էր պետք): Եվ այստեղ օգնության է հասնում Նոր Չուղայում մնացած Ջարությունը, որն իր վեց որդիներին՝ Մկրտչին, Չարլիին, Կոստանդիանոսին, Մարտիրոսին, Սարգսին և Գևորգին, ուղարկում է Նիդերլանդական Շնդկաստան: Արանք 1912թ. Սինգապուրում, Բանգկոկում, Սուրաբայայում և Մանչեստրում բացում են «Եղիգարյան Եղբայրներ» ֆիրմայի մասնաճյուղեր: Կենտրոնակայանը գտնվում էր Սինգապուրում, և դեկավառում էին Մարտիրոսն ու Գևորգը, Մանչեստրի մասնաճյուղի տնօրենն էր Սարգսիսը, իսկ Սուրաբայայինը՝ Կոստանդիանոսը: Ընդայնելով գործունեության շրջա-

նակներն ու աշխարհագրությունը, նրանք 1935թ. նոր մասնաճուղ են բացում ծապոնական Օսակայում, իսկ 1937թ. և մեկը՝ Լոնդոնում: Եղիգարյանների ֆիրման, որ հիմնականում գրադպում էր կտավներությունից, այսուհետեւ այսուհետեւ լրագրաթղթի առևտրով, գոյատևեց մինչև 1956թ.:

1875թ. Սուրաբայայում կար 23 հայ, որոնք գրադպում էին բացառապես առևտրով, և որոնցից նշանավոր էին Շովիաննես Ղազարյանը, Մանուկ Շորդանանյանը, Ղուկաս Մաթևոսյանը, Դավիթ Գևորգյանը, Եղիազար Շովիաննիսյանը:

1877թ. Սուրաբայա է գալիս Գևորգ Ղազարի Աբգարյանը, որին վիճակված էր դաշնալ ինդոնեզարնակ ամենաշանավոր հայ արդյունաբերողը: Նա 16 տարեկան հասակում Նոր Չուղայից գաղթում է Շնդկաստան և 1874թ. ուսանում Կալկաթայի Մարդասիրական ծեմարանում՝ սովորելով հայերեն, անգլերեն և առևտրի արվեստ: Գալով Սուրաբայա՝ ծառայության է անցնում Մայիլ Շովիաննիսյանի ֆիրմայում, իսկ 1879թ. մեկնում է Բալի կղզի, որպես այդ առևտրական տան մասնաճյուղի ղեկավար:

Երեք տարի անց վերադառնում է Սուրաբայա և ընկերակցում Ավետիք Աբգարյանի «Աբգար և ընկ.» ֆիրմային: Եվս չորս տարի անց բիզնեսը թողնում է և ճավայի Թուլունգակունգ ու Գդերի քաղաքներում գրադպում... լուսանկարչությամբ: Այս գրադպունքը, ճիշտ է, ճավայի համար հեղափոխական երևույթ էր, սակայն արժանապատիկ ապրուստ ապահովել չէր կարող: Դա էր պատճառը, որ նա վերադառնում է բիզնես, 1885թ. շոտլանդացի Զ. Լիոնի հետ Գդերի նահանգի Բրանգահան գյուղում հիմնում տապիոկայի<sup>1</sup> գործարան, որը տնտեսական ճգնաժամի պատճառով վեց տարի անց փակվում է: 1894թ. Գ. Աբգարյանը հիմնում է բրնձի վերամշակման ու շաքարի փոքրիկ արտադրություններ, իսկ մեկ տարի անց կլուտ հանգած հրաբխի զարիվայրին՝ Գդերի նահանգի Գալուստ գյուղաքաղաքում ծեռք է բերում շուրջ 12 հազար ակր հողատարածք և Անգլիայից բերելով արդիական սարքավորումներ՝ հիմնում գործարան ու սկսում գրադպել տապիոկայի արտադրությամբ: Արդեն 1910թ. այդ գործարանը Նիդերլանդական Շնդկաստանի մասնաճյուղու առտադրական ծեռնարկություններից էր:

<sup>1</sup> Թփատեսակ, որի արմատներից կրախմալ է ստացվում:

Այն բաղկացած էր ութ մասնաշենքից, որտեղ յոթ հայերի ու երկու Եվրոպացիների վերահսկողության ներքո աշխատում էին 200 տեղացիներ՝ ամսական արտադրելով 600 տոննա առաջնակարգ այսուր ու խմորահատիկ (fleke) և 360 տոննա երկրորդ կարգի այսուր: Արտադրանքը տեղափոխվելու համար 4. Արգարյանն իր գործարանի և էնգաղիլուե կայարանի միջև անցկացրել էր 65 կմ երկարությամբ երկարուղագիծ, որով փոխադրումներ էին իրականացնում չորս լոկոմոտիվով ավելի քան 100 վագոններ: Աշխատակիցների բնակարաններն ունեին հեռախոս և էլեկտրաէներգիա: Պահանտացիաներում աշխատում էին ավելի քան 1000 բնիկներ, որոնք մշակում էին տապիոկա, շաքարեղեգ և կոկոս: Արտադրանքն ամբողջովին իրացվում էր Անգլիայում և ԱՄՆ-ում:

1921թ., առողջական վիճակի վատրարացման պատճառով, Գ. Արգարյանը մեկնում է Չոլանդիա և բիզնեսը վաճառում 2,5 մլն. գուլդենով: Ապա վերադառնում է ճավա և 1927թ. վախճանվում 67 տարեկան հասակում:

Նա խորապես ազգասեր մարդ էր, ՅԲԸ պատվավոր անդամ: Որդեգրել ու պահում էր չորս հայ որբերի, 275 հազար գուլդենի ազգային բարեգործություն էր արել, որից 40 հազարը՝ եղեռնից փրկվածների համար:

Ազգային նպատակների համար 300 հազար գուլդեն էր հատկացրել Գևորգ Արգարյանի ավագ եղբայրը՝ Սարգիսը: Նա բնակություն էր հաստատել Թուլունգակունգ քաղաքի մոտ գտնվող Գամբինկ գյուղում, ուներ կառուզուկածառի, հնդկական անտառներ և կանեփի վերամշակման գործարան: Կառուզուկն ու կոպրան<sup>1</sup> արտահանում էր Եվրոպա:

1883թ. Մարտիրոս Զոհրաբյանը, Յակոբ Մեսրոպյանը և Յովակիմ Յովակիմյանը Սուրաբայայում հիմնեցին ամենանշանավոր առևտրական տներից մեկը՝ «Զոհրաբ, Մեսրոպ և ընկ.» ֆիրման: Նրանք Ավստրալիայից ներմուծում էին այսուր և կարագ, Եվրոպայից՝ լուցկի և այլ մանր իրեր, Չնդկաստանից՝ բրինձ, պարկեր և այլն, Բալի կղզու Սինգապուր նավահանգատում վաճառում էին Եվրոպական արդյունաբերական ապրանքներ, մանուֆակտուրա,

<sup>1</sup> Չնդկանկապի չորացրած սննդարար հյուսվածք, որն օգտագործվում է կոկոսայուղի ստացման համար, մարգարինի և օճառի արտադրության մեջ:

իսկ այդտեղից արտահանում էին սուրճ և կոպրա: 1900թ. ֆիրման համալրում են երիտասարդ ուժեր՝ Ալբերտ Զոհրաբյանը և Յակոբյան չորս եղբայրները, որոնք նոր թափ են հաղորդում բիզնեսին և ընդլայնում գործունեության շրջանակները, մասնավորապես զարկ են տալիս շաքարի ու բրնձի առևտրին: 1906թ. ֆիրման շաքարի արտահանման ոլորտում առաջատար դիրքեր էր գրավում ու մեծ համբավ վայելում Չնդկաստանի, Բիրմայի և Չնդկաչինի այլ երկրների շուկաներում: 1915թ. Ալբերտ Զոհրաբյանը, Ավետում և Ներսես Յակոբյան եղբայրները «Յակոբյան եղբայրներ և ընկ.» անվանք մասնաճյուղ բացեցին Լոնդոնում, ընդ որում, Յակոբյանները դարձան անգլահայ համայնքի ակնառու դեմքերից: Յայրապետ ու Սկրտիչ Յակոբյանները մնացին Սուրաբայայում, իսկ Սինգապուր մասնաճյուղի դեկավար նշանակվեց Զարլի Եղիգարյանը:

«Զոհրաբ, Մեսրոպ և ընկ.» ֆիրման ավելի քան 20 տարի Սուրաբայայում Գևորգ և Սարգիս Արգարյանների, Եվրոպական մի շարք ապահովագրական ընկերությունների գործակալն էր, իսկ Բալիում ներկայացնում էր Ռուկիբելերի «Սրանդարդ օյլ» նավթարդյունաբերական հսկայի շահերը:

1887թ. Նոր Զուղայից 11-ամյա Ղուկաս Սարգսյանը գալիս է ճավայի Մալանգ քաղաք, ուր ավագ եղբայր Յարությունը և քերին՝ Ե. Տեր-Յովիհաննիսյանը նպարելենի խանութ և մոտակա վայրերից սուրճի բերքի փոխադրության գործակալություն ունեին: 1900թ. Ղուկասը տեղափոխվում է Սուրաբայա, զբաղվում մանր առևտրով, 1903թ. բացում է նպարելենի մեծ խանութ և հարստանում: 1910-1911թթ. նա կառուցում է քաղաքի ամենախոշոր ու շքեղ «Օրանժ» հյուրանոցը՝ ծախսելով 1 մլն. գուլդեն: 1927թ., ի հիշատակ վաղամեռիկ Թովմաս Եղբոր, կառուցում է Սուրաբայայի հայկական դպրոցը և եական մասնակցություն ունենում տեղի Ս. Գևորգ Եկեղեցու շինարարության գործում:

Բնութագրելով Սուրաբայայի հայոց բիզնեսը, հարկ է նշել գործունեության և մեկ տեսակ, որը գրեթե նրանց մենաշնորհն էր. դա կառատիրությունն էր: Յայերին էին պատկանում բազմաթիվ կառքեր, ծիեր, ախոռներ, որոնք վարձով տրամադրում էին այլոց և որոնցով կատարվում էին ուղևորա- և բեռնափոխադրումներ:

1917թ. Սուրաբայան ուներ 150.000 բնակիչ, որից 20.000-ը՝ չինացի, 10.000-ը՝ եվրոպացի, իսկ հայերն ընդամենը 300 հոգի էին: Սակայն դժվար չէ նկատել, որ տոկոսային հարաբերակցությամբ բիզնեսում նրանց էր պատկանում առաջնակարգ դիրքերից մեկը:

Այդ թվականին, հանգանակություն կազմակերպելու նպատակով, Սուրաբայա է գալիս Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը: Նա վկայում է, որ հայերը զարմանալի համախումք են, տնտեսական շահագրգությունների հիման վրա բազմաթիվ թելերով փոխկապակցված, հայրենանվեր և առատածեռն: «Սուրաբայայի հայությունը Զուղայի հայության կենդանի պատկերն է օտարության մեջ,- գրում է թ. Գուշակյանը,- այնքան թարմ ու որոշ են բնաշխարհի բարքերն ու բարբառը, ծգումներն ու կենցաղակերպ իրենց այս տարաշխարհիկ կյանքի մեջ, որ զգում են օտար երկնքի տակ, բայց հայկական մթնոլորտի մեջ»:

Տասը տարի անց ճավա է գալիս Յրաչ Երվանդը: Բաթավիայում նա «հայտնաբերում» է ընդամենը 60 հայի, որոնցից միայն 25-30-ը էին հայոց Եկեղեցում մասնակցում Զատկի տոնին: Մեծահարուստներն արտագաղթել էին, դպրոցը լիակատար անգործության էր մատնվել, իսկ հայերի մի մասն էլ «հոլանդացել» էր:

Սակայն միանգամայն այլ պատկեր էր տիրում Սուրաբայայում: Այստեղ Յ. Երվանդը ներկա է լինում տեղի հայոց սիրողական քատերախմբի կողմից Շիրվանզադեի «Կործանվածք» պիեսի բեմականացմանը և խիստ հուզվում այն փաստից, որ Օնի Լուկաս անվամբ մի հոլանդուիի մաքուր հայերենով երգեր էր երգում և հպարտությամբ շեշտում, թե երկու տարի է, ինչ ամուսնացել է հայի հետ և հասցել սովորել... Զուղայեցիների հայերենը: Յ. Երվանդը գրում է. «Տաք և անկեղծ հով մը կա այս գաղութին վրա: Կապված են իրարու մեծ տունի մը անդամներուն պես: Սև կատու չանցնիր իրենց մեջ: Սուրապայացին հայրենասեր է և խանդակառ Յայաստանի վերածնունդով: Սուրապայացին հայ է մինչև եղունգին ծայրը»:

Ճավայում էր գտնվում նաև Սմարանգ ճավահանգստային քաղաքը, որտեղ բացառիկ տնտեսական հաջողությունների հասավ ոչ միայն ինդոնեզաբնակ հայերից ամենանշանավորը, այլև առհասարակ մեր ժողովրդի պատմության մեջ ամենահայրենասեր

մարդկանցից մեկը՝ Յովսեփ Յովհաննեսի Ամիրխանյանը (1771-1834): Ծագումով ղարաբաղցի այս վաճառականը 1820թ. հաստատվում է Սմարանգում, հոլանդական իշխանություններից ծեռք բերում ափիոնի վաճառքի մենաշնորհը և վեց տարվա ընթացքում դառնում ժամանակի ամենահարուստ հայը: Նրան էին պատկանում ընդարձակ պլանտացիաներ, տիրում էր 30 նավի, մասնացուղերի՝ Բասրայում ու Լոնդոնում, ազատ ելունուտ ուներ Յոլանդիայի թագավորի մոտ: Տեղեկանալով այն մասին, որ Արևելյան Յայաստան անցել է Ռուսաստանին, Յ. Ամիրխանյանը 1829թ. հոկտեմբերի 20-ին Ներսես Աշտարակեցուն գրում է հոչակավոր մի նամակ, որտեղ նկարագրելով իր դիրքը, ունեցվածքը, ապրելակերպը նշում է. «Յողատարածքներ, նավեր, շինություններ՝ ամեն ինչ լիովի ունեմ, բայց բախսի այդ բոլոր ծոխ պարզները տակավին ինձ չեն միշտարում, երբ մտարերում եմ, թե ինչ վիճակի մեջ է իմ սիրելի Յայրենիքը և ինչպիսի՝ թշվառություն են կրում իմ հայրենակիցներից ունանք: ... Աստծո շնորհիվ, ես այստեղ մի տիրակալ իշխանի հավասար կյանք եմ վայելում: Լոկ հայրենյաց սերն է, որ վշտացնում է ինձ»: Ապա, Աշտարակեցուն հայտնում է մտադրությունը և խնդրում իր առաջարկը ներկայացնել Նիկոլայ Ի ցարին. «Մտադիր եմ, եթե միայն հմարավոր լինի, դրամով գնել իմ նախնյաց երկրները, այն է՝ Ղարաբաղի աշխարհը Փայտակարանով հանդերձ և կամ մի որոշակի հարկ տալ դրանց տիրելու համար, քանզի հարազատ երկրների կորուստն ինձ համար վերին աստիճանի ցավալի է»: Ընդ որում, այդ ծրագրի իրականացման համար նա պատրաստ էր տրամադրել իր ամբողջ վիթխարի կարողությունը և ընտանյոք տեղափոխվել Յայաստան:<sup>1</sup>

Յ. Ամիրխանյանը Սմարանգի առաջին, բայց ոչ վերջին հայն եր: Նորջուայեցի Պողոս Անդրեասյանը (1804-1861), որ վախճանվեց Պրիանգար գավառի Սինդանգլայա բնակավայրում, տերն էր «Տրանզկիլ» անվամբ շաքարի գործարանի և տարեկան արտադրում էր 20 հազար պիկուլ<sup>2</sup> շաքար: Կալվածատերեր, շաքարի ու լեղակի գործարանատերեր էին Յովսեփ, Սամվել ու Եղիազար Յովսակիմյան եղբայրները, «Պետրոս և ընկ.» ֆիրմայի անդամ Ա.

<sup>1</sup> Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «10 կապիտալիստ» գիրքը:

<sup>2</sup> 1 պիկուլ = 135 անգլիական ֆունտի:

Ա. Պետրոսյանը: Սմարանգի մոտ գտնվող Սիմանգան լայնարձակ կալվածքը պատկանում էր չորս անձանց՝<sup>15/27</sup> մասը՝ Կարապետ Անդրեասյանին,<sup>6/27-ը՝ Ֆրեդրիկ-Դանիել Շովհաննիսյանին,</sup><sup>3/27-ը՝ Դակորոս Շովհաննիսյանին</sup> և <sup>3/27-ը՝ Մ. Պ. ֆոն Լարենին:</sup>

Սմարանգում երկար տարիներ սրճի և այլ ապրանքների արտահանությամբ էր զբաղվում Բարավիայի հայոց դպրոցի նախկին ուսուցիչ Խաչիկ Թովմասյանի ու նրա եղբայրների հիմնած «Թովմասյան Եղբայրներ» առևտրական տունը: 1920-ական թթ. այս նավահանգստում բիզնեսով էին զբաղվում ականավոր հնդկահայ, ազգային-ազատագրական շարժման գաղափարագիր Շահամիր Շահամիրյանի ժառանգները, Խաչատուր Խազլույանը, Անդրեասյանները, իսկ քաղաքի լավագույն հյուրանոցներից մեկը Lanson Hotel-ը, պատկանում էր Գասպար Միքայելյանին:

Դայ վաճառականները հաստատվել էին ճավայի այլ քաղաքներում ևս: Այսպես, Զպարա քաղաքի մոտ գտնվող Սումբրինգոն կալվածքի տերն էր Մարգար Սութիասյանը, որի մեկենասությամբ 1853թ. Նոր Չուղայի Շակովքանենց քաղի Ս. Ստեփաննոս Եկեղեցու բակում բացվեց երկրորդ դպրոցը: Երեսուն տարի գոյատևած այս վարժարանին նա տարեկան տրամադրում էր 300 ռուփի, և այդքան փողով ուսանում էր 100 երեխա:

Կղզու արևմուտքում գտնվող Բանդունգ քաղաքում 1908թ. հաստատվեց Միքայել Ս. Միքայելյանը, ով 1923թ. ընտրվեց Բարավիայի Ազգային վարչության անդամ, իսկ 1934թ.<sup>1</sup> նախագահ: Նրանցից քաջի այստեղ բիզնեսով էին զբաղվում տապիոկայի գործարանատեր Ալեքս Եղիշյանը և նրա եղբայր Եղիշեն, Մովսես Մովսեսյանը, Սարգիս Թորոսյանը, Գևորգ Նազարեթյանը:

Ճավայի արևելքում գտնվող, 7 հազար տարվա պատմություն ունեցող Մոջոկերտոց քաղաքում 1880-ական թթ. հաստատվեց և շուրջ 40 տարի առևտրով զբաղվեց Պողոս Պողոսյանը: 1881թ. այստեղ խանութ ուներ Պողոս Մադարյանը:

Այժմ տեղափոխվենք Սուլավեսի կղզի, որի կենտրոն Մակասարում հայտնվել էր առաջին հայը՝ խոչա Սոլիման:

1872թ. Մակասար է զայխու «Զոհրաբ, Մեսրոպ և ընկ.» առևտրական տան հիմնադիրներից Շակոր Մեսրոպյանը, որը տնտղելով իրավիճակը, փոքրիկ «հետախուզում» կատարելով՝ երեք ամիս ամց տեղափոխվում է Սուլարաբյայ: Շաջորդ տարի գալիս է Միքա-

յել Ստեփանյանը և հիմնում առևտրական տուն, որը երկար տարիներ միակ հայապատկան ֆիրման էր: Միայն 1912թ. հիմնվում է «Ստեփանոս և Գրիգոր ընկ.» (սեփականատերեր Շովհաննես Ստեփանոսյան և Գրիգոր Գրիգորյան, փակվել է 1929թ.), իսկ 1917թ. «Ստեփանոս և Ստեփանոս» ընկերությունը (սեփականատերեր Ստեփանոս Ստեփանյան և էժեն Շովհաննիսյան, գործել է մինչև 1927թ.): 1918թ. Մակասարում կար 21 հոգուց բաղկացած չորս ընտանիք, որոնք բոլորն էլ ընդգրկված էին այս երեք առևտրատների գործունեության մեջ: Նրանք Եվրոպայից ներմուծում էին մանուֆակտուրա և արտահանում արևադարձային բերքեր:

Մակայն Մակասարի ամենանշանավոր հայն, անշուշտ, Սեթ Պողոսյանն (Սեթ Պոլ) էր: Նա 21 տարեկանում նոր Չուղայից գալիս է Կալկաթա, 1880-ական թթ. ավարտում Մարդասիրական ճեմարանը, մի քանի տարի Բալի կղզում լինում առևտրական գործակալ, ապա տեղափոխվում է Մակասար, ծառայության անցնում «Միքայել Ստեփանոս և ընկ.» ֆիրմայում և հետագայում դառնալով տնօրեն՝ բացառիկ օժտվածության և անձնական ծեռներեցության շնորհիվ տիրանում վիթխարի հարստության՝ շուրջ 1 մլն. գուլդենի: Ս. Պողոսյանին էին պատկանում բազմաթիվ կալվածքներ, 100 սեփական տուն և Մակասարի ամենախոշոր «Օրանիա» հյուրանոցը: Չնայած ամուսնացած էր դե Յոնց (de Jong) ազգանվամբ մի հոլանդուհու հետ, որից ուներ վեց զավակ, սակայն չէր մոռանում ազգի հանդեպ իր պատասխանատվության մասին: Ս. Պողոսյանը 300 հազար ռուփի հատկացրեց Նոր Չուղայի վարժարաններին, Կալկաթայի Մարդասիրականին և ազգային այլ կարիքների: Մակասարի այս խոշորագույն ծեռնարկատերի և բարերարի մահվանից հետո (1926թ.) «Միքայել Ստեփանոս և ընկ.» ֆիրման չդադարեցրեց գործունեությունը: Ընդհակառակն, 1925թ. մասնաճյուղ բացեց Սուլավեսի Մենանդր քաղաքում և, առևտրական բիզնեսից քաջի, դարձավ Եվրոպական ու չինական 12 ընկերությունների, բանկերի և ֆիրմաների ներկայացուցիչ:

Նիդերլանդական Շակաստանում կար ևս մեկ կղզի, որտեղ հայերը տնտեսական լայն գործունեություն ծավալեցին. դա Բալին էր: Ինդոնեզական մշակույթի և ժողովրդական արվեստի այս կենտրոնում, ուր գտնվում են «Արքայական դամբանները (XII դ.) և «Փղերի քարանձավը» (XIII դ.), մեր վաճառականները հայտ-

նվել են XIXդ. 70-80-ական թթ., բացառապես որպես ճավայի առևտրական տների գործակալներ: Տնտեսական գրավչությունն այն էր, որ Բալին մաքսազերծ էր, ավելին, այստեղ ազատ էր ափիոնի վաճառքը, ինչն արգելված էր ճավայում, քանզի հոլանդական իշխանությունների մենաշնորհն էր: Վաճառականի իրենց ուղին այստեղ սկսեցին Գևորգ Արգարյանը, Սեր Պողոսյանը, Մ. Ս. Մարտինը, Գ. Պ. Թադևոսյանը, Դ. Ն. Գալստյանյանը և այլք: Մինչ ի մահ այստեղ ապրեց սառուցի գործարանատեր Մկրտիչ Մարգարյանը: 1885-1908թթ. Մակասարի «Միքայել Ստեփանոս և ընկ» ֆիրմայի Բալիի գործակալն էր Նիկողայոս Կրետյանը:

Ըստ 50 տարի Բալիում ապրեց մեր կապիտալի ամենազարմանալի դեմքերից մեկը՝ Մինաս Շակորի Պողոսյանը: Պատանի հասակում նա Նոր Ջուղայից գաղթեց Կալկաթա, սովորեց Մարդասիրականում, ապա հրապուրվելով Ավստրալիայի ոսկու հանքերի վարդագույն հեռանկարներով՝ բռնեց Կանաչ մայրցամարի ճամփան: Բարավիայում հանդիպեց քեռուն, որը նրան խորհուրդ տվեց բնակություն հաստատել Բալիում: Այդպես էլ արեց, բայց մինչ այդ Բարավիայում առաջին անգամ... կինո տեսավ. սիրահարվեց այդ զարմանահրաշ արվեստին և ամբողջ կյանքում սերը պահպանեց: Բալիում սկսեց զբաղվել մոճի ու շաքարի արտահանմամբ, սակայն կինոյի տեսնը հանգիստ չէր տախս, և դա պատճառ դարձավ, որ նա կառուցի կղզու... առաջին կինոթարունը: Հետագայում նրա խնդրանք-հորդորով անգլիացի գրող Փառտելը գրեց «Դրախտը երկրի վրա» գիրքը, ապա վարձեց հոլանդացի կինեմատոգրաֆիստների, որոնք Բալիի մասին նկարահանեցին առաջին փաստավակերագրական ֆիլմը: Նա այնքան մեծ սեր, հարգանք ու հեղինակություն էր վայելում, որ կղզաբնակները նրան ավանում էին «ճերմակամորուք արքա»:

Սփյուռքահայ գաղթօջախների պատմության մեջ փոքրաթիվ ինդոնեզական համայնքն աչքի է ընկնում անհուն նվիրվածությամբ առ պատմական հայրենիքն ու եկեղեցին: Առանձնանում է համախմբվածությամբ, կազմակերպվածությամբ, և այն եզակի դեքերից է, երբ տնտեսական շահը ոչ թե տարանջատել, տրոհել էր, այլ հակառակն՝ միաբանել:

Ասել, թե Նիդերլանդական Շնդկաստանում նրանց կյանքն անամպ, ինչտ ու հանգիստ էր, սիսալ կլիների տեր Շոլ-

անդիան մշտական պայքարի մեջ էր տեղացիների հետ, հաճախ գենքի ուժով ճնշում էր ինդոնեզացիների ազգային-ազատագրական շարժումները, և հայերը մշտական երկրնտրանքի առջև էին: Շոլանդական օրենքները եկվորներին արգելում էին հողի սեփականատեր դառնալ, այդ իսկ պատճառով նրանք ստիպված էին ամուսնանալ տեղացիների հետ: Դա էր պատճառը, որ հայ տղամարդկանցից շատերն ամուրի մնացին, բայց քիչ չէին նաև նրանք, ովքեր հարկադրաբար դիմում էին այդ քայլին, և դա, ի վերջո, հանգեցնում էր ուժացման:

Սակայն հայոց գենետիկական առանձնահատկությունն ինքնության պահպանումն է, տոկունությունը, և այս գծերը ցցուն կերպով արտահայտվում էին ինդոնեզաբնակների մոտ: Չուտ իրավական տեսակետից նրանք առաջնորդվում էին հոլանդական իշխանությունների կողմից հաստատված մի փաստաթղթով, որը կոչվում էր «Նեդերլանտական Շնդկաստանայ Ջայոց Սահմանդրութիւն»<sup>1</sup>, իսկ համայնքի ընթացիկ հարցերը կարգավորում ու լուծում էր եռամյա ժամկետով ընտրվող «Շանրականութիւն հանձանաց ժողովրդեան հայոց ի ճավա» անվամբ մարմինը:

Փոքրաթիվ համայնքի համար ազգապահպանության, դիմագրավման սնուցող աղբյուր էր մշտական, անխօնի կապը հայրենիքի, հատկապես՝ Նոր Ջուղայի հետ: Ընդ որում, հայրենիքից նրանք ստանում էին հոգնոր աջակցություն և դրա դիմաց տրամադրում ֆինանսատնտեսական աջակցություն: Բացի այն, որ առանձին անհատներ կանոնավոր բարերարություն էին կատարում կամ կտակներով պատրաստակամորեն երկարաժամկետ հատկացումներ տրամադրում, համայնքն ինքը կազմակերպված ծնով մասնակցում էր ազգային հանգանակություններին: Այսպես, ինդոնեզաբնակները 1894թ. 8000 գուլդեն<sup>2</sup> տվեցին Սասունի աղետյալներին, 500 գուլդեն՝ կովկասահայ սովյալներին (1905-1906թթ.), բազմաթիվ այլ խոշոր դրամական նվիրատվություններ ուղարկեցին Վենետիկի Միհթարյան միաբանությանը՝ 200-ամյա

<sup>1</sup> Ցավոք, անչափ հետաքրքիր իրավական այս վավերագիրը մասնագետների ուշադրությանը չի արժանացել, այնինչ պատշաճ տեղ կարող է գրավել Աստրախանի, Նոր Նախշանանի, Գրիգորիոպոլսի, Գերլայի հայոց ինքնավարությունների համապատասխան փաստաթղթերի շարքում:

<sup>2</sup> 30 գուլդեն = 1 անգլիական ֆունտ ստերլինգի:

Իոբեյանի առիվ, Նոր Զուղայի Դայուհեաց բարեգործական ընկերությանը (1908թ.), Դայաստանի սովորական մատուցություններին (1908թ.), Նոր Զուղայի Ս. Կատարինե որբանոցին, Դայաստանի որբերին (1915թ.):

Սա է պատմությունը հեռավոր արևադարձային կղզիներում հաստատված փոքրաթիվ, բայց ազգանվեր հայոց:

ՀՎԵԴԻԱ  
(XVII Խ.)

Զուղայեցին՝ հայության ամենաազնիվ և ուշիմ այս տիպարը, մեր ժողովրդի այն տարրն է, որ ամենածիշտ ու գեղեցիկ կերպով է պարզում իր ցեղային նկարագրի բարի կողմերը: Ի բնե խելացի ու հայրենասեր՝ ճա զարմանալի արագությամբ է օգտագործում իրեն ընձեռված նպաստավոր պայմանները՝ զարգացնելու համար իր ազգային բարեմասնությունները:

Թորգոմ արք. Գուշակյան

Առանց ավելորդ նախաբանի ներկայացնենք Շվեդիայի հետ կապված պատմականորեն ստույգ փաստեր, սակայն կիսնորեինը, որ ընթերցողն ուշադրություն դարձներ «անցնել», «տանել» բայերին ու տառեթեվերին:

Եվ այսպես, 1686թ. սեպտեմբերի 1-ին Նովգորոդով Շվեդիա են անցել հայ վաճառականներ Սաֆար Բասեյյանը (Վասիլիկ) և Անուշ Վարդանյանը (մեծարքիվ ապրանքներով վերադարձել են 1688թ.): 1688թ. դեկտեմբերին Շվեդիա հում մետաքս են տարել Պետրոս և Պողոս Ամիրյան եղբայրները (վերադարձել են 1689թ. մայիսին, այս մարտիկ 1694թ. բնակվել են Մոսկվայում և վաճառատուն բացել Բելի գորոդ թաղանասի իջևանատանը): 1690թ. նոյն Ս. Բարսեղյանը և նրա գործընկերները Շվեդիա են տարել 1305 փութ հում մետաքս: 1691թ. հայ վաճառական Գ. Մերկուլովը և իր 14 ազգակիցները Շվեդիա են տարել 25.935 ռուբլու 1290 փութ ապրանք, որից 1107 փութը՝ հում մետաքս: Շվեդիա են անցել նաև հետևյալ հայ վաճառականները. 1692թ. հունվարի 21-ին՝ Ստեփան Թոփյանը, մայիսի 6-ին՝ Թումանյանցը, Նիկողոս Սիմոնյանը, Սիմեոն Աստվածատրյանը (Բոգդանով) և Գրիգոր Աստվածատրյանը, նոյեմբերի 22-ին՝ Հակոբ Սերգովը, դեկտեմբերի 24-ին՝ Սաֆար Բարսեղյանը: 1694թ. վեց հայ վաճառականներ Շվեդիա են տարել 12.740ռ. ապրանք, իսկ մեկ այլ խումբ՝ 12.852ռ. 518 փութ հում մետաքս: 1695թ. Շվեդիա է անցել Աղաջան Ավետիքյանը, իսկ 1696թ. փետրվարի 4-ին՝ Գրիգոր Դավթյանը, Մկրտիչ Աստվածատրյանը, Նիկողայոս Թորոսյանը, Շահվերդ Սարգսյանը, Մարտիկ

րոս Բարսեղյանը, Հակոբ Դավթյանը, Եսայի Խաչատրյանը, Բահարուր Դավթյանը, Առաքել Պետրոսյանը, Պողոս Ստեփանյանը, Աստվածատուր Հովհաննիսյանը, Մինան Հովհաննիսյանը, Ծառա Սահակյանը, Խաչիկ Միքայելյանը և ուրիշներ: Նշենք, որ այս թվարկումը ամբողջական չէ. բոլորին չենք հիշատակում զուտ տեղի խնայողությունից դրդված:

Ինչու էինք խնդրում ուշադրություն դարձնել «անցնել», «տանել» բայերին և տարեթվերին. նախ, հայկական տարբեր աղբյուրներից քաղված այս հավաստի տեղեկություններից ոչ մեկում հստակ ու պարզորոշ ասված չէ, թե հայ վաճառականները եղել են Շվեդիայում: Երկրորդ, ըստ այդ տվյալների՝ հայ-շվեդական առևտրատնտեսական հարաբերություններն սկիզբ են առնում 1686 թվականից:

Սկիուռքահայ համայնքներով, այլ ժողովուրդների հետ հայոց շփումներով գրադիվոնները, մեր կարծիքով, թույլ են տալիս մի սկզբունքային վրիպում՝ գրեթե ուշադրություն չեն դարձնում տվյալ երկրի իրողություններին, առանձնահատկություններին և սահմանափակվում են հայոց առկայության ու ներդրման սոսկական արծանագրմամբ: Այնինչ երևույթների լրջմիտ ուսումնասիրությունը տեղիք է տալիս այլ եզրահանգումների:

Հայ-շվեդական առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ տվյալներն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայ վաճառականներն՝ անխտիր նորջուղայեցիներ, Ոտևասատանն օգտագործելով որպես տարանցիկ ուղի, հում մետաքս են մատակարարել շվեդներին (Նոր Զուլա էին տանում շվեդական մահուր, մանուֆակտուրայի տարբեր տեսակներ, ժանյակ, ժամացույց, հեռադիտակ, ակնոց, ասեղ, պերճանքի իրեր և այլն): Սա ինքնին փաստի պարզ արձանագրում է, սակայն եթե փորձենք խորանուխ լինել երևույթի մեջ, մասնավորապես՝ պարզել XVIIդ. ռուս-շվեդական հարաբերությունները և հայ վաճառականների դերը դրամցում, ապա կրացահայտվեն միանգամայն այլ իրողություններ:

Շվեդիայի պատմության մեջ XVIIդ. մեծապետականության, ֆեոդալական շվեդական պետության ծաղկման շրջան էր: Ամբողջ այդ հարյուրամյակի ընթացքում Շվեդիան հաղթական պատրազմներ էր մղում՝ անընդհատ ընդարձակելով իր տիրույթները: Դեռ 1558-1583թթ. Լիվոնյան պատերազմի ժամանակ նա նվաճեց

հյուսիսային Եստոնիան: 1611-1617թթ. ռազմական ներխուժման հետևանքով Ոտևասատանին զրկեց Բալթյան ծովի ափամերձից: Լեհաստանի դեմ մղած պատերազմի ընթացքում շվեդները 1621թ. գրավեցին Ռիգան, 1625թ.՝ Դորպատը: Երեսնամյա պատերազմի արդյունքում (1618-1648թթ.) շվեդների տիրապետության ներքո անցավ Գերմանիայի բալթյան ծովեգերքի գգալի մասը: Այսպիսով, XVIդ. և XVIIդ. առաջին տասնամյակներում Շվեդիան առանցքային դիրքեր գրավեց Բալթյան ծովի արևելյան ու հարավային ափերին և տիրանալով խոշորագույն գետերի ակունքներին ու ափերին՝ փաստական հսկողության տակ առավ Ոտևասատանի ու Գերմանիայի բալթյան առևտուրը:

Այդպիսի պայմաններում ի՞նչ էր մնում Ոտևասատանին անել. պարզապես հաշտվել: Նա Արևմտյան Եվրոպայի հետ առևտրական հարաբերություններ պահպանելու համար երկու ծովային ուղի ուներ՝ Բալթյան և Ջուսիսային ծովերով: 1617թ. Ստոլրովյան անպատվաբեր դաշնագրից հետո Ոտևասատանն ստիպված եղավ շվեդների հետ առևտուր անել սահմանային քաղաք դարձած Նովգորոդով, իսկ եվրոպական այլ երկրների հետ՝ Արխանգելսկով, նվազ ապահով Սպիտակ ու Բարենցի ծովերով: Ոտևասատանի ու Շվեդիայի միջև այս խաղաղ հարաբերությունները տևեցին մինչև 1700թ. Ջուսիսային պատերազմը, իսկ երկու երկրների միջև առևտրի հիմնական ապրանքատեսակներ դարձան ռուսական հացահատիկն ու շվեդական երկարը:

Ահա այսպիսին է ռուս-շվեդական հարաբերությունների համառոտ իրապատկերը XVIIդ., որը ոչ միայն հայ-ռուսական, այլև հայ-շվեդական առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանն է: Ինչպես հայտնի է, նորջուղայեցի վաճառականների և Ալեքսեյ Միհայլովիչ ցարի միջև առետրական պայմանագիր կնքվեց 1667թ., սակայն դրան նախորդել էր հայոց առևտրական ներկայության մի շրջան, որը հող էր նախապատրաստել այդ պաշտոնական, իրավական հարաբերությունների հաստատման համար: Այս առևտրական ներկայության փուլում էլ հենց հինգ դրվել հայ շվեդական հարաբերություններին:

Մեր ձեռքն անցավ մի փաստաթուղթ, որը թվագրված է 1629թ. հունիսի 15-ով: Մինչ այժմ անհայտ այդ փակերագիրը (հայ հետազոտողներից ոչ դրան չի անդրադարձել) նոր լույս է սփռում թե

հայ-ռուսական, թե՛ հայ-շվեդական հարաբերությունների վրա, և կցանկանայինք մի մեջբերում կատարել: Սակայն որպեսզի ընթերցողն ընթանի, թե ինչի մասին է խոսքը, հարկ համարեցինք ստորև գետեղել հետևյալը.

### ՑԱՆԿ

անձանց, հասկացությունների, իրերի

**Դեսպանական դիվան** (Պօսոլեսկուն որսկազ) - արտասահմանյան երկրների հետ հարաբերությունների Ռուսաստանի բարձրագույն ատյանը:

**Բոգդան Շորին** - նովգորոդցի խոշոր վաճառական (կոպեց):

**Կանեփաթել** - կանեփի բույսից ստացվող կոպիտ թել, որից պատրաստում էին ճոպան, պարան և այլն:

**Հում մետաքս** - այն բանից հետո, երբ ծախողվում են պարսիկ վաճառականների՝ այն Եվրոպայում վաճառելու բոլոր փորձերը, Շահ Աբասը 1618թ. աճուրդի է հանում մինչ այդ իրեն պատկանող հում մետաքսի մենաշնորհը: Ամենաբարձր գին՝ 1 հակին (6 փուր) 50 թուման, վճարում են նորջութայեցինները՝ շուկայից դուրս մղելով անգլիացիններին: Այդ ժամանակից սկսած դարեր շարունակ աշխարհի բազմաթիվ երկրներ հում մետաքս արտահանել են բացառապես հայ վաճառականները:

**Անդրեյ Խառլամով** - նովգորոդցի հյուր:

**Յյուր (յօշտե)** - ռուս խոշորագույն կապիտալիստ վաճառական: XVI-XVII դդ. հյուրերն անցել են նատակյաց կյանքի՝ վերածվելով մեծածախ վաճառականների: Նրանց տարեկան ապրանքաշրջանառությունը կազմում էր 20-100 հազար ռուբլի, ինչն այսօրվա պատկերացումներով հավասար է մի քանի միլիոն դոլարի:

**Ֆյուդոր Խառլամով** - նովգորոդցի առևտրական (տօրգովոյ շելօվեկ):

**Իվան Բորիսովիչ Զերկասկի** - իշխան, բոյար, Մեծ գանձարանի դիվանի ղեկավար:

**Իոակիմ Ֆերյանինգ** - շվեդացի թագավորական վարպետ - ջուլհակ:

**Եֆիմոկ** (գերմ. Joachimstaler) - գերմանական արծաթադրամ՝ ռուսական 50 կոպեկ արժողությամբ, որը լայնորեն շրջանառվում

էր Շվեդիայում ու Ռուսաստանում, հատկապես՝ արտաքին առևտրական գործարքների ժամանակ:

Եվ այսպես, 1629թ. հունիսի 15-ին Մոսկվայում, Դեսպանական դիվանում, հարցաքննվում է Բոգդան Շորինը: Նրան առաջադրվում են այսպիսի հարցեր՝ Ստոլբովյան խաղաղ դաշնագրից հետո քանի անգամ և ո՞ր թվականներին է Ստոլիկոլում եղել, նրան ընկերակցել է, արդյոք, Ֆյուդոր Խառլամովը, ինչպիսի ապրանքներ և ի՞նչ քանակությամբ են Շվեդիա տարել, շվեդ թագավորը կամ թագավորի խորհրդականները պատվի արժանացրել են, արդյոք, նրանց, գանձել են, արդյոք, ապրանքներից տուրք և այլն: Շորինը հարկ եղած բացատրություններ է տվել, որոնց հիման վրա ել կազմվել է փաստաթուղթը, և որից մի մեջբերում ենք կատարում (թարգմանությունը մերն է - Խ. Դ.):

«Շաշտության դաշնագրից հետո ինքը՝ Բոգդանկոն, Շվեդիա, Ստոլիկոլմ մեկնել է երկու անգամ, առաջին անգամ 1627թ.՝ կանեփաթելով, երկրորդ անգամ 1629թ.՝ արքայական հում մետաքսով: Նրա հետ մեկնել է նովգորոդցի հյուր Անդրեյ Խառլամովի եղբայր Ֆեդկան: Իսկ արքայական հում մետաքսը նովգորոդցի հյուր Անդրեյ Խառլամովի հետ վերցրել են Մոսկվայում, իշխան Բորիս Իվանովիչ Զերկասկու հրամանով, արքունի գանձարանից, վաճառական պալատից՝ առևտրականներից 1628թ. այն պատճռով, որ երբ նա՝ Բոգդանկոն, 1627թ. իր կանեփաթել ապրանքով առաջին անգամ եղել է Շվեդիայում, Ստոլիկոլմում, պայմանավորվել է թագավորական վարպետ Իոակիմ Ֆերյանինգի հետ, որ Բոգդանկոն Ստոլիկոլմ հաջորդ այցի ժամանակ Իոակիմին Եֆիմկաների դիմաց հում մետաքս կրերի: Եվ նա՝ Բոգդանկոն, թագավորական վարպետի հետ այսպիսի պայման է դրել, ինչ որ նա մետաքսով 1629թ. ծմեռային ճանապարհով գա՝ սահմանի վրա նրան բեռնասայլեր կտան, որպեսզի այդ մետաքսը վարպետը գնի թագավորական կարիքների համար: Եվ այդ պայմանի մասին թագավորական վարպետը նրան գրություն է տվել, և այդ գրությունը հիմա նրա՝ Բոգդանկոնի մոտ է, Նովգորոդում: Եվ իններ որ նա Ստոլիկոլմից Նովգորոդ է գալիս՝ պայման է դնում հյուր Անդրեյ Խառլամովի հետ, որպեսզի նա այդ մետաքսի համար Մոսկվա

գնա, արքային աղազանք ամի և նրա արքայական գանձարանից եֆիմկանների դիմաց հում մետաքս վերցմի: Եվ այդ պայմանով Անդրեյ Խառլամովի հետ 1629թ. գալով Մոսկվա՝ նրանք արքայական հրամանագրով և իշխան Իվան Բորիսովիչ Զերկասկու հրամանով վաճառականական պալատից առևտորական Բախտիյար Բուլգակովից ու նրա ընկերներից (ընդգծումը մերն է - Խ. Դ.) 8000 ռուբլով 3 հակով 18 փութ հում մետաքս են վերցրել և այդ փողը եֆիմկաններով տվել են արքայական գանձարանին: Եվ արքայի հրամանագրով իշխան Իվան Բորիսովիչ Զերկասկու դիվանից նրանց պետական արքունի արքայական շնորհագիր են տվել դեպի Վելիկի Նովգորոդ, որպեսզի այդ մետաքսով Նովգորոդից բաց բողնեն Ըվեդիա, Ստոկհոլմ: Եվ արքայական այդ շնորհագրով նրան՝ Բոգդանկոյին, իսկ նրա հետ և Անդրեյ Խառլամովի եղայր Ֆեդկային 1629թ. մետաքսով Նովգորոդից բաց են բողել Ըվեդիա, Ստոկհոլմ և ճամփի գիր տվել»:

Ապա Բ. Շորինի պատմածի հիման վրա շարադրված են Ստոկհոլմում ու Ետղարձին նրանց կրած չարչարանքները: (Ի դեպ, մի հետաքրքիր մանրամասն. հարցաքննությունից հետո Խառլամով Եղբայրները դատապարտվել են մեկշաբաթյա բանտարկության այն բանի համար, որ նրանք Ըվեդիայում ճամփի գիր են վերցրել, ուր նշված չի եղել նրանց հպատակությունը ռուսաց ցարին և տուն դառնալուց հետո նրանք այդ բուղը չեն ներկայացրել Նովգորոդի վոյեվոդային):

Ի՞նչ արժեք ունի այս վավերագիրը մեզ համար, բանն այն է, որ Բախտիյար Բուլգակովը և նրա ընկերները հայեր են, հայ վաճառականներ, և այդ փաստը շատ խոսուն է:

Նախ, համարձակորեն կարելի է պնդել առնվազն 1628թ. Մոսկվայում հայերի կայուն առևտորական ներկայության մասին: Խսկ դա վկայում է, որ հայոց ազգային կապիտալի «թթխմոր» հում մետաքսը նորջուղայեցիները ոչ միայն Թուրքիայով ու Միջերկական ծովով էին Եվրոպա տանում, այլև եռանդուն կերպով յուրացնում քրիստոնյա Ուսուսաստանի ճանապարհը:

Ուշագրավ է մեկ այլ հանգամանք ևս, այն, որ ռուս հյուրերն անմիջականորեն հայ վաճառականների հետ գործարք կատարելու իրավունք չունեին: XVIIդ. հում մետաքսի առևտուրը (ինչպես հացահատիկը և ձկնկիթը) ռուսական գանձարանի մենաշնորհն

էր, Պարսկաստանից հայերի բերած մետաքսը մուտք էր արվում գանձարան, ապա կառավարության բուլտվությամբ վաճառվում հյուրերին՝ Ուսուսաստանում և արտասահմանում: Խնդիրն այն է, որ հում մետաքսն արտասահմանում վաճառվելիս առնվազն 50 տոկոս գուտ եկամուտ էր բերում, և ոռու ցարերն այդպիսի շահույթ չեն կարող ծեռքից բաց բողնել (թե Միխայիլ Ֆյոդորովիչ, թե Ալեքսեյ Միխայլովիչ ցարերն անձանք գրադարձակ գործունեությամբ): Ուսուսական գանձարանն, ըստ Ետրյան, միջնորդի դեր էր կատարում հայերի ու շվեդների միջև, ինչը արգելակիչ դերակատարություն ուներ, և այս անարդյունավետությունը հաղթահարվեց դարի 80-ական թթ. Վերջերին, երբ հայ վաճառականներին բույլ տրվեց որոշակի մաքսատուրքի դիմաց ուղղակիորեն առևտուր անել շվեդների հետ:

Սակայն շվեդները հայերի հետ առևտորական հարաբերություններ ունեին ոչ միայն Ուսուսաստանի միջոցով, և դրա անուղղակի ապացույց ևս կա: 1674թ. մայիսին Մոսկվա են ժամանում շվեդ դեսպաններ Օքսենշերնը, Տիգենհաուզենը, Բրուտբերգը և Լիլիենհոֆը՝ նպատակ ունենալով իրենց երկրի ու Ուսուսաստանի միջև դաշինք կնքել ընդդեմ Թուրքիայի: Ի պատասխան Դեսպանական դիվանի հարցունքի, մայիսի 11-ին Օքսենշերնը գրում է.

«... Մեր թագավորական մեծությունը տարբեր կոմիսարներից բաղկացած ներկայացուցություններ ունի բոլոր պետությունների ու քաղաքների արքուններին կից, որտեղ մեր թագավորական մեծության հպատակները առևտուր են գրադարձ, այն է՝ Ամստերդամում, Դամբուրգում, Լոնդոնում, Լիսաբոնում, Կադիսում, անգլիական, ֆրանսիական, պորտուգալական, հոլանդական, իտալական հողերում, քրիստոնեական պետություններում, դրանցից բացի նաև մուսուլմանական՝ Յաթեգորոդում<sup>1</sup>, Ջմյուլինիայում, Վանիորնում<sup>2</sup>: Ապացուցելու կարիք չկա (վաղուց ապացուցված է), որ Թուրքիայի թե արտաքին, թե ներքին առևտուր մեծագույն մասը գտնվում էր հայերի ծեռքում, հետևաբար տրամաբանական է ենթադրել Թուրքիայում հայերի ու շվեդների առևտորական սերտ հարաբերությունների մասին»:

<sup>1</sup> Կոստանդնուպոլիս:

<sup>2</sup> Անկարա:

Մեզ մնում է պատասխանել մի հարցի՝ հրապարակման սկզբում նշված բազմաթիվ հայ վաճառականներն, այնուամենայնիվ, այցելել են Ստոկհոլմ, թե՝ ոչ: Խորապես համոզված ենք՝ այցելել են, այլապես երկու տարի՝ 1686-1688թթ., որտեղ ուն գտնվել Սաֆար Բարսեղյանը և Անուշ Վարդանյանը: Իսկ ուղղակի ապացույցներն, անկասկած, գտնվում են շվեդական արխիվներում:

Այն, որ այսօրվա շվեդահայ գաղութում մեծ թիվ են կազմում նախկին պարսկահայերը, ըստ իս, կարող է ունենալ մեկ բացատրություն՝ դարավոր կապերի վրա հիմնված պատմական հիշողությունը:

## ԱՐԳԵՆՏԻՆԱ

(XIXդ. Վերջ-XXդ. 40-ական թթ.)

Դայը սովորաբար ծեռնարկում է ոչ մեծ գործ և այն էլ լոկ այն բանից հետո, երբ տեսնում է ուրիշի արածը: Բայց եթե մի բան սկսեց՝ ոչ մի դեպքում ետք չի կանգնի, ինչքան էլ վճառ կրի:

Մագդա Նեյման  
Կովկասագետ, 1899թ.

Դայոց գաղթօջախներից ամենաերիտասարդները հարավամերիկաններն են: 1888թ. Բրազիլիայի Սան Պաուլո քաղաք են գալիս առաջին հայերը խարբերդցիներ Կարապետ Գասպարյանը, Մանուկ Շահբայանը և պոլսեցի Կարապետ Յալեպյանը: Տեկ տարի անց նրանց են միանում խարբերդցիներ Յովհաննես, Դակոր և Ավետիս Տեմիրճյան եղբայրները, Ղազար Նազարյանը, Մանուկ և Սարգիս Քորուքյան եղբայրները, Խորայել Խորայելանը, Խաչատուր Գալածյանը, Օհան Խաչիկյանը, Մարգար Գասպարյանը և այլք: Նրանք վաճառականներ չեն, այլ պարզ ու հասարակ մարդիկ են, որ սկզբում տարբեր նահանգներում ու քաղաքներում շատ ծանր կյանքով են ապրում և լեզվին չտիրապետելով, ծանրոք չի հանդիպում տեղի բարքերին ու սովորություններին՝ տարբեր միջոցներով հանապազօրյա հաց են վաստակում: Սակայն նույնիսկ այդ պատահական վաստակը, իրենց բնօրրանի ու լքալ հայրենիքի ապրուստի հետ գրգադրած, անհամեմատելի էր: Դայը հետո, հարազատներին պարբերաբար դրամական նպաստ ուղարկելով, նրանք ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց հայրենակիցներին մատնացուց են անում նոր բնակավայրեր, ուր կարելի էր ապահով ապրել և աշխատել:

Այս տեղեկությունը պետք եկավ 1895-1896թթ. ջարդերից հետո, երբ շատերը մազապուրծ լինելով՝ գաղթեցին Բրազիլիա (ընդ որում, տարագրվում են ոչ միայն բուն Արևմտյան Հայաստանից, այլև Եվրոպական երկրներից): Այստեղից նրանք սփռվեցին այլ երկրներ՝ Ուրուգավայ, Արգենտինա, Չիլի, Վենեսուելա, Պերու՝ հաստատելով թե՝ Ասլանտյան, թե՝ Խաղաղ օվկիանոսների ափերին:

Արգենտինան ունեցավ ամենամեծաթիվ հայությունը՝ իր ազգային, տնտեսական ու մշակութային կառույցներով:

Առաջին հայերը Արգենտինա են հասել համիլյան ջարդերից հետո՝ 1900-ական թթ.: Արդեն 1909թ. Բուենոս Այրեսում բնակություն էր հաստատել 200 հայ, որոնք 1911թ. հիմնեցին «Դայ գաղութային բարեգործական և լսարանական միությունը» (1913թ. վերածվեց ՀԲԸ մասնաճյուղի), իսկ 1912թ. ստեղծվեց Եկեղեցական առաջին հոգաբարձությունը՝ Շովիաննես Հարեշյան, Շովիաննես Ներսեսյան, Նազար Շալաճյան, Գրիգոր Կարապետյան, Սարգիս Փանոսյան, Եղիս Եղիսյան, Անդրանիկ Կեյիլյան կազմով:

Գաղթավայրի կյանքում վիրխարի նշանակություն ունեցավ «Պաքրճյան Եղբայրներ» առևտրական տան ի հայտ գալը: Զնյութնացի Յակոբ, Թագվոր, Մարկո և Շրանտ Պաքրճյան Եղբայրները վաղուց ի վեր հաստատվել էին Մանչեստրում, զբաղվում էին կտորեղենի վաճառականությամբ և բավականին ակնառու դիրք գրավում տեղի համայնքում: Եվրոպայում սկիզբ առած Առաջին աշխարհամարտը նրանց ստիպեց նոր և ապահով շուկաներ որոնել: Այդ նպատակով նրանք 1914թ. Արգենտինա գործուղեցին իրենց համերկրացի, ժնում բարձրագույն կրթություն ստացած 25-ամյա Արտեն Բերգամալիին: Նա հիմնեց «Պաքրճյան Եղբայրներ» ֆիրմայի մասնաճյուղը, որն առևտրատեսական յուրատեսակ կամուրջ դարձավ Անգլիայի և Արգենտինայի միջև, հատկապես տեքստիլ արդյունաբերության ոլորտում: 1928թ. Պաքրճյանների ֆիրմայի մասնաճյուղը վերածվեց անանուն ընկերության<sup>1</sup> ուր բաժնետեր Ա. Բերգամալին ստանձնեց փոխնախագահի և տնօրեն-վարիչի պաշտոնները: Նա դարձավ նաև «Պատերազմի հայ աղետյալների նպաստընկալ համագաղութային մարմնի» առենապետ, «Դայ կենտրոնի» հիմնադիրներից մեկը և մինչև 1942թ.<sup>2</sup> Եկեղեցու հոգաբարձության ատենապետ:

Ա. Բերգամալին լայն ճանաչում ուներ Բուենոս Այրեսի ֆինանսական շրջանակներում, նա հիմնեց «Սիրիո-Լիբանես» բանկը, որը երկու տարի նախագահեց, իսկ հետո դարձավ վարիչ-քարտուղար: Երկար տարիներ Եղավ Արգենտինա կտորեղեն ներմուծողների կենտրոնական խորհրդի նախագահ և անդամ:

<sup>1</sup> Անանուն ընկերությունները ժամանակի բիզնեսի կազմակերպահրավական ծերերից էին. դրամագլուխը՝ հիմնական կապիտալը, կազմակորպում էր բաժներերից, որոնց հանգում էին ազատ վաճառքի, իսկ կանոնադրությունը հաստատում էր կառավարությունը:

Միաժամանակ, Պաքրճյան Եղբայրների առևտրական տունը մասնաճյուղերի լայն ցանց սփռող ամբողջ Հարավային Ամերիկայում, փաստորեն, դառնալով միջազգային մակարդակի ֆիրմա: Կենտրոնակայանը գտնվում էր Մանչեստրում, որը դեկավարում էին կրտսեր Եղբայրները՝ Զմյունիո վերաշինաց միության հովանավորող հանձնախմբի անդամ Մարկոն, որ անուսնացած էր հայտնի անգլագիր հայ գրող Մայքլ Առլենի քրոջ հետ, և Շրանտը: Ամենավագը՝ Յակոբը, բնակվեց Բեռլինում և էական նյութական նպաստ բերեց տեղի համայնքին ու Եկեղեցուն: Իսկ Թագվորը հաստատվեց Չիլիում, 1942թ. Սանտյագոյի ՀՍԸ մարզադաշտի գնման համար նվիրաբերեց 30 հազար պեսո, ընտրվեց չիլիահյ գաղութի պատվավոր նախագահ: Բացի այդ, 5000 ֆրանկ տրամադրեց Լեոյի «Թրքահյ յեղափոխութեան գաղափարաբանութիւն» գրքի հրատարակման համար և բանկարժեք արժաք գավաթ նվիրեց Խորհրդային Հայաստանի ֆուտբոլիստներին: 1940-ական թթ. «Պաքրճյան Եղբայրներ» ֆիրման 12 մասնաճյուղ ուներ Արգենտինայում, մեկական՝ Չիլիում, Պերուում, Ուրուգվայում և Վենեսուելայում: Ավելորդ չեն նշել, որ այդ մասնաճյուղերում աշխատում էին հարյուրավոր հայ պաշտոնյաներ:

Պաքրճյանների օրինակը, բիզնեսում նրանց ակնառու հաջողությունները որոշեցին, որ Արգենտինա տեղափոխվեն նորանոր հայեր: Եվ դա հիմնականում կատարվեց ստիպողաբար՝ 1915թ. Շայոց Ցեղասպանությունից հետո:

1916թ. Բուենոս Այրեսում արդեն բնակվում էր 2000 հայ, բայց սկսված տնտեսական զգնաժամը պատճառ դարձավ, որ շուրջ 800 հոգի մեկնի ԱՍԽ, իսկ 1917թ. նոր արտագաղթ սկսվի Ֆրանսիա:

Թվաքանակի նվազումը, սակայն, մեկ այլ հակառակ ազդեցություն էլ ունեցավ, արտագաղթը մնացյալներին ստիպեց համախմբել, ինքնակազմակերպվել, և այդ մարմնի դերը ստանձնեց 1920թ. հիմնված «Արգենտինայի հայ ազգային միությունը»:

1920-ական թվականներից Արգենտինա սկսեց մուտք գործել նաև այլ երկրներում արդեն ձևավորված, բայց ապահով հանգրվան որոնող հայոց նոր կապիտալը:

1923թ. Բուենոս Այրես Եկապ 41-ամյա պոլսեցի Շրանտ Նիքորյանը, մի մարդ, որն անցնելով բազում փորձությունների և տարագրությունների խորդութորդ ճամփաներով՝ իրեն նշտապես պահեց

ազգանվեր հայի բարձր պատվանդանի վրա: Նա մանուկ հասակում ընտանյոք տեղափոխվել էր Զմյուռնիա, դպրոցն ավարտելուց հետո մտել առևտորի ասպարեզ, առաջնակարգ դիրքի հասել և ընտրվել Զմյուռնիայի քաղաքական ժողովի առենապետ, համայնքի պատվավոր նախագահ: Զմյուռնիայի աղետից՝ հայաբափումից, հետո անցել էր Յունաստան, դարձել Արենքում Դայաստանի առաջին Հանրապետության ոչ պաշտոնական ներկայացուցիչը և վերակառուցել տեղի հայոց Եկեղեցին:

Սակայն Յ. Նիքորյանն իրեն լիովին դրսորեց Արգենտինայում: 1937թ. նա Բուենոս Այրեսում կառուցեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին, ընտրվեց Եկեղեցու հոգաբարձության պատվավոր նախագահ, իսկ բիզնեսը և ազգանպատ գործունեությունը շարունակեցին որդիները՝ Խորիսն և Գևորգը:

1924թ. Բուենոս Այրեսում հաստատվեց 29-ամյա կեսարացի Դայկագ Սարգսյումճյանը, ով Կ. Պոլսում, Եգիպտոսում ու Եթովպիայում առևտորվ գրադպելուց հետո Արգենտինայում մեծ հաջողությունների հասավ բիզնեսում, դարձավ Եկեղեցու հոգաբարձության անդամ, իսկ 1941թ. ՀԲԸ Բուենոս Այրեսի մասնաճյուղի նախագահ:

Նույն 1924թ. Դալեպից Բուենոս Այրես տեղափոխվեցին ուրֆայեցի Արշակ, Անտոն և Նազար Պասմաճյան Եղբայրները: 1928թ. նրանք բացեցին կոչկի նորոգման ու վաճառքի մի փոքրիկ կրպակ, իսկ 1937թ. կառուցեցին «Պասմաճյան Եղբայրներ» կոչկի արտադրության խոշոր գործարանը:

1927թ. Դալեպից ընտանյոք Բուենոս Այրես տեղափոխվեց 16-ամյա ուրֆայեցի Գևորգ Սարաֆյանը, որը բիզնեսում հասավ նախանձելի դիրքի, իսկ 1940-ական թթ. դարձավ Մշակութային հանձնաժողովի և ՀԲԸ վարչության նախագահ:

1930-ական թթ. դարձան արգենտինահայ գաղթօջախի կազմավորման և ամրապնդման շրջան: 1932թ. Բուենոս Այրեսում բացվեցին «Դայ Լեդրոն» և «Նոր սերունդ» թերթերը, 1933թ., ի հիշատակ համայնքի հնագույն ու մշտական բարեկամ Պողոս Նուբարի, Լինիերոսում հիմնվեց «Նուբարյան» մատուռ-վարժարանը: 1937թ. Արգենտինայում, Ուրուգվայում ու Բրազիլիայում արդեն հանգրվանել էր շուրջ 30 հազար հայ:

Այս տարիներին նոր մակարդակի բարձրացավ հայոց բիզնեսը: 1932թ. ընտանյոք Բուենոս Այրես տեղափոխվեց Գևորգ Չըննողյանը: Այս մարդը ծնվել էր Անգորայում: 12 տարեկանում ծնողները նրան ուղարկեցին Կարին, ուր երեք տարի ուսանեց Սկրտիչ Ասանասարյանի կտակով հիմնված «Սանասարյան» հոչակավոր վարժարանում, ապա վերադարձավ ծննդավայր և ծնողների հետ տեղափոխվեց Զմյուռնիա: Երիտասարդ տարիքից սկսեց գրադպել կտորեղենի ներմուծմամբ և առևտորվ: Բախտի բերմամբ Իզմիրի ջարդից երկու օր առաջ մեկնեց Յունաստան, այնտեղից անցավ Խոալիա և տասը տարի ապրեց Միլանում: Այստեղ նա ոչ միայն խորացրեց իր մասնագիտական գիտելիքները, այլև որդիներից երկուսին՝ Վահեին և Արմենին, բարձրագույն կրթության տվեց տեքստիլ արդյունաբերության գծով:

Բուենոս Այրեսում սկսեց գրադպել տեքստիլի ներմուծմամբ և կտորեղենի փոքրիկ գործարան հիմնեց Խեներալ Արթիկաս փողոցի վրա: 1935թ. հողատարածք գնեց Սան Մարտինում և Մարկո Պաքրճյանի, Արսեն Բերգամալիի ու Գրիգոր Գույումճյանի հետ հիմնեց «ATA Algodonera Textil, Argentina, Thinonian e Cia.S en C.» կտորեղենի արդիական մեծ գործարանը: Այս ծեռնարկությունը, որի տնօրեններն էին նրա որդիներ Վահեն և Արմենը, և որտեղ աշխատում էր 300 բանվոր, հայապատկան առաջին խոշոր արդյունաբերական գործարանն էր: Այստեղ արտադրվում էին տեքստիլի բոլոր տեսակները, որոնք հաջողությամբ մրցակցում էին Եվրոպականի հետ: 1941թ. Գ. Չըննողյանը հիմնեց ևս մեկ ծեռնարկություն՝ «ALSA Algodonera San Martin S.A.» անվամբ բամբակի մանարանը, որտեղ աշխատանք տրամադրեց 300 մարդու, իսկ տնօրեն նշանակեց Երրորդ որդուն՝ Տիրանին:

Արգենտինահայ գաղթավայրի տնտեսական վիճակն անհնարին է պատկերացնել ևս առանց մեկ մարդու՝ Յովհաննես Մերկերյանի: Նա ծնվել էր 1890թ. Սպարտայում: Նախնական կրթությունն ստացել էր ծննդավայրում, ապա սովորել Եդասի թուրքական վարժարանում: 1908թ. պաշտոնավարել էր «Օրիենթալ քարփեր մանուֆաքտուրա լիմիտեդ» ընկերությունում, իսկ 1910թ. եղել այդ ընկերության ներկայացուցիչը Պուճուգում և Ակալասինում: Զինադարձարից հետո անցել էր Դալեպ և գրադպել գորգի առևտորվ: Ապա տեղափոխվել էր Գոնիա, ուր երիտրութերի շարժման

ժամանակ բանտարկվել և իրաշքով փրկվել էր կախաղանից՝ աքսորվելով Խարբերդ: Զմյուռնիայի հայարափումից հետո կրկին անցել էր Հալեպ, ուր մնացել էր չորս տարի, իսկ 1923թ. մեկնել Շոռոդոս և միացել ընտանիքին: Այստեղ իտալական կառավարության աջակցությամբ հիմնել էր գորգի գործարան և մասնակցել իտալական, Եվրոպական ու միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների՝ ինն անգամ արժանանալով առաջին կարգի մրցանակի: Իտալիայի թագավորի պալատի գորգերի մեջ մասը, ինչպես նաև Վատիկանի մեջ դահլիճի գորգը պատրաստել է Շովի. Մերկերյանը: 1934թ. նա տեղափոխվում է Բուենոս Այրես և Վիժա Պատեստերի արվարձանում հիմնում գորգի գործարան (500 բանվորով), մեկ մասնաճյուղ էլ բացում է Կորդոբայում (150 բանվորով): Եկեղեցու հոգաբարձության անդամ Շովի. Մերկերյանի այս ծեռնարկություններն արտադրում էին շուրջ 10 հազար քառակուսի մետր գորգ:

1938թ. Բուենոս Այրեսի հայոց բիզնեսի կյանքում տեղի ունեցավ մի հիշարժան իրադարձություն՝ Օնսե թաղամասում կենտրոնացած հայ վաճառականները ստեղծեցին «Օնսեի հայ վաճառականների միությունը»: Կազմակերպության նպատակն էր համախմբել տնտեսական հնարավորությունները, ստեղծել արգենտինահայոց առևտրական պալատ, որին պիտի անդամակցին բոլոր հայ արդյունաբերողները, վաճառականները և անհատ արեստավորները: Նույն տարվա դեկտեմբերին ստեղծվեց նախաձեռնող խումբ (ատենապետ՝ Խոսրով Գալուստյան, ատենադպիր՝ Գևորգ Սարաֆյան, անդամներ՝ Լևոն Ավետիսյան, Շովեսի Խելալյան, Շովիաննես Թահմազյան, Գրիգոր Կառավարյան), որը պետք է նախապատրաստեր ծրագիր ու կանոնադրություն: 1939թ. կյացավ առաջին ընդիանուր ժողովը, ընտրվեց վարչություն, որն Արգենտինայի կառավարությանը պիտի վավերացման ներկայացներ «Հայ արդյունաբերական և առևտրական պալատի» հիմնադիր փաստաթղթերը: Սակայն ինչ-ինչ պատճառներով տնտեսական այդ կազմակերպությունը չկայացավ:

Կցանկանայինք առանձնակի անդրադառնալ նաև հայապատկան ամենախոշոր արդյունաբերական ծեռնարկությանը՝ Շովիաննես և Սարգիս Մանուկի Դիարբեքիրյան եղբայրների «Դանութիո» տեքստիլի գործարանին: Խնդիրն այն է, որ աշխարհասփյուռ

հայոց տնտեսական պատմությունը ներկայացնելիս մենք առաջնորդվում ենք բիզնեսի արդյունքը ազգապահպանության ի սպաս դնելու հոգեկան մղումները, մտածելակերպային շարժականությունները վեր հանելու և կարևորելու սկզբունքով: Բիզնեսի արդյունքը՝ կապիտալը, ի սկզբանե, անկասկած, անձնապատկան է, բայց հենց որ անհատն իր արդյունքից բաժին է հանում ազգին՝ Եկեղեցուն, դպրոցին, մշակույթին, մի խոսքով՝ հայապահպանությանը, այդ պահից սկսած կապիտալը դադարում է գուտ անձնական լինելուց, և հենց դա է, որ մենք անվանում ենք ազգային: Սակայն միամտություն կլիներ, անշուշտ, կարծել, թե մեր կապիտալի բազմադարյա պատմության մեջ չեն եղել տնտեսության ոլորտում վիթխարի հաջողությունների հասած հայեր, որոնք, սակայն, ազգին ոչինչ չեն տվել, հետևաբար և իրենց մասին ոչ մի բարի հուշ չեն թողել: Ենիշտ այդպիսին էր Դիարբեքիրյան եղբայրների կապիտալը: Զմյուռնիայի աղետից հետո նրանք ընտանյոց տեղափոխվում են Միլան: Դոր մահից հետո եղբայրներն անցնում են Ռումինիա և 1928թ. Բուլսարեստում հիմնում կտորեղենի վիթխարի գործարան՝ 400 մեքենայով, 1400 բանվորով, 150 պաշտոնյայով, և երկրի տարբեր քաղաքներում բացում 11 մասնաճյուղ: Տեղափոխվելով Արգենտինա՝ Բուենոս Այրեսի Ռամս Մեխիա արվարձանում հիմնում են «Դանութիո» կտորեղենի գործարանը, որտեղ 1940-ական թթ. աշխատում էր 2000 մարդ: Ապա Բեռնարում գնում են մանարան՝ բրդի դերձան պատրաստելու համար, որտեղ աշխատում էր 500 հոգի:

Բայց ամենատիրոջի օավեշտն այն էր, որ այդպիսի անուն-ազգանուն ունեցող եղբայրները ոչ մի մասնակցություն չունեցան համայնքի գործերին...

Բուենոս Այրեսից բացի Արգենտինայում կար ևս մի գաղթօջախ, ուր հայերը լիարժեք համայնքային կյանք կազմակերպեցին: Դա Կորդոբա քաղաքն էր: Այստեղ հաստատված առաջին հայերը եղել են Շակոր Թյուսուլյանը, Մեծատուրյանը, Արիստակես Ժամկոյյանը, Շակոր Մարգարյանը, Խաչատուր և Ավետիս Սիմոնյան եղբայրները, որոնք բնակության վայր ընտրեցին Բարիո Ինգլես արվարձանը: Առաջին աշխարհանարտի ժամանակ այստեղ ժողովվեցին շուրջ 100 հայեր, որոնցից 67-ի մասնակցությամբ 1918թ. ստեղծվեց ՀԲԸՄ մասնաճյուղը: Կիլիկիայի հայար-

փումից և Զնյուռնիայի աղետից հետո հայության թիվն այստեղ կրկնապատկվեց: Պետք է ասել, որ սկզբնական շրջանում նրանք համախմբված էին միակ ազգային կազմակերպության՝ ՀԲԸՄ մասնաճյուղի շուրջ, սակայն 1924թ. հունվարի 25-ին ստեղծվեց Յայ գաղութային կենտրոնը, որի հիմնադիր անդամներն էին Շովիաննես Գրաճյանը, Գրիգոր Երամյանը, Յակոբ Մարգարյանը, Սեդրակ Շգրտմյանը, Սամուել Վարդանյանը, Ղուկաս Գալուստյանը և Սարգիս Ավագյանը: Կառավարությանը ներկայացվեց կանոնադրություն, որը վավերացվեց 1925թ. օգոստոսի 3-ին: Միությունը Բարի Ինգլեսում գնեց 1200 քառ. մետր հողատարածք, ուր կառուցվեցին եկեղեցին (հիմնարկեքը կատարվել է 1926թ. փետրվարի 21-ին) և դպրոցը: 1929թ. Բարի Ինգլեսում բացվեց առաջին հայկական վարժարանը՝ 40 աշակերտով, իսկ 1932թ. Գաղութային միության ատենապետ Յակոբ Օհանյանի ջանքերով եկեղեցու բակում կառուցվեց դպրոցի նոր շենքը (1934թ. այստեղ ուսանում էր 130 աշակերտ):

Զնյուռնացի Յ. Օհանյանը կրթությունն ստացել էր ծննդավայրի Մեսրոպյան և Պոյաճյան վարժարաններում, 1922թ. գաղթել էր Յունաստան և զբաղվել վաճառականությամբ: 1926թ. անցել էր Արգենտինա, իսկ հաջորդ տարի հաստատվել Կորդոբայում՝ ստանձնելով «Պարբջան Եղբայրներ» ֆիրմայի Կորդոբայի մասնաճյուղի վարիչի պաշտոնը: Նա նաև ՀԲԸՄ մասնաճյուղի ատենադպիրն էր և հոգում էր հյուծախտավորների «Ազնավորյան» ապաքինարանի տնտեսական ապահովումը:

1940-ական թթ. Կորդոբայի գրեթե բոլոր 100 հայերն ապրում էին Բարի Ինգլեսում, ուր ճնշող մեծամասնությունը սեփական տուն ուներ: Ոմանք քաղաքապետարանի պաշտոնյաներ էին կամ աշխատում էին երկարուղային արհեստանոցներում: Ոմանք էլ ծխախոտի կրպակներ ունեին կամ ապրուստ էին վաստակում վիճակախաղի տոնսեր վաճառելով: Մեծ թիվ էին կազմում արհեստավորները, սակայն քիչ չէին նաև կտորեղենի վաճառականները և բիզնեսի այլ տեսակներով զբաղվողները: Յայերին էին պատկանում գորգի և վերնաշապկի մեկական գործարաններ: Իսկ առհասարակ տնտեսական վիճակը բավականին գոհացուցիչ էր:

Ուշագրավ է 1943թ. Գաղութային միության կազմը՝ ատենապետ Աբրահամ Փեթենյան, փոխատենապետ Վահե Մելիքյան,

ատենադպիր Ասատուր Ապրազյան, փոխատենադպիր Կարապետ Ազատյան, գանձապահ Շովիաննես Մանուկյան, անդամներ Ավետիս ճյուպելյան և ... Թորոս Էրնելյան:

Բնութագրելով 1940-ական թթ. արգենտինահայ գաղթօջախը՝ եզրափակենք, որ հարավամերիկյան այս հյուրընկալ երկրում բնակվում էր շուրջ 20.000 հայ, որոնց ճնշող մեծամասնությունն ընդգրկված էր բիզնեսի և արհեստագործության ոլորտներում: Իսկ արդյունաբերության բնագավառում նրանք նախընտրել էին տեքստիլի, կոշկի և գորգի արտադրությունները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՒ ԽՈՍՔ	3
ԶԻՆԱՍՍԱՆ	5
ԵԹՈՎՊԻԱ	13
ՖՐԱՆՍԻԱ	26
ԲԵԼԳԻԱ	45
ԱՆԳԼԻԱ	52
ԱՄՆ	68
ՀՈԼԱՆԴԻԱ	87
ԻՆԴՈՆԵԶԻԱ	95
ԾՎԵՇԻԱ	111
ԱՐԳԵՆՏԻՆԱ	119